ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունից բխող 2020-2022 թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում պաշտպանական ոլորտի միջոցառումների մշտադիտարկման արդյունքները

ԶԵԿՈՒՅՑ

peace DIALOGUE

EUROPEAN ENDOWMENT FOR DEMOCRACY

Զեկույցը հրապարակվել է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության «Պաշտպանական ոլորտում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության մշակման և իրականացման գործում քաղաքացիական հասարակության մասնակցության խթանում» նախագծի շրջանակներում: Նախագիծն իրականացվում է «Ժողովրդավարության աջակցության եվրոպական հիմնադրամի» (EED) կողմից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում:

ՎԱՆԱՁՈՐ 2023

© 2023 | Զեկույցը հրապարակվել է «Խաղաղության երկխոսություն» հկ-ի կողմից:

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Վանաձոր, 2002, Մյասնիկյան 12, Բն. 40

Հեռ.՝ +374 (322) 21340;
Բջջ.՝ +374 (55) 820 632; (93) 820 632

Էլ. Փոստ՝ ekhachatryan@peacedialogue.am; mailbox@peacedialogue.am

URL: https://www.peacedialogue.am; https://safesoldiers.am/

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունից բխող 2020-2022 թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում պաշտպանական ոլորտի միջոցառումների մշտադիտարկման արդյունքները

ԶԵԿՈՒՅՑ

Զեկույցը կազմեց Անի Հարությունյանը

Խմբագիր՝ Էդգար Խաչատրյան

Ծրագրի փորձագետներ՝

Արմեն Գրիգորյան

Արթուր Սուքիասյան

Զեկույցը հրապարակվել է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության «Պաշտպանական ոլորտում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության մշակման և իրականացման գործում քաղաքացիական հասարակության մասնակցության խթանում» նախագծի շրջանակներում: Նախագիծն իրականացվում է «Ժողովրդավարության աջակցության եվրոպական հիմնադրամի» (EED) կողմից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում:

ՎԱՆԱՁՈՐ 2023

Բովանդակություն

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՂ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 4
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 6
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 7
ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2019Թ. ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ և 2020 2022ԹԹ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ և ԿԱՊԸ ԱՅԼ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ 9
Փաստաթղթի վերանայում 11
«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի ներգրավվածությունը 11
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. 13
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ 13
ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ 20
Գործողություն 1 26
Գործողություն 2 31
Գործողություն 3 39
Գործողություն 4 41
ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ 43
ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԱՐԳԵԼՔ 45
Գործողություն 12 53
Գործողություն 14 54
Գործողություն 15 57
Գործողություն 18 58
Գործողություն 19 63
Գործողություն 26 68
ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԱՐԳԵԼՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ 72
ԳՈՐԾԻ ԱՐԴԱՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 75
Գործողություն 27 76
Գործողություն 28 76
Գործողություն 34 77
ԳՈՐԾԻ ԱՐԴԱՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ 80
ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔ 82
Գործողություն 48 85
Գործողություն 48.1 92
ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ, ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼԻՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ 98

Մշտադիտարկող խմբի կազմը

Ժաննա Արշակյան՝ Լոռի
Գեղամ Բարսեղյան՝ Երևան
Լենա Բարսեղյան՝ Լոռի
Գարիկ Բելլուլյան՝ Կոտայք
Ռուբեն Գրիգորյան՝ Վայոց Ձոր
Սվետլանա Գրիգորյան՝ Սյունիք
Էդուարդ Դանիելյան՝ Երևան
Զարինե Դարբինյան՝ Տավուշ
Մարգարիտա Դիլբարյան՝ Լոռի
Վիկտորիա Եղոյան՝ Շիրակ
Արմինե Զաքարյան՝ Լոռի
Լուիզա Զաքեյան՝ Շիրակ
Աննա Խաչատրյան՝ Սյունիք
Էլինա Խաչատրյան՝ Լոռի
Նարեկ Խաչատրյան՝ Արագածոտն
Ալբերտ Ծուղունյան՝ Լոռի
Աննա Մարտիրոսյան՝ Երևան
Ռուբեն Մարտիրոսյան՝ Երևան
Պայքար Չախոյան՝ Լոռի
Հռիփսիմե Պետրոսյան՝ Շիրակ
Շուշանիկ Սահակյան՝ Տավուշ
Անի Սարգսյան՝ Սյունիք
Գեղամ Վարդանյան՝ Երևան
Հրաչ Քոչարյան՝ Վայոց Ձոր
Գևորգ Քոթանջյան՝ Լոռի
Կատյա Բաբայան՝ Սյունիք
Շահանե Խաչատրյան՝ Երևան
Արբակ Սարգսյան՝ Լոռի

Հապավումներ

ԳԾ	Գործողությունների ծրագիր
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
Զ ու ԶՀԾ	Զորամասեր ու զորակոչային և զորահավաքային համալրման ծառայություն
ԶՈՒ	Զինված ուժեր
ԶՈՒ ԲՀԱ	Զինված ուժերի բարոյահոգեբանական ապահովման վարչություն
ԶՈՒՊ	Զինվորական ունեցվածքի պահպանություն
ՔՀ	Քրեական հետախուզություն
ԶՔԳՎ	Զինվորական քննչական գլխավոր վարչություն
ԽԵ	«Խաղաղության երկխոսություն» ՀԿ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՇՖ	Հրամանատարաշտաբային ֆակուլտետ
ՀՔԾ	Հատուկ քննչական ծառայություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԻԲԿ	Մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոն
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ՄԻԵԿ	Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպանություն
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
ՊՆ	Պաշտպանության նախարարություն
ՌՈ	Ռազմական ոստիկանություն
ՍՈԲԿ	Սպաների որակավորման բարձրացման կենտրոն

Ներածություն

Վերջին տարիներին միջազգային և տեղական հեղինակավոր կառույցների զեկույցներում հաճախ են հիշատակվում ՀՀ զինված ուժերում մահվան, խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի, դրանց կապակցությամբ տարվող քննության արդյունավետության, արդար դատաքննության իրավունքի իրացման պայմանների և դատական համակարգի անկախության ու անկողմնակալության շուրջ խնդիրները: Այս լրջագույն խնդիրների առկայության մասին են վկայում, օրինակ, ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոմիտեի, ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեի, ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարի կողմից պարբերաբար բարձրաձայնվող հարցադրումները, արված առաջարկությունները, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Հայաստանի դեմ կայացրած մի շարք վճիռներն ու դրանց կատարողականների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի որոշումները:

Այս համատեքստում Հայաստանի Հանրապետության կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի N 1978–L որոշմամբ ընդունվեց Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագիրը: 2020թ. COVID-19 համավարակի տարածումը,[1] Ադրբեջանի սանձազերծած 2020թ. սեպտեմբերի 27-ի և 2022թ. սեպտեմբերի 13-ի ռազմական գործողությունները, ինչպես նաև դրանց հետևանքով ստեղծված ներպետական և միջազգային քաղաքական ու անվտանգային մարտահրավերները լուրջ փորձության ենթարկեցին հայ ժողովրդին, հայկական պետականությանը՝ այդ թվում, պաշտպանական ոլորտում մարդու իրավունքների ապահովմանը:

«Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպությունը իրականացրել է ՄԻՊ ռազմավարության և 2020-2022թթ. ԳԾ-ի **պաշտպանական ոլորտին** վերաբերող միջոցառումների կատարման մշտադիտարկումը:

Սույն զեկույցը ամփոփել և վերլուծել է մշտադիտարկման արդյունքները՝ հաշվի առնելով միջազգային կառույցների զեկույցներում, ակտերում և վճիռներում վերհանված խնդիրներն ու առաջարկությունները, ինչպես նաև 2020-2022թ. ընթացքում ծառացած հավելյալ մարտահրավերները:

Սույն զեկույցը հիմնված է 2020թ. հունվարի 1-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում պաշտպանական ոլորտին առնչվող գործողությունների կատարման ընթացքի դիտարկման արդյունքների վրա:

[1] ՁՈՒ-ում COVID-19-ին վերաբերող միջոցառումների մշտադիտարկման արդյունքները տեղ են գտել ԽԵ ՀԿ-ի 2021թ. մշտադիտարկման զեկույցում. «Խաղաղության երկխոսություն» ՀԿ, Ա. Հարությունյան, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունից բխող 2020-2022 թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում պաշտպանական ոլորտի միջոցառումների մշտադիտարկման արդյունքները, ՁԵԿՈՒՅՑ 2020թ. հունվարի 1-2021թ. մայիսի 31, Վանաձոր 2021թ., էջ 86, https://peacedialogue.am/2021/08/06/hrap_defense_arm/:

Մեթոդաբանություն

ՄԻՊ ռազմավարությունը և 2020-2022թթ. ԳԾ-ի մշտադիտարկումը կատարվել է բազմաշերտ մեթոդաբանությամբ:

Հաշվի առնելով, որ ռազմավարությունը մշակվել է Հայաստանի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման հրամայականից ելնելով՝[2] վերլուծվել են հատկապես պաշտպանական ոլորտին վերաբերող՝ ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոմիտեի, ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեի, ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարի կողմից արված առաջարկությունները, Հայաստանի դեմ զինվորական գործերով ՄԻԵԴ կայացրած վճիռները և այդ վճիռների կատարման ԵԽ նախարարների խորհրդի ընդունած ակտերը:

Համակարգային վերլուծության են ենթարկվել ռազմավարությունը և գործողության ծրագիրը, վերհանվել են ռազմավարության բացթողումները, ռազմավարության իրականացմանը խոչընդոտող՝ ԳԾ-ի բացթողումները և թերությունները: Վերլուծվել են ԳԾ-ում ներառված առանձին իրավունքները և այդ իրավունքների շրջանակներում մշակված առանձին գործողությունները:

Առանձին գործողությունների կատարման ընթացքի մշտադիտարկման նպատակով «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն հարցումներ է ուղարկել պաշտպանական ոլորտում այդ իրավունքների պաշտպանության համար լիազոր և ԳԾ-ով որպես պատասխանատու և (կամ) համակատարող հանդիսացող պետական մարմիններին: Ստացված պատասխան գրությունների հիման վրա իրականացվել է վերլուծություն:

Գործողությունների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկությունները ստացվել են նաև բաց աղբյուրներից, այդ թվում՝ ՄԻՊ ռազմավարությունից և ԳԾ-ին նվիրված e-rights.am կայքից, 2020թ. կիսամյակային և տարեկան հաշվետվություններից, Արդարադատության նախարարության, Արդարադատության ակադեմիայի, Պաշտպանության նախարարության, մարդու իրավուքների պաշտպանի, Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակի,[3] Եվրոպայի խորհրդի և ԵԽ երևանյան գրասենյակի, Երևանում Եվրոպական միության պատվիրակության, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, Միջազգային զարգացման ԱՄՆ գործակալության պաշտոնական կայքերից: Առանձին մշտադիտարկվել են նաև «Զինուժ» հաղորդաշարի թողարկումները:

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի նախաձեռնությամբ ստեղծվել է Երևան քաղաքում և մարզերում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներից բաղկացած մշտադիտարկող խումբ: Նախապես մշակված մեթոդաբանության հիման վրա՝ մշտադիտարկող խումբը զորակոչիների շրջանում իրականացրել է ստանդարտացված

[2] Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարություն, ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշման հավելված 1, էջ 5-6:
[3] Սույն զեկույցի հրապարակման պահին ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչի գրեանյակի անվանումը փոխված է եղել Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի, հետևաբար, զեկույցում օգտագործվում է նոր անվանումը:

հարցազրույցներ՝ պարզելու համար, թե որքանով են զորակոչիկները տեղյակ ՄԻՊ ռազմավարությունից բխող գործողությունների շրջանակով պայմանավորված իրավունքներից և այդ իրավունքների իրացման ինչ փորձ ունեն: 2020-2022թթ. ընթացքում հարցազրույցներ են անցկացվել ընդհանուր թվով 1423 զորակոչիկի շրջանում.

2020թ. ամառային զորակոչ՝ 196 զորակոչիկ;

2020թ. ձմեռային զորակոչ. հարցում չի արվել;

2021թ. ձմեռային զորակոչ՝ 527 զորակոչիկ;

2021թ. ամառային զորկոչ. հարցում չի արվել:

2022թ. ամառային զորակոչ՝ 375 զորակոչիկ;

2022թ. ձմեռային զորակոչ՝ 325 զորակոչիկ:

Մշտադիտարկումն իրականացվել է Երևան քաղաքում և բոլոր մարզերում: Հարցվողների ընտրությունն իրականացվել է ձնակույտի մեթոդով, զորակոչիկների կուտակման հիմնական վայրերում՝ զինկոմիսարիատներում, տարածքային ստորաբաժանումներում և բժշկական զննությունների անցկացման հաստատություններում:

Բացի այդ՝ 2022թ. մայիս-հուլիս ամիսներին մշտադիտարկող խումբը հարցազրույցներ է իրականացրել պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և զորացրված քաղաքացիների շրջանում: Հարցազրույցներն իրականացվել են նախապես մշակված մեթոդաբանության հիման վրա կազմված հարցաշարի կիրառմամբ: Հարցազրույցների միջին տևողությունը եղել է մոտավորապես մեկ ժամ: Հարցումներն իրականացվել են ՀՀ Լոռու, Տավուշի, Շիրակի, Սյունիքի, Կոտայքի, Արարատի մարզերում և Երևան քաղաքում, թվով 112 քաղաքացու մասնակցությամբ: Հարցմանը մասնակցել են 2014-2022 թվականն ընկած ժամանակահատվածում զինվորական ծառայություն անցած քաղաքացիները:[4]

[4] «Խաղաղության երկխոսություն» ՀԿ, ՀՀ Զինված Ուժերում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների վերհանման նպատակով իրականացված հարցազրույցների վերլուծություն, Վանաձոր, հոկտեմբեր 2022թ., https://peacedialogue.am/2022/10/07/hr_survey_arm/:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության 2019թ. ազգային ռազմավարությունը և 2020 2022թթ. գործողությունների ծրագիրը և կապը այլ ռազմավարությունների հետ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության 2019թ. ազգային ռազմավարությունն ընդունվել է 2018թ. ձևավորված նոր կառավարության կողմից, որը վերընտրվեց 2020թ. սեպտեմբերի 27-ի պատերազմից հետո՝ 2021թ. հունիսի արտահերթ ընտրություններում: 2020-2022թթ. ընթացքում ընդունվել և (կամ) ուժի մեջ են եղել պաշտպանական ոլորտի հետ կապված հետևյալ ռազմավարությունները.

- Հակակոռուպցիոն ռազմավարություն և դրա իրականացման 2019-2022թթ. միջոցառումների ծրագիր,[5]
- Հայաստանի վերափոխման 2020-2050թթ. ռազմավարություն,[6]
- ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր,[7]
- ՀՀ 2007թ. ազգային անվտանգության ռազմավարություն,[8]
- ՀՀ 2020թ. ազգային անվտանգության ռազմավարություն,[9]
- Դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 ռազմավարություն և գործողությունների ծրագրեր,[10]
- Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026թթ. ռազմավարություն և ԳԾ:[11]

---

[5] ՀՀ կառավարություն, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարություն, Հավելված N 1 ՀՀ կառավարության 2019թ. հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշման, 3 հոկտեմբերի 2019թ., https://www.moj.am/storage/uploads/ՀՀ%20հակակոռուպցիոն%20ռազմավարություն.%20հավելված%20N%201%20ՀՀ%20կառավարության%202019%20թվականի%20հոկտեմբերի%203-ի%20N%201332-Ն%20որոշում.pdf; ՀՀ կառավարություն, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022թթ. միջոցառումների ծրագիր, Հավելված N 2 ՀՀ կառավարության 2019թ. հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշման, 3 հոկտեմբերի 2019թ., https://www.moj.am/storage/uploads/.ՀԱՅԱՍՏԱՆԻ%20ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ%20ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ%20ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ%20ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ%202019-2022%20ԹՎԱԿԱՆՆԵՐԻ%20ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ%20tsragir.pdf:

[6] ՀՀ վարչապետ, 2020թ. Հայաստանի վերափոխման 2020-2050թթ. ռազմավարություն, 21 սեպտեմբերի 2020թ., https://www.primeminister.am/u_files/file/Haytararutyunner/Armenia2050_7_5.pdf.

[7] ՀՀ կառավարություն, ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր, Հավելված ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363 - Ա որոշման, 18 նոյեմբերի 2021թ., https://www.gov.am/files/docs/4586.pdf:

[8] ՀՀ նախագահ, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն, 7 փետրվարի 2007թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31189:

[9] ՀՀ վարչապետ, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն, հուլիս 2020թ., https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf:

[10] ՀՀ կառավարություն, ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարություն, Հավելված N 1 ՀՀ կառավարության 10 հոկտեմբերի 2019թ. N 1441 - L որոշման, 10 հոկտեմբերի 2019թ., https://www.moj.am/storage/uploads/k.voroshum.datairavakan.pdf; ՀՀ կառավարություն, ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարությունից բխող 2019-2020թթ. ԳԾ, Հավելված N 2 ՀՀ կառավարության 10 հոկտեմբերի 2019թ. N 1441 - L որոշման, https://www.moj.am/storage/uploads/mijocarumner_2019-2020.pdf; ՀՀ կառավարություն, ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարությունից բխող 2021-2023թթ. ԳԾ, Հավելված N 3 ՀՀ կառավարության 10 հոկտեմբերի 2019թ. N 1441 - L որոշման, https://www.moj.am/storage/uploads/Mijocarumner_2021-2023.pdf:

[11] ՀՀ կառավարություն, ՀՀ Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026թթ. ռազմավարություն, Հավելված N1 ՀՀ կառավարության 2022թ. հուլիսի 21-ի N 1133 - L որոշման, 21 հուլիսի 2022թ., https://www.moj.am/storage/uploads/2022%20razmavarutyun.pdf; ՀՀ Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026թթ. ռազմավարությունից բխող ԳԾ, Հավելված N 2 ՀՀ կառավարության 2022թ. հուլիսի 21-ի N 1133 - L որոշման, 21 հուլիսի 2022թ., https://www.moj.am/storage/uploads/tsragir2022.pdf:

- ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձեվի դրույթների իրականացման գործողությունների 2019-2021թթ. և 2022-2024թթ. ազգային ծրագրեր:[12]

Այսպես, 2019թ. դեկտեմբերի 26-ին ընդունվեց Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և 2020-2022թթ. գործողությունների ծրագիրը:[13] ՄԻՊ ռազմավարությամբ կառավարությունը նպատակ էր դրել ստեղծել իրավունքակենտրոն կառավարման համակարգ:[14] Նոր ձևավորված կառավարությունը կարևորագույն առաջնահերթություն էր հռչակել անձանց խախտված իրավունքների վերականգնումը, ինչպես նաև մարդու իրավունքների երաշխավորման և պաշտպանության ինստիտուցիոնալ և համակարգված քաղաքականության մշակումն ու իրականացումը:[15]

2019թ. ՄԻՊ ռազմավարությունն առանձնացրել է **երեք ռազմավարական գերակայություններ**.

- քաղաքացիական և քաղաքական իրավունքների պաշտպանություն,
- սոցիալ-տնտեսական իրավունքների պաշտպանություն,
- հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովում:

Սահմանվել է, որ ռազմավարության առաջնահերթությունները պայմանավորված են մարդու իրավունքների ոլորտում **Հայաստանի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման հրամայականով**:[16] Ռազմավարության իրագործմամբ կառավարությունն ակնկալում է ապահովել միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների կողմից արձակված ակտերի, հանձնարարականների և առաջարկությունների կատարումը, ինչպես նաև շտկել պարբերական և արտահերթ զեկույցներում բարձրացված խնդիրները:[17]

ՄԻՊ ռազմավարությունը մատնանշում է **միջազգային կառույցների զեկույցներում բարձրացված** մարդու իրավունքներին առնչվող օրենսդրական և գործնական կիրառման խնդիրները, որոնց շարքում առանձնացվել են, օրինակ, զինված ուժերում մահվան, վատ վերաբերմունքի

[12] ՀՀ կառավարություն, ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձեվի դրույթների իրականացման գործողությունների 2019-2021 թվականների ազգային ծրագիրը եվ ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին, 28 Փետրվարի 2019, 197-L որոշման հավելված, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2019/03/197_1klսoռ.pdf; ՀՀ կառավարություն, ՄԱԿ Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն եվ անվտանգություն» N 1325 բանաձեվի դրույթների իրականացման 2022-2024թթ. գործողությունների ազգային երկրորդ ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին, 2 հունիսի 2022թ. N 803-L որոշման հավելված, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=163530:

[13] ՀՀ կառավարություն, Մարդու իրավունքների պաշտպանության 2019թ. ազգային ռազմավարություն, Հավելված N 1 ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի N 1978-L որոշման, 26 դեկտեմբերի 2019թ., https://www.moj.am/storage/uploads/1Razmavarutyun.MIP.pdf; ՀՀ կառավարություն, Մարդու իրավունքների պաշտպանության 2019թ. ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագիր, Հավելված N 2 ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի N 1978-L որոշման, 26 դեկտեմբերի 2019թ., https://www.moj.am/storage/uploads/mip2022.pdf:

[14] ՄԻՊ ռազմավարություն 2019թ., էջ 9, https://www.moj.am/storage/uploads/1Razmavarutyun.MIP.pdf:

[15] ՄԻՊ ռազմավարություն 2019թ., էջ 9, https://www.moj.am/storage/uploads/1Razmavarutyun.MIP.pdf:

[16] Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարություն, ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի N 1978-L որոշման հավելված 1, էջ 5-6:

[17] ՄԻՊ ռազմավարություն 2019թ., էջ 5-6, https://www.moj.am/storage/uploads/1Razmavarutyun.MIP.pdf:

դեպքերը և դրանց կապակցությամբ հարուցված քրեական գործերի ոչ արդյունավետ քննությունը, արդար դատաքննության իրավունքի իրացման ոչ բավարար պայմանները, իրավահավասարության մթնոլորտի ու գործելակերպի ապահովման, խտրականության դեմ պայքարի ուղղությամբ անբավարար քայլերը, մարդու իրավունքների խախտումների նկատմամբ պետության անհամարժեք արձագանքը:[18]

Փաստաթուղթն առանձնացրել է ՄԻՊ ռազմավարության և գործողությունների ծրագրի կատարման ընթացքում **չորս հնարավոր ռիսկեր**. ֆինանսական միջոցների բացակայություն կամ ոչ բավարար տրամադրում, լրացուցիչ/չպլանավորված աշխատանքներ, կազմակերպչական մարտահրավերներ, պետական մարմինների միջև ոչ բավարար համագործակցություն:

Փաստաթղթի վերանայում

2020թ. սկզբից ամբողջ աշխարհում բռնկված COVID-19 համաճարակը, իսկ ավելի ուշ՝ Ադրբեջանի կողմից սանձազերծած պատերազմական գործողություններն ի հայտ բերեցին այն փաստը, որ ռազմավարական փաստաղթի մշակման ընթացքում հաշվի չեն առնվել ո'չ պատերազմի վերսկսման կամ, անգամ, սահմանային լարվածության ավելացման վտանգները, ո'չ համաճարակով պայմանավորված սահմանափակումներն ու ճգնաժամը:

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն ՀՀ ՄԻՊ ռազմավարությունից բխող 2020թ. գործողությունների տարեկան մշտադիտարկման արդյունքում առաջարկել էր ՀՀ կառավարությանը վերանայել ՄԻՊ ռազմավարությունը և փոփոխություններ մտցնել 2021-2022թթ. գործողություններում՝ հաշվի առնելով հատկապես 2020թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ի ռազմական գործողությունները և դրանց հետևանքները պաշտպանական ոլորտում մարդու իրավունքների ապահովման հարցում:

2021թ. սկզբին Արդարադատության նախարարությունը նախաձեռնել էր ՄԻՊ ԳԾ փոփոխման գործընթաց: Փաստաթղթի փոփոխություններով հիմնականում հետաձգվել են մի շարք գործողությունների կատարման ժամկետները: Միևնույն ժամանակ՝ ավելացվել է առանձին գործողություն՝ նախատեսելով 2021-2022թթ. պարբերաբար ապահովել արցախյան պատերազմի հետևանքով տեղահանված անձանց, հաշմանդամություն ստացած անձանց, զոհված, անհետ կորած և գերության մեջ գտնվող անձանց և նրանց ընտանիքների իրավունքների արդյունավետ պաշտպանության ծրագրերի իրականացում:[19]

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի ներգրավվածությունը

[18] ՄԻՊ ռազմավարություն 2019թ., էջ 10-11, https://www.moj.am/storage/uploads/1Razmavarutyun.MIP.pdf:
[19] ՄԻՊ 2019թ. ռազմավարության 2020-2022թթ. ԳԾ փոփոխություններ և լրացումներ, Նախագիծ, 48.1 կետ, էջ 5, https://www.e-draft.am/projects/3178/about:

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն հավատացած է, որ սեկտորալ մշտադիտարկումներն առավել արդյունավետ են և հնարավորություն են տալիս իրականացնել ոլորտի թիրախային և խորքային ուսումնասիրություն անգամ սուղ միջոցներով: Այդ պատճառով, 2015թ.-ից Կազմակերպությունն իրականացրել է մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2014-2016թթ. և 2017-2019թթ. գործողությունների ծրագրերի շրջանակներում, հատկապես՝ զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության գործողությունների մշտադիտարկում:

2019թ. սկզբին կազմակերպությունը ներգրավվել է «Անվտանգության ոլորտի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության ազգային հարթակի» աշխատանքներում: ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի խորհրդատվական մարմին հանդիսացող այս հարթակի նպատակն է խթանել Հայաստանում անվտանգության ոլորտի ժողովրդավարական-քաղաքացիական վերահսկողությանը: Այն միավորում է անվտանգության ոլորտում գործող պետական կառույցների, արտաքին վերահսկողության մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներին:

2020թ. սկզբին «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն նախաձեռնել է **«Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում քաղաքացիական հասարակության դերի բարձրացումը»** ծրագիրը: Այս նախաձեռնությամբ կազմակերպությունը ձգտում է նպաստել ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանվածությանը՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար արդյունավետ մեխանիզմ ձևավորելով մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում պաշտպանական ոլորտում իրականացվող գործողությունների մշտադիտարկման համար:

2020թ. «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն ընդգրկվել է նաև 2020-2022թթ. ՄԻՊ ԳԾ-ի համակարգումը և մշտադիտարկումն իրականացնող համակարգող խորհրդի կազմում:

Մշտադիտարկման արդյունքները. Ընդհանուր դիտարկումներ

Հայաստանի դեմ զինվորական գործերով ՄԻԵԴ վճիռների կատարում

Դրական է այն, որ ՄԻՊ 2019թ. ռազմավարությունը և 2020-2022թթ. ԳԾ հրամայական են համարել մարդու իրավունքների ոլորտում Հայաստանի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը: Միջազգային կառույցների կողմից՝ այդ թվում, ՄԻԵԴ վճիռներում վերհանվել են պաշտպանական ոլորտում առկա մարդու իրավունքների և դրանց առնչվող գործերի արդյունավետ քննության մի շարք խնդիրներ: Բացի այդ՝ Զինված Ուժերը մշտապես գտնվում են հասարակության ուշադրության կենտրոնում, և Հայաստանը գտնվում է Ադրբեջանի կողմից ուժի կիրառման սպառնալիքի տակ:

Բացթողումն այն է, որ ԳԾ-ն չի նախատեսել գործողություններ, որոնք ուղղված կլինեին հատկապես զինվորական գործերով Հայաստանի դեմ ՄԻԵԴ վճիռներում վերհանված խնդիրների լուծմանը: Այդ խնդիրները ինչպես ԶՈՒ հատուկ, այնպես էլ ընդհանուր քրեական արդարադատության ոլորտի համակարգային խնդիրներ են: Այս խնդիրներին անհրաժեշտ է անդրադառնալ ՄԻՊ, դատաիրավական բարեփոխումների և հակակոռուպցիոն, ազգային անվտանգության և այլ համապատասխան ռազմավարությունների և ԳԾ-ների համակարգային մշակմամբ:

Ելակետային տվյալների բացակայություն

Չնայած որ ԳԾ-ով նախատեսվել է նվազեցնել իրավունքների խախտումները, ելակետային տվյալներ չեն տրամադրվել, որպեսզի գնահատվի ռազմավարության ու ԳԾ-ի արդյունքը:

Ելակետային տվյալներ շատ հարցերում նույնիսկ հասանելի չեն համապարփակ կերպով: Հետևաբար, հաջորդ ռազմավարությունում և ԳԾ-ում անհրաժեշտ է ինչպես տրամադրել առկա ելակետային տվյալները, այնպես էլ մշակել ելակետային տվյալների սահմանման մեխանիզմ, որը կօգտագործվի հետագա ռազմավարություններում և քաղաքականության մշակման գործընթացում ևս: Այն հնարավոր է, օրինակ, կատարել Վիճակագրական Կոմիտեի հետ համատեղ:

Ազդեցության գնահատման չափանիշներ

Մի շարք գործողություններ որպես ազդեցության գնահատման չափանիշ են նշել մարդու իրավունքների խախտումների թվի նվազումը: Սակայն նման չափանիշը հաճախ խնդրահարույց է: Որպես մեկ օրինակ՝ ԳԾ ներառել է զորակոչիկների, զինծառայողների իրազեկվածությունը բարձրացնելու միջոցառումներ, ինչպիսիք են պաստառների, իրազեկման նյութերի և տեսանյութերի տարածումը, որոնց իրականացումը, ըստ ԳԾ-ի, հանգեցնելու է ԶՈՒ-ում մահվան դեպքերի նվազմանը: Հարց է առաջանում՝ եթե ԶՈՒ-ում մահվան դեպքերը այս գործողության կատարումից հետո չեն նվազել, ապա արդյո՞ք դա նշանակում է, որ պաստառների տարածումը և այլ իրազեկման

միջոցառումները անարդյունավետ են եղել: Գտնում ենք, որ չի կարելի միանշանակ ասել, որ այդ իրազեկման միջոցառումները անարդյունավետ չեն, և որ չպետք է նման միջոցառումներ իրականացնել: Սակայն ԶՈՒ մահերի նվազեցումը կախված չէ միմիայն այս գործողությունից:

Հետևաբար, ազդեցության այլ չափանիշ է անհրաժեշտ մշակել: Որպես մեկ առաջարկ կարող է լինել այն, որպեսզի ընտրվի մեկ մեծ ազդեցություն (հետևանք), որին հասնելու մի քանի ենթագործողություններ միջոցառումներ կմշակվեն: Այս ենթագործողությունները կունենան ավելի նեղ ենթաազդեցություններ (արդյունքներ), որոնք կծառայեն մեծ գործողությանը կամ նպատակին:

Այս խնդիրը վերաբերում է բոլոր այն գործողություններին, որոնց ազդեցությունը նշվել է խախտման դեպքերի նվազեցումը: Այս փաստաթղթում բոլոր դեպքերը չենք ներկայացնում առանձին-առանձին, սակայն գտնում ենք, որ անհրաժեշտ է վերանայել մոտեցումն ընդհանուր առմամբ:

Պաշտպանական ոլորտում մարդու իրավունքների կրթություն (վերապատրաստում)

Դրական է, որ ԳԾ-ն նախատեսել է վերապատրաստումներ զինծառայողների, ՌՈ աշխատակիցների, քննիչների, դատախազների, դատավորների համար կյանքի իրավունքի, խոշտանգումների արգելքի և արդար դատաքննության մասին, ինչպես նաև ներառել է ԶՈՒ մարդու իրավունքների վերաբերյալ առանձին դասընթաց Վազգեն Սարգսյան ռազմական համալսարանում:

Կարճաժամկետ վերապատրաստումների մասին մեր մշտադիտարկման ընթացքում կարծիքներ ենք ստացել, ըստ որոնց՝ կարճաժամկետ դասընթացները հիմնականում միջոց են զինծառայողների համար՝ իրենց բարդ ծառայության միջակայքում մի փոքր ցրվելու, հանգստանալու համար:

Մի շարք հարցեր կան, որոնք անհրաժեշտ է պարզել ԶՈՒ մարդու իրվունքների դասընթցների վերաբերյալ. Որքանո՞վ է դասընթացի ուսումնական պլանը արտահայտում միջազգային ժամանակակից չափանիշներն ու իրավական հիմքը. որքանո՞վ է դասընթացների անցկացումը օգտակար եղել զինծառայողների, ՌՈ աշխատակիցների, զինվորական գործերով աշխատող քննիչների, դատախազների և դատավորների համար. որքանո՞վ են դասընթացները ներառել պրակտիկ խնդիրներ, որոնց բախվում են զինծառայության ընթացքում. որքանո՞վ են այդ դասընթացները ձևավորել այն էթիկական շրջանակը, որն ապահովում է, որպեսզի դասընթացն անցնողները էթիկապես կիրառեն մարդու իրավունքների գիտելիքները իրենց գործունեությունում. որքանո՞վ է դասընթացներում հաշվի առնվել գենդերային, սոցիալական և այլ հիմքով խտրականությունը, որ հնարավոր է գոյություն ունենա համակարգային մակարդակում; ի՞նչ մեթոդներ և ի՞նչ գրականություն է օգտագործվում նման դասընթացներում. ի՞նչ մասնագիտացում ունեն մարդու իրավունքների դասավանդողները, և այլ հարցեր: Ամեն շահառուի համար պետք է մշակվեն առանձին դասընթացներ: Նմանություններ կարող են լինել, սակայն չի կարող սպայի համար նախատեսված դասընթացը նույնը լինել, ինչ ՌՈ-ի,

քննիչների, դատախազների կամ դատավորների համար դասընթացները, քանի որ յուրաքանչյուրն ունի միմյանցից տարբերվող գործառույթներ, որոնք պետք է հաշվի առնվեն դասընթացներ մշակելիս:

Որպեսզի պարզվի,՝ արդյոք ռազմավարությունը և ԳԾ-ն հասցեագրել են վերապատրաստումների շահառուների կարիքներն ու ակնկալիքները, անհրաժեշտ է հարցնել հենց իրենց՝ շահառուներին: Օրինակ, վերապատրաստման դասընթացների վերջում վերապատրաստում անցածները կարող են համապատասխան գնահատման հարցաշար լրացնել:

Գտնում ենք, որ անհրաժեշտ է մշտապես ուշադրության կենտրոնում պահել մարդու իրավունքների կրթության հարցը զինված ուժերին առնչվող պետական աշխատակիցների համար՝ սկսած զորակոչից ընդհուպ մինչև զորացրված զինծառայողների հարցերով զբաղվողների շրջանում:

Անհրաժեշտ է, որպեսզի պետությունը մշակի չափանիշներ կրթության և վերապատրաստումների ազդեցությունը պրակտիկայի վրա գնահատելու համար: Անհրաժեշտ է նաև գնահատել այդ ազդեցությունը ամեն դասընթացի ավարտից հետո և կատարել համապատասխան փոփոխություններ անհրաժեշտության դեպքում:

Անհրաժեշտ է մարդու իրավունքների պարբերական կրթություն ու վերապատրաստում ապահովել ՁՈՒ-ում մարդու իրավունքներ դասավանդողների համար:

Մշտադիտարկման արդյունքում հնարավոր չի եղել պարզել, թե 2020-2022թթ. ընթացքում ընդհանուր առմամբ քննիչների, դատախազների և դատավորների քանի տոկոսն է վերապատրաստվել կյանքի իրավունքին, խոշտանգման արգելքին և գործի արդար քննությանը վերաբերող թեմաներով, և դրանից քանի տոկոսն են կազմել զինվորական գործերով զգաղվողները: ՄԻՊ ԳԾ տարեկան հաշվետվությունները ներկայացնում են միայն տոկոսներ որոշակի ամիսների, կիսամյակի կամ տարվա կտրվածքով, որից հնարավոր չէ վերհանել ընդհանուր հստակ թիվ: Բացի այդ, ինչպես ՄԻՊ ԳԾ հաշվետվություններում այնպես էլ ԽԵ ՀԿ-ին ուղարկված գրություններում ՀՀ Արդարադատության ակադեմիայի տարեկան դասընթացները ներկայացվել են որպես տվյալ գործողության կատարման վկայություն: Հնարավոր չէ նաև ընդհանրացնել Եվրոպայի խորհրդի կողմից կազմակերպված դասընթացները և դրանցում մասնակցություն ունեցած ռազմական ոստիկանների, քննիչների, դատախազների ու դատավորների թվերը, քանի որ համապարփակ ու կենտրոնացված տեղեկատվություն չկա բաց աղբյուրներում, և պետական մարմիններից ստացված գրությունները ևս հստակ չեն պատասխանել այս հարցին:

Անհրաժեշտ է, որպեսզի Արդարադատության նախարարությունը վարի այդ տվյալների կենտրոնացված համակարգում՝ այդ թվում, Պաշտպանության նախարարության հետ համագործակցությամբ՝ Ռազմական ոստիկանների և զինվորական գործերով զբաղվող քննիչների, դատախազների ու դատավորների վերապատրաստումների մասով:

Ռիսկերի գնահատում և մարդու իրավունքների ապահովումը զինված հակամարտության դեպքում

Չնայած պետության մարդու իրավունքների պարտավորությունները շարունակում են գործել նաև զինված հակամարտության ժամանակ, Ռազմավարությունը ռիսկերի գնահատման գործում հաշվի չի առել պատերազմի, սահմանային լարվածության և (կամ) ռազմական ու անվտանգային այն սպառնալիքները, որոնք մշտապես առկա են եղել Արցախի և Հայաստանի դեմ: Հաջորդ ՄԻՊ ռազմավարությունների մշակման գործում անհրաժեշտ է հաշվի առնել զինված հակամարտության հնարավորությունը: Անհրաժեշտ է մշակել առանձին մարդու իրավունքների օպերատիվ պլան՝ 44-օրյա պատերազմի դասերի հիման վրա արդյունավետ մեխանիզմ գործարկելու համար:

Ռազմավարության հետագա ԳԾ մշակելիս անհրաժեշտ է յուրաքանչյուր իրավունքի և գործողության համար նախատեսել դրանց իրականացումը ինչպես զինված հակամարտության բացակայության, այնպես էլ առկայության դեպքում ու ընթացքում:

Անհրաժեշտ է ապահովել, որպեսզի 2023թ.-ից ի վեր մշակվող ՄԻՊ ռազմավարություններում ու գործողությունների ծրագրերում ներառվեն մինչ այդ տեղի ունեցած Հայաստանի և Արցախի մասնակցությամբ բոլոր զինված հակամարտությունների հետևանքով առաջացած մարդու իրավունքների խնդիրներին առնչվող գործողություններ:

Կապը այլ ռազմավարությունների հետ

Հայաստանի վերափոխման ռազմավարությունը ներառում է ընդհանուր նպատակներ, որոնցից, օրինակ կարող ենք առանձնացնել պետության հավիտենականության համար անհրաժեշտ անվտանգային՝ ինստիտուցիոնալ պայմանների ապահովումը, օրենքի և իրավունքի վրա հիմնված ազգային համերաշխության հաստատումը, 1 շնչի հաշվով ամենամարտունակ բանակի ունենալը, արտաքին ուժերից պաշտպանված Հայաստանը, արդյունավետ և հաշվետու կառավարումը և այլն: ՄԻՊ ռազմավարությունն ու ԳԾ-ն պաշտպանական ոլորտում վերոնշյալ նպատակներին առնչվող գործողությունների կապերը չի ներկայացրել:

Դատաիրավական բարեփոխումների ռազմավարության 2019-2023թթ. ԳԾ-ն նախատեսել է զինվորական տրիբունալների ստեղծման հայեցակարգի մշակում: Այս գործողությունը որևէ կերպ չի կապվել կամ չի արտահայտվում ՄԻՊ ԳԾ-ում:

Նույն ռազմավարությամբ նաև նախատեսվել է «Փորձագիտական գործունեության մասին» օրենքի նախագծի մշակում: Սակայն ՄԻՊ ԳԾ-ում փորձաքննությունների վերաբերյալ որևէ գործողություն չի նախատեսվել, չնայած նրան, որ ՄԻԵԴ զինվորական գործերով վճիռներում թերի դատաբժշկական փորձաքննությունները որպես խնդիր վերհանվել են:

Դատաիրավական բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսվել է նախաքննության մարմիններին ապահովել տեսախցիկներով, իսկ ՄԻՊ ԳԾ-ով նախատեսվել է ՌՈ բաժիններում տեղադրել տեսաձայնագրման միջոցներ:

Մինչ դատաիրվական բարեփոխումների ռազմավարության ԳԾ-ում նախատեսվել է միջոցառում քննիչների, դատախազների բարեվարքության վերաբերյալ, ՄԻՊ ԳԾ-ն բարեվարքության միջոցառումներ չի նախատեսել ՀՈՒ համար: Սակայն վերջին 44-օրյա պատերազմի հետևաքնով մի շարք դեպքեր են ներկայացվել, որտեղ բարձրացվել են բարեվարքության, ՀՈՒ անձնակազմի մարդու իրավունքների և անվտանգության կապի վերաբերյալ խնդիրներ:

Հակակոռուպցիոն ռազմավարությունը նախատեսել է հակակոռուպցիոն նոր մարմինների ստեղծում, գործունեության ապահովում և վերահսկողություն, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելում, քննություն և այլն: ՄԻՊ ԳԾ-ում կապը այս փաստաթղթի հետ ներկայացված չէ:

Ազգային անվտանգության ռազմավարությունը որպես ազգային շահ ներառել է նաև մարդու իրավունքների ապահովումը: Այն հետամուտ է եղել նաև պաշտպանական ոլորտում ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմների ընդլայնմանը՝ ուղղված զինված ուժերի արդյունավետ ղեկա-վարմանը, քաղաքական չեզոքությանը, զինծառայողների իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանությանը, զինված ուժերի գործունեության թափանցիկության ապահովմանն ու զինված ուժերի՝ որպես իրավական պետության անբաժանելի տարրի զարգացմանը: ՄԻՊ ԳԾ-ում առանձին գործողություններ ուղղված են եղել հենց ՀՈՒ-ում մարդու իրավունքների պաշտպանությանը:

Ազգային անվտանգության ռազմավարությունը նաև նշել է, որ հասարակական և քաղաքական կյանքի տարբեր բնագավառներում և հատկապես պետական կառավարման գործընթացներում կանանց ներգրավվածության ցածր մակարդակը թույլ չի տալիս լիովին օգտագործել մարդկային կապիտալն ազգային անվտանգության ապահովման եւ կայուն զարգացման ուղղություններով: Պետությունը հետամուտ է լինելու ինչպես կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովմանը, այնպես էլ հավասար հնարավորությունների և պայմանների ստեղծմանն ու քաղաքական որոշումների ընդունման գործընթացներում կանանց ընդգրկուն մասնակ-ցության խթանմանը: ՄԻՊ ԳԾ-ն ներառել է գործողություն կանանց ներգրավվածությունը ՀՈՒ-ում խթանելու վերաբերյալ, ինչպես նաև ընդհանուր իրազեկվածության բարձրացման միջոցառումներ: Այդ իրազեկման միջոցառումները ներառել են նաև տեսանյութեր ռազմական կրթության և կարիերայի ոլորտում հավասար հնարավորությունների մասին:

Ոչ բոլոր մարդու իրավունքներն են ներառվել ԳԾ-ում

2020-2022թ. ԳԾ-ն չի ներառել միջոցառումներ պաշտպանական ոլորտում՝ այդ թվում, Զինված ուժերում սոցիալ-տնտեսական իրավունքների մասով: Ճիշտ է՝ 2020թ. սեպտեմբերի 27-ի պատերազմից հետո ԳԾ-ում ավելացվեց նոր գործողությունը, որը պետք է ապահովեր պատերազմի հետևանքով վնաս կրած

անձանց իրավունքները, սակայն այն հիմնականում արտահայտվեց դրամական օգնություն ցուցաբերելու միջոցով:

Անհրաժեշտ է մշակվող հաջորդ ԳԾ-ում ներառել սոցիալ-տնտեսական իրավունքներին վերաբերող առանձին բաժին, ինչպես նաև ՁՈՒ-ում և պաշտպանական ոլորտում սոցիալ-տնտեսական իրավունքների ենթաբաժիններ:

Բացի սոցիալ-տնտեսական իրավունքներից, ԳԾ-ն չի ներառել նաև ազատության և անվտանգության իրավունքի մասին գործողություններ, չնայած որ զինվորական գործերով Հայաստանի դեմ ՄԻԵԴ վճիռներով այս իրավունքի խախտումներ ևս արձանագրվել են:

Բացի այդ՝ այս իրավունքի համատեքստում զինված ուժերում գործում է կարգապահական գումարտակ, որի գործունեությունն անհրաժեշտ է կարգավորել մարդու իրավունքների միջազգային իրավունքի և չափանիշների ներքո:

Պետական մարմինների ընդգրկվածությունը, պատասխանատվությունը և համագործակցությունը

Մշտադիտարկման ընթացքում ՀՀ պետական մարմինները հիմնականում ժամանակին են տրամադրել տեղեկություններ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի կողմից հարցումներին ի պատասխան:

Կազմակերպությունը, սակայն նկատել է, որ երբեմն պետական մարմինները տեղյակ չեն եղել ԳԾ կատարման գործում իրենց ներգրավվածությունից: Մեկ օրինակ է ՀՀ ոստիկանության ակադեմիան: Չնայած ՀՀ ոստիկանության ակադեմիան որպես համակատարող մարմին (համաձայնությամբ) ներառված է գործողությունում, ռազմական ոստիկանների վերապատրաստումների վերաբերյալ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի կողմից ուղղված գրությանն ի պատասխան հայտնել են, որ ՀՀ ոստիկանության կրթահամալիրում 2020թ. օգոստոսի 18-ի դրությամբ կյանքի իրավունքի թեմայով միջազգային չափանիշներին համապատասխան, այդ թվում՝ ՁՈՒ հրամանատարների, ռազմական ոստիկանների, քննիչների, դատախազների, դատավորների, փաստաբանների վերապատրաստումներ (դասընթացներ) չեն իրականացվել, քանի որ ՄԻՊ 2020- 2022թթ. ԳԾ առաջին կետով համակատարող չեն եղել իրենք:

Եղել է նաև դեպք, երբ պետական մարմինը չի տրամադրել գործողության կատարման ազդեցության մասին տեղեկատվություն այն պատճառաբանությամբ, որ դա իր լիազորություններից դուրս է, չնայած որ այդ մարմինը հանդիսացել է տվյալ ընդհանուր գործողության պատասխանատու մարմինը:[20]

Բացի այդ, ԳԾ-ում երբեմն համակատարող և նույնիսկ պատասխանատու մարմին նշվում է «համաձայնությամբ»: Պարզ չէ, թե ինչու արդեն Կառավարության կողմից ՄԻՊ ռազմավարության ու ԳԾ-ի ընդունման որոշումից հետո որևէ համակատարող և առավելևս պատասխանատու մարմին պետք է համաձայնություն տա՝ կատարելու է իրեն տրված գործողությունը, թե՝ ոչ: ԳԾ-

[20] Տես՝ Գործողություն 1; Գործողություն 14.

ին նման մոտեցումը խանգարում է փաստաթղթի կատարման և դրա համար պատասխանատվության ապահովմանը:

Զորակոչիկների իրազեկվածությունը և ընկալումները մարդու իրավունքների խախտումների դեպքում բողոքարկման մեխանիզմների մասին

Ըստ ԽԵ կողմից զորակոչիկների հետ անցկացված հարցումների՝ մեծամասնությունը տեղյակ չի եղել, թե ինչ պետական մարմնի կարող է դիմել իր կամ ծառայակցի մարդու իրավունքների խախտման դեպքում: Իմացողները նախընտրել են չդիմել և ինքնուրույն փորձել լուծել հարցերը:

Այսպես, 2022թ. ամառային զորակոչին հարցված 375 զորակոչիկների 51,7%-ը չի իմացել՝ **պետական ինչ մարմինների կարող է դիմել, եթե իրենց կամ իրենց ընկերոջ իրավունքները ծառայակիցները կամ հրամանատարները խախտեն**: 22,9%-ն իմացել է, բայց նախընտրել է չդիմել ոչ ոքի, իսկ 8,5%-ը նշել է, որ իմաստ չկա դիմելու, որովհետև պետական մարմինները չեն օգնելու:

Նրանք, ովքեր կդիմեին որևէ մարմնի, առաջին հերթին կդիմեին Հրամանատարին (վերադասին), այնուհետև՝ հավասարապես ՊՆ թեժ գիծ և ՌՈ, հետո՝ ՄԻՊ, ՊՆ: Ոմանք կդիմեին նաև ոստիկանություն, ընտանիքին կամ ծայրահեղ դեպքում որևէ մեկին կդիմեին:

Նրանք, ովքեր չէին դիմի ոչ ոքի, հիմնականում ասել են, որ ինքնուրույն կլուծեն խնդիրը կամ տեղում կկարգավորեն: Նաև նշել են, որ չեն դիմի ոչ ոքի, քանի որ «գործ տվող» չեն, հետագայում բարդություններից խուսափելու համար չեն տեղեկացնի, ինչպես նաև որ կարիք ու իմաստ չկա:

2022թ. ձմեռային զորակոչին հարցված 325 զորակոչիկների 52%-ը չի իմացել, թե ինչ պետական մարմնի կարող է դիմել իր կամ իր ընկերոջ իրավունքները ծառայակիցների կամ հրամանատարների կողմից խախտելու դեպքում: 21,5%-ն իմացել է, սակայն նախընտրել է չդիմել ոչ մեկին, 11,6%-ը իմացել է և կդիմեր այդ կառույցներին: Դիմելու առումով առաջին տեղում է եղել ՊՆ «Թեժ գիծը», հետո՝ վերադասը կամ հրամանատարը, դրանից հետո ՌՈ, այնուհետև՝ ՄԻՊ: Որևէ մեկին չդիմելու պատճառներից ամենաշատը նշվել է հարցը ինքնուրույն լուծելը, այնուհետև գտել են, որ օգուտ չկա դիմելուց: Պատասխաններ են եղել նաև, որ «Գործ տվող» կդառնաս կամ ծառայությունն ավելի կդժվարանա:

Անհրաժեշտ է ուսումնասիրել այս արդյունքների խորքային պատճառները:

ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Ընդհանուր դիտարկումներ

ՄԻՊ ռազմավարությունը և 2020-2022թթ. գործողությունների ծրագիրը թիրախավորում են հատկապես պետության հոգածության ներքո գտնվող և կյանքի համար վտանգավոր իրավիճակներում հայտնված անձանց կյանքի իրավունքի պաշտպանության խնդիրները: Այդպիսի անձանց ցանկում են նաև զինծառայողները, որոնց իրավունքների պաշտպանության շրջանակներում ռազմավարությունը պետության համար լրջագույն մարտահրավեր է ճանաչում խաղաղ պայմաններում կանոնադրային հարաբերությունների խախտումների արդյունքում զինծառայողների մահվան դեպքերը:[21]

ՄԻՊ 2019թ. ռազմավարության համաձայն՝ վերլուծվել և առանձնացվել են այն խնդիրները, որոնք վերջին տարիներին եղել են նաև միջազգային մասնագիտացված կազմակերպությունների ուշադրության կենտրոնում:[22] Բանակում ոչ մարտական պայմաններում մահացության դեպքերը և դրանց ոչ արդյունավետ քննությունը այն խնդիրներից են, որոնք մատնանշվել են ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի տարբեր մասնագիտացված կառույցների զեկույցներում, ինչպես նաև Հայաստանի դեմ ՄԻԵԴ կայացրած վճիռներում:

Այս առումով հատկանշական են Մուրադյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 11275/07, վճիռը հրապարակվել է 24.02.2017),[23] Միրզոյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 57129/10, վճիռը հրապարակվել է 23.08.2019),[24] Անահիտ Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 3673/11, վճիռը հրապարակվել է 07.08.2020),[25] Մուրադյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 2303/12, վճիռը հրապարակվել է 21.06.2022),[26] Աշոտ Մալխասյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 35814/14, վճիռը հրապարակվել է 11.01.2023),[27] ՄԻԵԴ վճիռները, որոնցում խախտվել էր բանակում ոչ մարտական պայմաններում կյանքի իրավունքը՝ այդ թվում չկատարելով արդյունավետ քննություն կամ չձեռնարկելով կանխարգելիչ քայլեր:

Մուրադյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 11275/07, վճիռը հրապարակվել է 24.02.2017) գործում Դատարանը հղում էր կատարել նաև Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի զեկույցին՝ վկայելով, որ ոչ մարտական իրավիճակներում մահվան դեպքերը և դրանց համար պատասխանատվության բացակայությունը հազվադեպ չեն:[28]

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ փաստաթղթում կյանքի իրավունքի ապահովմանն ուղղված բոլոր՝ այդ թվում, պաշտպանական ոլորտին վերաբերող

[21] ՄԻՊ ռազմավարություն 2019թ., էջ 19, https://www.moj.am/storage/uploads/1Razmavarutyun.MIP.pdf.
[22] ՄԻՊ ռազմավարություն 2019թ., էջ 10, https://www.moj.am/storage/uploads/1Razmavarutyun.MIP.pdf.
[23] ECtHR, Muradyan v. Armenia (11275/07), 24 February 2017.
[24] Ոչ նյութական վնասի հատուցում՝ ECtHR, Mirzoyan v. Armenia (57129/10), 23 August 2019, §§ 72, 82.
[25] ECtHR, Anahit Mkrtchyan v. Armenia (3673/11), 7 August 2020.
[26] ECtHR, Manukyan v. Armenia (2303/12), 21 June 2022.
[27] ECtHR, Ashot Malkhasyan v. Armenia (35814/14), 11 January 2023.
[28] ECtHR, Muradyan v. Armenia (11275/07), 24 February 2017, § 152.

գործողությունների համար սահմանվել է ընդհանուր նպատակ և խնդիր:[29] Սակայն կյանքի իրավունքի ապահովմանն ուղղված բոլոր գործողությունների նպատակը և խնդիրները հիմնավորված են միայն ընտանեկան բռնության վերաբերյալ վիճակագրական տվյալներով: Միայն ընտանեկան բռնության համատեքստում է նպատակ դրվում քրեական գործերն ավելացնել որոշակի տոկոսով[30]: Նման չափելի նպատակ չի սահմանվում զինված ուժերում մահվան դեպքերի նվազեցման և (կամ) դրանց վերաբերյալ գործերի քննության ավելացման առումով: Բացի այդ՝ ներկա իրավիճակի վերաբերյալ ելակետային տվյալներ ևս չեն ներկայացվել Ռազմավարությունում կամ ԳԾ-ում բանակում ոչ մարտական պայմաններում մահացությունների և դրանց քննության վերաբերյալ: Այս տվյալների բացակայության պայմաններում անհնարին է դառնում գործողությունների ազդեցության չափումը: Այսինքն՝ հնարավոր չէ արձանագրել, թե ինչ դրական իրավիճակային փոփոխություն է գրանցվելու բանակում խաղաղ պայմաններում մահացությունների նվազման առումով այս կամ այն ռազմավարական գործողության իրականացման արդյունքում:

Չնայած 2021թ. ԳԾ փոփոխությունների նախագծի առաջարկություններով հստակեցվել են որոշ ելակետային տվյալներ, սակայն դրանք կրկին վերաբերել են միայն ընտանեկան բռնությանը:

ՄԻՊ ռազմավարության 2020-2022թ. ԳԾ մշտադիտարկման շրջանակներում ԽԵ հարցմանն ի պատասխան՝ Պաշտպանության նախարարությունը նշել է, որ զինված ուժերում մահվան ելքով դեպքերի նվազումն արձանագրելու համար որպես ելակետային տվյալներ են դիտարկվել 2022թ. և 2021թ. ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների թվաքանակը, որտեղ (2022թ. ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների թվաքանակում) չի ներառվել 2022թ. սեպտեմբերի 13-ից 14-ը տեղի ունեցած ռազմական գործողությունների հետևանքով զոհվածների թիվը:[31] ՊՆ-ն տվյալներ է ներկայացրել, թե յուրաքանչյուր տարի նախորդ տարվա համեմատ քանի տոկոսով է նվազել, սակայն տվյալներ չի տրամադրել յուրաքանչյուր տարի մահացությունների քանակի մասով:

Բանակում ոչ մարտական պայմաններում մահացության թվեր

ՄԱԿ-ի կամայական կալանքի հարցերով աշխատանքային խումբը իր 2011թ. զեկույցում, ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոմիտեն 2012թ., 2017թ. եզրափակիչ դիտարկումներում, ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեն 2012թ. եզրափակիչ դիտարկումներում, ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարը 2011թ., 2015թ. զեկույցներում, «Հյուման ռայթս ուոտչ»-ն իր տարբեր տարիների զեկույցներում մատնանշել են բանակում ոչ մարտական պայմաններում «կասկածելի» մահվան դեպքերը:[32] Միջազգային կառույցները նշել են

[29] ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագիր, ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշման հավելված 2, էջ 1:
[30] ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ, էջ 1:
[31] ՊՆ/510-ԳՔ/1208, 7 մարտի 2023թ.:
[32] UN Working Group on Arbitrary Detention, Report, Mission to Armenia from 6 to 15 September 2021 (A/HRC/16/47/Add.3), 17 February 2011, §§ 65-68; UN Committee against Torture, Concluding Observations (CAT/C/ARM/CO/3), 6 July 2012, §§ 9, 12; UN Committee against Torture, Concluding Observations (CAT/C/ARM/CO/4), 26 January 2017, §§ 35-36; UN Human Rights Committee, Concluding observations (CCPR/C/ARM/CO/2), 31 August 2012, § 15; CoE Commissioner for Human Rights, Report following his visit to Armenia from 18 to 21 January 2011 (CommDH(2011)12), 9 May 2011, §§ 121-143; CoE Commissioner for Human Rights, Report following his visit to Armenia from 5 to 9 October 2014 (CommDH(2015)2), 10 March

բանակում նման մահացությունների անհանգստացնող թվերը, ինչպես նաև մի շարք դեպքերում նման մահացությունները որպես ինքնասպանություն որակելը՝ չնայած զոհի մարմնի վրա եղած բռնության հետքերի առկայությանը:[33]

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն մշտադիտարկել է բանակում մահացությունների թվերը, որի արդյունքում պարզել է, որ 2018-2022թթ. Հայաստանի և Արցախի զինված ուժերում մահացությունների թիվը հասել է 347-ի: Դրանում չեն ներառվել 2020թ. սեպտեմբերի 27-ի և 2022թ. սեպտեմբերի 13-ի ռազմական գործողություններում կամ դրանց արդյունքում մահացությունները: 2018-2022թթ. մահացությունների այդ 347 դեպքից 60-ը որակվել է որպես հրադադարի ռեժիմի խախտում, 19-ը՝ սպանություն, 51-ը՝ ինքնասպանություն, 114-ը՝ դժբախտ պատահար: Ընդ որում, 2018թ. գրանցվել է 65, 2019թ.՝ 44, 2020թ. 99, 2021թ.՝ 75, 2022թ.՝ 64 դեպք:

2018-2022թթ. Հայաստանի և Արցախի ԶՈՒ մահացության դեպքերը (ԽԵ)

	Հրադադարի ռեժիմի խախտում	Սպանություն	Դժբախտ պատահար	Անվտանգության կանոններ	Ինքնասպանություն	Առողջական խնդիրներ	Անփութություն, անգործություն	Այլ	Ընդամենը
2018	7	2	27	3	11	12	0	3	65
2019	4	5	16	0	10	8	1	0	44
2020	17	4	31	5	17	21	1	3	99
2021	17	5	20	6	7	19	0	1	75
2022	15	3	20	2	6	17	1	0	64
	60	**19**	**114**	**16**	**51**	**77**	**3**	**7**	

Այսպիսով, չնայած ՄԻՊ ռազմավարության 2020-2022թթ. ԳԾ-ի պաշտպանական ոլորտին վերաբերող գործողություններում որպես ազդեցություն է նախանշվել բանակում մահացությունների թվի նվազեցումը, մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ 2020թ., 2021թ. թվերը ոչ միայն չեն նվազել, այլև ավելացել են 2018թ. և 2019թ. համեմատությամբ: 2022թ. մահացության թվերը միայն մեկով են պակասել 2018թ.-ից, բայց ավելացել են 2019թ. համեմատությամբ:

Ըստ Պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկության՝ իրականացրած կանխարգելիչ աշխատանքների արդյունքում 2022թ. ընթացքում 2021թ. համեմատ զոհված (մահացած) (բացառությամբ 2022թ. սեպտեմբերի 13-ից 14-ը տեղի ունեցած ռազմական գործողությունների հետևանքով զոհվածների թվի[34]) զինծառայողների թվաքանակը նվազել է ավելի քան 11%-ով: ՊՆ տրամադրած այս տոկոսային հարաբերակցությունը մոտ է ԽԵ մշտադիտարկած թվերի տոկոսային հարաբերակցությանը: Սակայն այն ցույց չի տալիս 2019թ.՝ ռազմավարության ընդունման պահին գրանցված մահացությունների դեպքերի թվային տարբերությունը 2020թ., 2021թ. և 2022թ. համեմատությամբ:

2015, §§ 86, 91; HRW, Report 2012, p. 414; HRW, Report 2013, p. 394; HRW, Report 2014, p. 408; HRW, Report 2015, p. 72; HRW, Report 2016, p. 82:

[33] UN CAT, Concluding observations 2017, § 36:

[34] ՊՆ/510-ԳՔ/1208, 7 մարտի 2023թ.:

Ըստ ՊՆ տեղեկության՝ 2022թ. առաջին կիսամյակում, նախորդ կիսամյակի հետ համեմատած, ՀՀ զինված ուժերում որոշակի նվազել են ոչ կանոնադրային հարաբերությունների հետևանքով արձանագրված մահվան ելքով դեպքերը, իսկ 2022թ.-ին արձանագրված դեպքերի թվաքանակը նախորդ տարվա համեմատ նվազել է շուրջ 33%-ով:[35] Այս տվյալը հնարավոր չէ ստուգել, քանի որ պարզ չէ, թե «ոչ կանոնադրային հարաբերությունների հետևանքով մահացության դեպք» հասկացությունում ՊՆ-ն մահացության կոնկրետ ինչ դեպքեր է ներառել:

Հարկ է նաև նշել, որ 2022թ. հունիսի 21-ին հրապարակվեց Մանուկյանն ընդդեմ Հայաստանի վճիռը (գանգատ թիվ 2303/12), որում ՄԻԵԴ-ը գտավ կյանքի իրավունքի նյութական մասի խախտում այն հիմքով, որ **ինքնասպանության** զոհի հրամանատարները տեղյակ էին եղել ինքնասպանության նախկին փորձի մասին, չէին ապահովել, որպեսզի վատ վերաբերմունքի դեպքերը փաստացի զեկուցվեն, նրա կյանքին սպառնացող վտանգից խուսափելու համար համապատասխան միջոցներ չէին ձեռնարկել, այլ նրան վիրավորել և ենթարկել էին ֆիզիկական բռնության, որը զգալիորեն ազդել էր նրա հոգեբանական վիճակի վրա և հանգեցրել ինքնասպանության:[36] Հետևաբար, այս գործով ՄԻԵԴ-ը ևս մեկ անգամ հաստատեց, որ ԶՈՒ-ում ինքնսպանության դեպքերը ևս հանդիսանում են պետության պատասխանատվությունը և պահանջում կանխարգելիչ կոնկրետ գործողություններ:

Վիճակագրական տվյալների տրամադրում

ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարը դեռևս իր 2011թ. և 2015թ. զեկույցներում կոչ էր արել ՀՀ իշխանություններին, որպեսզի վերջիններս հանրությանը պատշաճ կերպով տեղեկություններ տրամադրեն բանակում մարդու իրավունքների խախտումների մասին՝ այդ թվում՝ ոչ մարտական պայմաններում մահացությունների, դրանց էության,[37] ինչպես նաև բանակում մահացության դեպքերի և մարդու իրավունքների այլ խախտումների քննության վերաբերյալ վիճակագրական տվյալներ:[38]

Չնայած միջազգային կառույցների կողմից բարձրացված խնդիրներին ի պատասխան ՀՀ Կառավարությունը բազմիցս նշել է, որ հանրությանը պատշաճ կերպով տեղեկացվում է բանակում մահացության դեպքերի վերաբերյալ, այնուամենայնիվ, Հայաստանի պետական մարմինները միասնական վիճակագրական տվյալներ երբևէ չեն տրամադրել հանրությանը բանակում ոչ մարտական պայմանեներում մահացությունների, դրանց պատճառների ու քննության վերաբերյալ:

Բանակաում ոչ մարտական պայմաններում մահացության դեպքերի կապակցությամբ վիճակագրական տվյալները «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն հիմնականում ստացել է առանձին պետական մարմիններին դիմելու արդյունքում, սակայն տրամադրված թվերը հաճախ հակասել են միմյանց: Տեղեկությունների տրամադրման հիմնական աղբյուրը եղել է ՀՀ Գլխավոր

[35] ՊՆ/510-ԳՔ/1139, 2 մարտի 2023թ.:

[36] ECtHR, Manukyan v. Armenia (2303/12), 21 June 2022, §§ 21-23:

[37] CoE Commissioner for human rights, Report 2011, § 142:
[38] CoE Commissioner for human rights, Report 2015, § 91:

դատախազությունը: Վերջինս նաև հրապարակում է տարեկան ամփոփ տվյալներ զինված ուժերում մահվան ելքով միջադեպերի վերաբերյալ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը գրեթե չի հրապարակում զինված ուժերում զինծառայողների մահացության դեպքերի վերաբերյալ տարեկան ամփոփ տվյալներ, իսկ տարվա ընթացքում մահացության դեպքերի մասին տեղեկությունները ոչ միշտ են ներկայացվում նախարարության պաշտոնական կայքում: Դա այն դեպքում, որ ըստ ՊՆ տրամադրած տեղեկության՝ մահվան (զոհվելու) դեպքերի հաշվառումը տարվում է ՊՆ համապատասխան ստորաբաժանումում:[39]

Պաշտպանության նախարարությունը տարբեր ժամանակահատվածներում «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին տրամադրել կամ չի տրամադրել վիճակագրական տվյալներ բանակում մահվան դեպքերի վերաբերյալ: Որպես տեղակատվության չտրամադրման հիմնավորում ՊՆ-ն հիմնականում հղում է կատարել «ՀՀ Պետական և ծառայողական գաղտնիք»-ի մասին օրենքին, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարի՝ «ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը հաստատելու մասին» 2015թ-ի 9-Ն որոշման դրույթներին:

Չնայած որ ՄԻՊ ԳԾ-ի 4-րդ գործողությամբ նախատեսվում է սահմանել զինված ուժերում մահվան դեպքերի արագ և թափանցիկ քննության վերաբերյալ իրազեկման չափորոշիչներ, այնուամենայնիվ, բանակում մարդու իրավունքների խախտումների մասին՝ այդ թվում՝ ոչ մարտական պայմաններում մահացությունների, դրանց էության, ինչպես նաև բանակում մահացության դեպքերի և մարդու իրավունքների այլ խախտումների քննության վերաբերյալ վիճակագրական տվյալների հանրայնացման վերաբերյալ գործողություններ նախատեսված չեն: Միասնական վիճակագրական տվյալների հավաքագրման մեխանիզմը հնարավորություն կտար հստակեցնել ոչ մարտական պայմաններում մահվան դեպքերի հետ կապված ելակետային տվյալները, ինչն ավելի չափելի կդարձներ այս ուղղությամբ պետության կողմից իրականացվող գործողությունների արդյունքները:

Արդյունավետ քննություն

Միջազգային կառույցները մատնանշել են, որ բանակում ոչ մարտական պայմաններում մահացությունների շուրջ կատարված քննությունները հաճախ եղել են ոչ արդյունավետ կամ ընդհանրապես բացակայել են նույնիսկ այն դեպքերում, երբ բռնության հետքեր են առկա եղել:[40] Բանակում կյանքի իրավունքի ոչ արդյունավետ քննության պատճառները պայմանավորված են ինչպես քրեական արդարադատության համակարգային, այնպես էլ հենց զինվորական ծառայության գործերին հատուկ խնդիրներով: Այսպիսի խնդիրներից են հանցագործությունների ոչ պատշաճ որակումները,[41] գործի

[39] ՊՆ/510-ԳՔ/1208, 7 մարտի 2023թ.; ՊՆ/510-ԳՔ/1139, 2 մարտի 2023թ.:
[40] CoE Commissioner for Human Rights, Report 2015, § 86:
[41] CoE Commissioner for Human Rights, Report 2015, § 86:

երկար,[42] ոչ մանրակրկիտ,[43] ոչ անկախ ու անաչառ[44] քննությունը, թերի դատաբժշկական փորձաքննությունները,[45] զոհերի հարազատներին չներգրավելը և գործի նյութերին նրանց հասանելիությունը չապահովելը, նրանց տրամադրած տեղեկությունները պատշաճ քննարկման չառնելը,[46] վկաների պաշտպանության միջոցներ չձեռնարկելը[47] և այլ խնդիրներ:

2022թ. վերջին ՄԻԵԴ-ը վճիռ կայացրեց ևս մեկ զինվորական գործով, որտեղ ճանաչեց կյանքի իրավունքի և նյութական, և ընթացակարգային խախտում: Աշոտ Մալխասյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 35814/14, վճիռը հրապարակվել է 11.01.2023) այս գործով ՄԻԵԴ-ը գտավ, որ իշխանության մարմինների անգործության արդյունքում էր քննությունը դադարեցվել քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետի պատճառով:[48]

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ-ում բանակում ոչ մարտական պայմաններում մահացությունների դեպքերով **քննության արդյունավետության ապահովման** ուղղությամբ, սակայն, գործնական քայլեր նախատեսված չեն. փոխարենը, գործողությունները հիմնականում սահմանափակվում են մասնագիտական որակավորման բարձրացմանն ուղղված դասընթացների կազմակերպմամբ:

Բացի այդ, չնայած **դատաբժշկական փորձաքննությունների** թերությունների մասով զինվորական գործերով ՄԻԵԴ վճիռներին և միջազգային կազմակերպությունների կողմից այդ խնդրի մատնանշմանը՝ ՄԻՊ ռազմավարությունը և 2020-2022թթ. ԳԾ-ն այս ոլորտի բարեփոխումների օրակարգ չեն նախատեսել:

Զորակոչի ընթացքում բժշկական զննություն

ԳԾ ժամանակահատվածում կայացված Աշոտ Մալխասյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 35814/14, վճիռը հրապարակվել է 11.01.2023) ՄԻԵԴ գործով հաստատվեց, որ զորակոչի ընթացքում ոչ պատշաճ բժշկական զննությունը և (կամ) բժշկական եզրահանգումների ոչ պատշաճ հաշվի առնելը, դրա արդյունքում զորակոչելը կարող է հանգեցնել զինծառայողի մահվան շատ արագ՝ ընդամենը տասն օրվա ընթացքում:[49]

ԽԵ ՀԿ-ն զորակոչիկների շրջանում հարցրել է զորակոչի ընթացքում առողջական վիճակի հետազոտման մասին: 2022թ. ամառային զորակոչին հարցվածների մեծ մասը՝ 86,1%, **անցել է բժշական զննություն**, որի ընթացքում **մանրամասն հետազոտվել** է: Հարցվածներից 12,2%, սակայն, **հապճեպ է հետազոտվել**:

2022թ. ձմեռային զորակոչին հարցվածների 84%-ն ասել է, որ մանրամասն հետազոտվել է, 14,7%-ը՝ հետազոտել է հապճեպ, մակերեսային:

---

[42] CoE Commissioner for Human Rights, Report 2015, § 86; ECtHR, ECtHR, Anahit Mkrtchyan v. Armenia (3673/11), 7 August 2020, § 96:
[43] ECtHR, Muradyan v. Armenia (11275/07), 24 February 2017, §143; ECtHR, Anahit Mkrtchyan v. Armenia (3673/11), 7 August 2020, §§ 8, 97-100:
[44] UN CAT, Concluding observations 2017, § 36:
[45] CoE Commissioner for Human Rights, Report 2015, § 86; ECtHR, *Muradyan v. Armenia*, 2017, § 142:
[46] CoE Commissioner for Human Rights, Report 2015, § 86:
[47] ECtHR, Muradyan v. Armenia (11275/07), 24 February 2017, § 141:
[48] ECtHR, Ashot Malkhasyan v. Armenia (35814/14), 11 January 2023, § 118:
[49] ECtHR, Ashot Malkhasyan v. Armenia (35814/14), 11 January 2023, §§ 6-8, 29, 96-103:

Կյանքի իրավունքին նվիրված գործողություններ

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ-ում կյանքի իրավունքի ապահովմանն ուղղված գործողություններից «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն մշտադիտարկել է գործողություններ 1-ից 4-ը, որոնք նվիրված են ՀՈՒ հրամանատարների, ՌՈ աշխատակիցների, քննիչների, դատախազների, դատավորների շրջանում կյանքի իրավունքի թեմայով վերապատրաստումների իրականացմանը, զորակոչիկների ու զինծառայողների իրազեկվածության բարձրացմանը, ՀՈՒ-ում հանդուրժողականության և փոխադարձ հարգանքի մթնոլորտի ամրապնդմանը, ՀՈՒ-ում մահվան դեպքերի արագ ու թափանցիկ քննության վերաբերյալ իրազեկման չափորոշիչների սահմանմանը: Ստորև ներկայացվում են այդ գործողությունների մշտադիտարկման արդյունքները:

Գործողություն 1

Իրականացնել վերապատրաստումներ (դասընթացներ) կյանքի իրավունքի թեմայով՝ միջազգային չափանիշներին համապատասխան, այդ թվում՝ ՀՈՒ հրամանատարների, ռազմական ոստիկանների, քննիչների, դատախազների, դատավորների, փաստաբանների համար

ՄԻՊ ԳԾ կյանքի իրավունքին նվիրված առաջին գործողությամբ նախատեսվել է իրականացնել վերապատրաստումներ (դասընթացներ) կյանքի իրավունքի թեմայով՝ միջազգային չափանիշներին համապատասխան, այդ թվում՝

- ՀՈՒ հրամանատարների,
- ռազմական ոստիկանների,
- քննիչների,
- դատախազների,
- դատավորների,
- փաստաբանների համար:

Որպես այս գործողությունից ակնկալվող անմիջական արդյունքներ՝ նախատեսվել է 2020-2022թթ. ընթացքում **«Մարդու իրավունքները զինված ուժերում»** առարկան ներառել Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի Սպաների որակավորման բարձրացման կենտրոնի (ՍՈԲԿ) և հրամանատարա-շտաբային ֆակուլտետի (ՀՇՖ) ուսումնական ծրագրերում, ինչպես նաև կյանքի իրավունքի թեմայով վերապատրաստել

- հրամանատարների 18%-ին,
- ռազմական ոստիկանների 17%-ին,
- քննիչների 8%-ին,
- դատախազների 4%-ին,
- դատավորների 41%-ին:

Ակնկալվում է, որ **«Մարդու իրավունքները զինված ուժերում»** առարկայի՝ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի Սպաների որակավորման բարձրացման կենտրոնի (ՍՈԲԿ) և հրամանատարա-շտաբային

ֆակուլտետի (ՀԾՖ) ուսումնական ծրագրերում ներառմամբ և հրամանատարների վերապատրաստմամբ **կնվազեն զինված ուժերում մահվան դեպքերը**: Ակնկալվում է նաև, որ

- ռազմական ոստիկանների վերապատրաստման արդյունքում **կնվազեն ՁՈՒ-ում մահվան դեպքերը, դրանց վերաբերյալ քրեական գործերով հետաքննության ընթացքում մարդու իրավունքների խախտումները**,
- քննիչների դեպքում՝ **ՁՈՒ-ում մահվան դեպքերի վերաբերյալ քրեական գործերով նախաքննության ընթացքում մարդու իրավունքների խախտումները**,
- դատախազների դեպքում՝ **ՁՈՒ-ում մահվան դեպքերը, դրանց վերաբերյալ քրեական գործերով մինչդատական քննության ընթացքում մարդու իրավունքների խախտումները**,
- իսկ դատավորների դեպքում՝ **ՁՈՒ-ում մահվան դեպքերի վերաբերյալ քրեական գործերով կնվազեն դատական քննության ընթացքում մարդու իրավունքների խախտման դեպքերը:**

«Մարդու իրավունքները զինված ուժերում» առարկան Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի ուսումնական ծրագրերում ներառելու և կյանքի իրավունքի թեմայով հրամանատարների վերապատրաստման համար պատասխանատու պետական մարմին է սահմանվել ՀՀ պաշտպանության նախարարությունը, իսկ որպես համակատարող մարմին՝ Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակը:

Կյանքի իրավունքի թեմայով ռազմական ոստիկանների վերապատրաստման համար պատասխանատու մարմինը ևս պաշտպանության նախարարությունն է, իսկ համակատարող մարմինները՝ ՀՀ ոստիկանության ակադեմիան՝ համաձայնությամբ, և Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակը:

Քննիչների, դատախազների և դատավորների վերապատրաստումների համար պատասխանատու մարմինը ՀՀ արդարադատության նախարարությունն է:

Քննիչների վերապատրաստման իրականացման համար համակատարող մարմիններ են նախանշվել ՀՀ Արդարադատության ակադեմիան՝ համաձայնությամբ, ՀՀ քննչական կոմիտեն՝ համաձայնությամբ, և Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակը, դատախազների վերապատրաստման համար՝ ՀՀ Արդարադատության ակադեմիան՝ համաձայնությամբ, և Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակը, իսկ դատավորների վերապատրաստման համար՝ ՀՀ Արդարադատության ակադեմիան՝ համաձայնությամբ, Դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողովը՝ համաձայնությամբ, և Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակը:

Գործողություն 1-ի իրականացման ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

Մշտադիտարկման արդյունքները. ընդհանուր դիտարկումներ

Այս գործողությամբ որպես ակնկալվող անմիջական արդյունք ներառված չէ կյանքի իրավունքի թեմայով փաստաբանների վերապատրաստումը, չնայած նրան, որ նախատեսված է բուն գործողությունում: Մինչդեռ, կյանքի իրավունքի նյութական և ընթացակարգային ասպեկտների մասին փաստաբանների խորը գիտելիքները և գործնական հմտությունները հավելյալ երաշխիք են կյանքի իրավունքի խախտման դեպքերով տուժողների իրավունքների պաշտպանության և իրենց դատավարական իրավունքների խախտումները կանխելու տեսանկյունից: Սա հատկապես վերաբերում է զինված ուժերում կյանքի իրավունքի խախտումների դեպքերին, քանի որ տուժողների իրավունքներն ավելի խոցելի են դառնում ոլորտի զգայունության և գաղտնիք պարունակող տեղեկատվության հետ աշխատանքի պայմաններում:

Մշտադիտարկման արդյունքները. հրամանատարների վերապատրաստում

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացած տեղեկությունների՝ 2020-2022թթ. ընթացքում կյանքի իրավունքի թեմայով վերապատրաստվել է վաշտերի, գումարտակների հրամանատարական կազմի 13%-ը:[50] Դասընթացները իրականացվել են Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակի և Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի հետ համագործակցության շրջանակներում:[51]

ՊՆ-ն նշել է, որ վերապատրաստված անձնակազմի գնահատում և հավաստագրեր ՄԻՊ ռազմավարությամբ նախատեսված չեն:[52]

Մշտադիտարկման արդյունքները. Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի Սպաների որակավորման բարձրացման կենտրոնի (ՍՈԲԿ) և հրամանատարաշտաբային ֆակուլտետի (ՀՇՖ) ուսումնական ծրագրերում «Մարդու իրավունքները զինված ուժերում» առարկայի ներառում

Ըստ պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկության՝ «Մարդու իրավունքները ՀՀ զինված ուժերում առարկան» ներառվել է ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի սպաների որակավորման բարձրացման կենտրոնի և հրամանատարաշտաբային ֆակուլտետի կրթական ծրագրերում:[53]

Սպաների որակավորման բարձրացման կենտրոնի կրթական ծրագրում ներառվել են հետևյալ թեմաները.

1. Անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիություն
2. Նամակագրության գաղտնիություն
3. Հավաքների և միավորման ազատություն
4. Զինվորական ծառայությամբ պայմանավորված հավաքների և միավորումների իրականացման առանձնահատկություններ

[50] ՊՆ/510-ԳՔ/914, 21 փետրվարի 2023թ.:
[51] ՊՆ/510ԳՔ/2707-2020, 28 օգոստոսի, 2020թ.; Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակից գրություն, 26 օգոստոսի, 2020թ.:
[52] ՊՆ/510ԳՔ/2707-2020, 28 օգոստոսի, 2020թ.:
[53] ՊՆ/510-ԳՔ/914, 21 փետրվարի 2023թ.:

5. Արտահայտվելու ազատությունը և ընտրական իրվունքներ
6. Այլընտրանքային ծառայություն
7. Առողջության իրավունք:

Հրամանատարաշտաբային ֆակուլտետի կրթական ծրագրերում ներառված են հետևյալ թեմաները.

1. Անձի իրավական կարգավիճակի հիմունքներ
2. Անձնական իրավունքներ և ազատություններ
3. Քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրվունքներ ու ազատություններ
4. Մարդու իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային մեխանիզմներ:[54]

Նախատեսված է եղել հրամանատարաշտաբային ֆակուլտետի, Սպաների որակավորման բարձրացման և ՌՄՈՒ կենտրոններում դասընթացին հատկացնել նախնական 10 ժամ[55]:

Ըստ ՊՆ գրության՝ ուսումնական ծրագրերի և նյութերի մշակման համար օգտագործվել են հայերեն ձեռնարկներ մարդու իրավունքների և զինված ուժերում մարդու իրավունքների, դրանց դասավանդման մասին, ռուսերեն ՄԻԵԿ մեկնաբանություն, մարդու իրավունքների մասին ձեռնարկներ և ՄԻԵԿ հոդվածների ուղեցույցներ, որոնք հեղինակել են տեղացի և միջազգային մասնագետներ[56]:

Մշտադիտարկման արդյունքները. ռազմական ոստիկանների վերապատրաստում

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացած տեղեկությունների՝ 2020-2022թթ. ընթացքում կյանքի իրավունքի թեմայով վերապատրաստվել է ռազմական ոստիկանության 17%-ը:[57]

Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակը ևս ներգրավված է եղել վերապատրաստումների նյութերի մշակման և դասընթացների կազմակերպման ընթացքում:[58] Պայմանավորվածություն է ձեռք բերվել վերապատրաստման նյութերի մշակման և դասընթացների կազմակերպման ընթացքում ներգրավել նաև միջազգային փորձագետների:[59] Վերապատրաստված անձնակազմի գնահատում և մասնակիցների համար հավաստագրեր նախատեսված չեն եղել[60]:

Չնայած ՁՈՒ-ում մահվան դեպքերի և դրանց վերաբերյալ քրեական գործերով հետաքննության ընթացքում մարդու իրավունքների խախտումների նվազման պատասխանատու մարմինը ԳՇ-ով սահմանվել է Պաշտպանության նախարարությունը, վերջինս նշել է, որ հետաքննության իրականացումը դուրս է ՊՆ տիրույթից:[61] Հետևաբար, չի տրամադրել քրեական գործերով

[54] ՊՆ/510-ԳՔ/914, 21 փետրվարի 2023թ.:
[55] ՊՆ/510-ԳՔ/2919-20, 17 սեպտեմբերի, 2020թ.:
[56] ՊՆ/510-ԳՔ/2919-20, 17 սեպտեմբերի, 2020թ.:
[57] ՊՆ/510-ԳՔ/914, 21 փետրվարի 2023թ.; տես նաև՝ ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳՇ 2021թ. տարեկան հաշվետվություն, էջ 2-3, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=43162693d2cba48e4896&size_mode=1:
[58] ՊՆ/510ԳՔ/2707-2020, 28 օգոստոսի, 2020թ.:
[59] ՊՆ/510ԳՔ/2707-2020, 28 օգոստոսի, 2020թ.:
[60] ՊՆ/510ԳՔ/2707-2020, 28 օգոստոսի, 2020թ.:
[61] ՊՆ/510-ԳՔ/914, 21 փետրվարի 2023թ.:

հետաքննության ընթացքում մարդու իրավունքների խախտումների նվազումը չափելու մեթոդաբանություն:

Եթե հետաքննության իրականացումը ՊՆ տիրույթից դուրս է, հարց է առաջանում՝ ինչ հիմքով է ՊՆ-ն սահմանվել որպես 2020-2022թ. ԳԾ տվյալ գործողության անմիջական արդյունքի և ազդեցության պատասխանատու մարմին: Բացի այդ, Ռազմական ոստիկանությունը՝ որպես ՊՆ համակարգում գործող մարմին, իրականացնում է հետաքննություն, որը հստակ սահմանված է ինչպես Ռազմական ոստիկանության,[62] այնպես էլ Օպերատիվ-հետխուզական գործունեության մասին[63] օրենքներում: Հետևաբար, Զինված ուժերում հետաքննության իրականացումը և քրեական գործերով հետաքննության ընթացքում մարդու իրավունքների խախտումների նվազումը չափելը գտնվում են ՊՆ պատասխանատվության տիրույթում:

Մշտադիտարկման արդյունքները. քննիչների վերապատրաստում

Ըստ արդարադատության նախարարության տրամադրած տեղեկության՝ 2020 2022թթ. ընթացքում կյանքի իրավունք թեմայով ՀՀ քննչական կոմիտեի 121 քննիչ ենթակա է եղել վերապատրաստման: Զինվորական քննչական գլխավոր վարչությունից վերապատրաստվել է ընդհանուր 40 քննիչ: Այսպես. 2020թ.՝ պարտադիր վերապատրաստման ենթակա՝ 46, մասնակցած՝ 5 քննիչ (11%), 2021թ.՝ պարտադիր վերապատրաստման ենթակա՝ 36, մասնակցած՝ 6 քննիչ (17%), 2022թ.՝ պարտադիր վերապատրաստման ենթակա՝ 39, մասնակցած՝ 29 քննիչ (74%):[64]

Վերապատրաստումներն իրականացվել են Արդարադատության ակադեմիայի ուսումնական ծրագրով նախատեսված «Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր», «ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր» և «ՀՀ քրեական նոր օրենսգիրք և ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրք» թեմաներով:[65]

Մշտադիտարկման արդյունքները. դատախազների վերապատրաստում

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած տեղեկության՝ 2020-2022թթ. ընթացքում կյանքի իրավունք թեմայով վերապատրաստված դատախազներ՝ 2020թ.՝ 47,1%, 2021թ.՝ 57,6%, 2022թ.՝ 42,1%: Մասնավորապես, 2020թ.՝ պարտադիր վերապատրաստման ենթակա՝ 46, մասնակցած՝ 32 դատախազ (69%), 2021թ.՝ պարտադիր վերապատրաստման ենթակա՝ 27, մասնակցած՝ 16 դատախազ (59%), 2022թ.՝ պարտադիր վերապատրաստման ենթակա՝ 36, մասնակցած՝ 16 դատախազ (44%):[66]

---

[62] ՀՀ օրենքը ռազմական ոստիկանության մասին, 21 դեկտեմբերի 2006թ., 1 (1), 4 (1) (1):
[63] ՀՀ օրենքը օպերատիվ-հետախուզական գործունեության մասին, 22 հոկտեմբերի 2007թ., հոդված 8(1)1.1.
[64] ՀՀ ԱՆ, № //8297-2023, 17 փետրվարի 2023թ.:
[65] ՀՀ ԱՆ, № //8297-2023, 17 փետրվարի 2023թ.; տես նաև՝ տես նաև՝ ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2021թ. տարեկան հաշվետվություն, էջ 2-3, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=43162693d2cba48e4896&size_mode=1; ՀՀ ԱՆ, ՄԻՊ 2022թ. տարեկան հաշվետվություն, էջ 1, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=8816640f5b3a56b9b4345&size_mode=1:
[66] ՀՀ ԱՆ, № //8297-2023, 17 փետրվարի 2023թ.; տես նաև՝ տես նաև՝ ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2021թ. տարեկան հաշվետվություն, էջ 7-8, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=43162693d2cba48e4896&size_mode=1.

Վերապատրաստումներն իրականացվել են Արդարադատության ակադեմիայի ուսումնական ծրագրով նախատեսված «Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր», «ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր» և «ՀՀ քրեական նոր օրենսգիրք և ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրք» թեմաներով:[67]

Մշտադիտարկման արդյունքները. դատավորների վերապատրաստում

Ըստ Արդարադատության նախարարության տրամադրած տեղեկության՝ 2020-2022թթ. ընթացքում կյանքի իրավունք թեմայով վերապատրաստվել են հետևյալ թվով դատավորներ. 2020թ.՝ 45%, 2021թ.՝ 39,5%, 2022թ.՝ 34%:[68]

ՀՀ արդարադատության ակադեմիայի վերապատրաստման ուսուցման ծրագրում ընդգրկվել է «ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր» դասընթացը, որի առարկայական կուրսում, որպես առանձին թեմա, նախատեսվել են կյանքի դեմ ուղղված հանցագործություններին առնչվող հարցերը:[69]

Վերապատրաստման ուսուցման ծրագրում ընդգրկվել է նաև «Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր» դասընթացը:[70] «ՀՀ սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության արդի միտումները», «ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր» դասընթացները:[71]

Գործողություն 2

Բարձրացնել կյանքի իրավունքի վերաբերյալ զորակոչիկների, զինծառայողների իրազեկվածությունը

[67] ՀՀ ԱՆ, № //8297-2023, 17 փետրվարի 2023թ.; ՀՀ ԱՆ, ՀՀ ԱՆ, ՄԻՊ 2022թ. տարեկան հաշվետվություն, էջ 2-3, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=8816640f5b3a56b9b4345&size_mode=1:
[68] ՀՀ ԱՆ, № //8297-2023, 17 փետրվարի 2023թ.:
[69] Կիսամյակային հաշվետվություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ, 20 հուլիսի, 2020 թ., էջ 20-21, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=63645f2bc2b55978b6020&size_mode=1; ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 3, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=976038ef7fd6eba6832&size_mode=1; ՀՀ ԱՆ, Առաջին կիսամյակային հաշվետվություն մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի իրականացման 2022թ., էջ 2-5.
ՀՀ ԱՆ, ՀՀ ԱՆ, ՄԻՊ 2022թ. տարեկան հաշվետվություն, էջ 3, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=63645f2bc2b55978b6020&size_mode=1:
[70] Կիսամյակային հաշվետվություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ, 20 հուլիսի, 2020 թ., էջ 20-21; ՀՀ ԱՆ ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 4, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=976038ef7fd6eba6832&size_mode=1:
[71] Կիսամյակային հաշվետվություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ, 20 հուլիսի, 2020 թ., էջ 20-21, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=63645f2bc2b55978b6020&size_mode=1; ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2021թ. տարեկան հաշվետվություն, էջ 8-10, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=43162693d2cba48e4896&size_mode=1; ՀՀ ԱՆ, ՀՀ ԱՆ, ՄԻՊ 2022թ. տարեկան հաշվետվություն, էջ 3-4, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=8816640f5b3a56b9b4345&size_mode=1:

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ երկրորդ գործողությամբ նախատեսվում է բարձրացնել կյանքի իրավունքի վերաբերյալ զորակոչիկների, զինծառայողների իրազեկվածությունը: 2020-2022թթ. ընթացքում ակնկալվում է.

- զորամասերի և զինկոմիսարիատների 60%-ում փակցնել մարդու իրավունքների (կյանքի իրավունք, խոշտանգումների արգելք) վերաբերյալ պաստառներ,
- զորամասերում և զինկոմիսարիատներում իրականացնել կյանքի իրավունքի վերաբերյալ թվով 15 իրազեկման ակցիա,
- մշակել և զորամասերում ու զինկոմիսարիատներում տարածել մարդու իրավունքների վերաբերյալ առնվազն 3 տեղեկատվական նյութ, այդ թվում՝ իրավունքների պաշտպանության միջոցների մասին,
- մշակել և զանգվածային լրատվության միջոցներով տարածել զինված ուժերում մարդու իրավունքների վերաբերյալ առնվազն 3 տեսաձայնագրություն:

Ակնկալվում է, որ այս տեղեկատվական միջոցառումների իրականացմամբ և կյանքի իրավունքի վերաբերյալ զորակոչիկների ու զինծառայողների իրազեկվածության բարձրացմամբ կնվազեն ԶՈՒ-ում մահվան դեպքերը:

Գործողության կատարման պատասխանատու մարմինը ՀՀ պաշտպանության նախարարությունն է, համակատարող մարմինները՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը՝ համաձայնությամբ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը՝ համաձայնությամբ, Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակը:

Ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

Մշտադիտարկման արդյունքները. Պաստառներ զորամասերի և զինկոմիսարիատների 60%-ում

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկության՝ 2022թ. դեկտեմբերի դրությամբ՝ ՀՀ ՊՆ և Երևանում ԵԽ գրասենյակի համագործակցությամբ տպագրվել են **«կյանքի իրավունք»** և **«խոշտանգումների արգելք»** թեմաներով տեղեկատվական պաստառներ, որոնք փակցվել են ՊՆ Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության բոլոր տարածքային ստորաբաժանումներում և ԶՈՒ բոլոր զորամասերում՝ բացառությամբ նոր կազմավորված զորամասերի, անձնակազմի համար տեսանելի վայրերում:[72]

Մարդու իրավունքների վերաբերյալ պաստառների առկայության դիտարկման նպատակով «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի մշտադիտարկող խումբը 2020թ. օգոստոս ամսին այցելել էր զինկոմիսարիատներ Երևանում և բոլոր մարզերում: Կյանքի իրավունքին նվիրված պաստառները փակցված են եղել դիտարկված 39 զինկոմիսարիատներից կամ տարածքային ստորաբաժանումներից 35-ում: Արարատի, Մասիսի և Ստեփանավանի

[72] ՊՆ/510-ԳՔ/1208, 7 մարտի 2023; ԵԽ երևանյան գրասենյակ, Հայաստանի զորամասերին և զինկոմիսարիատների կտրամադրվեն զորակոչիկներին և ծառայողների համար մշակված կյանքի իրավունքի վերաբերյալ պաստառի 1000 օրինակ, 29 մայիսի, 2020թ., https://www.coe.int/hy/web/yerevan/home/-/asset_publisher/KZTSm796kFrq/content/1-000-copies-of-poster-on-the-right-to-life-aimed-at-military-conscripts-and-servicepersons-of-armenia-to-be-disseminated-amongst-the-military-bases-a?_101_INSTANCE_KZTSm796kFrq_viewMode=view/:

բաժանմունքներում բացակայել են կյանքի իրավունքի վերաբերյալ պաստառները: Խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին նվիրված պաստառը փակցված է եղել դիտարկված 39 զինկոմիսարիատներից կամ տարածքային ստորաբաժանումներից 30-ում: Աբովյանի, Ապարանի, Թալինի, Ճամբարակի, Նաիրիի, Ախուրյանի, Աշոցքի բաժանմունքներում բացակայել են խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի վերաբերյալ պաստառները: Միայն մեկ դեպքում՝ Երևանի երկրորդ զինկոմիսարիատում, մշտադիտարկողին չեն թույլատրել մուտք գործել զինկոմիսարիատի տարածք:

ԽԵ ՀԿ-ն չի մշտադիտարկել պաստառների առկայությունը Արցախի զինկոմիսարիատներում ու զորամասերում, Հայաստանի զորամասերում, ինչպես նաև 2020թ. սեպտեմբերից մինչև 2022թ. դեկտեմբերը Հայաստանում զինկոմիսարիատներում:

Պաստառների բովանդակությունը

Կյանքի իրավունքին նվիրված պաստառի նմուշը հասանելի է առցանց:[73] Այն պարունակում է տեղեկատվություն յուրաքանչյուրի կյանքի իրավունքի, դրա պաշտպանության ոլորտում պետության պարտավորությունների մասին, այդ թվում՝ նաև զորակոչի և զինվորական ծառայության ժամանակ: Պաստառում ներառված են այն մարմինների տվյալները, որոնց զինծառայողը կարող է դիմել իրավունքի խախտման դեպքում:

Խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքի մասին պաստառը ներառում է տեղեկատվություն խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի սահմանումների, զինված ուժերի անձնակազմին խոշտանգումից և վատ վերաբերմունքի այլ ձևերից զերծ պահելու պետության պարտականությունների վերաբերյալ: Պաստառում ներկայացվում են նաև այն մարմինների տվյալները, որոնց հետ կարելի է կապվել խոշտանգումներից և վատ վերաբերմունքի այլ ձևերից զերծ մնալու իրավունքի խախտման դեպքում:[74]

Պաստառների տեսանելիությունը և արդյունավետությունը

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի մշտադիտարկող խումբը 2020թ. ամառային, 2021թ. ձմեռային, 2022թ. ամառային և ձմեռային զորակոչերի ընթացքում իրականացրել է դիտարկումներ և զորակոչիկների շրջանում հարցազրույցներ է անցկացրել Երևանի և բոլոր մարզերի զինկոմիսարիատներում ու տարածքային ստորաբաժանումներում: Խմբի նպատակն է եղել պարզել՝ արդյոք զորակոչիկները տեսել են զինկոմիսարիատներում փակցված պաստառներ և, եթե այո, որքանով են դրանք օգտակար համարել:

[73] Կյանքի իրավունքին նվիրված պաստառը՝ այստեղ՝ https://rm.coe.int/poster-right-to-life-hrwaf/16809e85bb:
[74] ԵԽ երևանյան գրասենյակ, Տպագրվել է Հայաստանի զորակոչիկների և զինծառայողների համար մշակված խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքի մասին պաստառի հազար օրինակ, 22 հուլիսի, 2020թ., https://www.coe.int/hy/web/yerevan/home/-/asset_publisher/KZTSm796kFrq/content/poster-on-prohibition-of-torture-and-other-forms-of-ill-treatment-prepared-for-and-disseminated-among-the-military-conscripts-and-servicepersons-in-ar?_101_INSTANCE_KZTSm796kFrq_viewMode=view/:

2020թ. ամառային զորակոչի ընթացքում հարցված 196 զորակոչիկների 67%-ը ասել է, որ զինկոմիսարիատում չի տեսել մարդու իրավունքների վերաբերյալ պաստառներ, իսկ 33%-ը՝ տեսել է:[75]

Պաստառները նկատած հարցվածների կեսը նշել է, որ չի կարդացել դրանք: Հարցված զորակոչիկների կեսը պաստառների գոյության մասին տեղեկանալուց հետո նաև հրաժարվել է գնալ և տեղում կարդալ դրանք: Պաստառներին ծանոթանալու պատրաստակամություն է հայտնել 17%-ը, ովքեր այնուհետև նշել են, որ սովորեցին, որ վերադասը կամ այլ զինծառայողներ չեն կարող իրենց կամ այլ զինծառայողների նկատմամբ բռնություն կիրառել, ինչպես նաև, որ զինծառայողները կարող են անվճար բժշկական օգնություն ստանալ: Ոմանք նշել են նաև, որ իմացան, թե ինչ մարմինների կարող են դիմել իրենց խախտված իրավունքների վերականգնման համար: Հարցվածների 9%-ը նշել է, որ բանակում պաստառները դժվար թե օգնեն իրենց:

2021թ. ձմեռային զորակոչի ընթացքում հարցված 527 զորակոչիկների 67% ասել է, որ մարդու իրավունքների վերաբերյալ պաստառներ զինկոմիսարիատում չի տեսել, իսկ 33%-ը՝ տեսել է:[76]

Հարցված զորակոչիկներից պաստառները կարդացածներից 22,7%-ը ոչինչ չի հիշել, իսկ 2,3%-ը ոչինչ չի հասկացել: Այն զորակոչիկները, որոնք կարդացել և հասկացել են պաստառների բովանդակությունը (20,5%), նշել են, որ տեղեկացան, որ բանակում չեն կարող ենթարկվել խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի, կարող են անվճար բժշկական օգնություն ստանալ, դիմել ՊՆ «Թեժ գծին», մեկնել արձակուրդ, կապ հաստատել իրենց հարազատների հետ, ինչպես նաև, որ կարող է սահմանափակվել իրենց ազատ տեղաշարժի իրավունքը: Այն զորակոչիկները, որոնք նկատել են պաստառները, բայց չեն կարդացել, պատճառաբանել են, որ շտապել են, «խառն» են եղել, ուշադիր չեն եղել, հետաքրքիր չի եղել, չեն մտածել, որ կարող է իրենց օգտակար լինել, հայերեն կարդալուն չեն տիրապետել:

2022թ. ամառային զորակոչի ընթացքում հարցված 375 զորակոչիկներից 66,1%-ը պաստառները չի տեսել, 18,4%-ը տեսել է, բայց չի կարդացել, միայն 7,7%-ն է և՛ տեսել, և՛ կարդացել պաստառները, 5%-ը՝ ուշադրություն չի դարձրել: Ընդ որում, մշտադիտարկող խմբի անդամը պաստառները չնկատած հարցվածներից մեկին ուղեկցել է դեպի այն ու բացատրել: Տվյալ զորակոչիկին շատ օգտակար է եղել պաստառի բովանդակությունը, սակայն նա չի կարողացել այն կարդալ, քանի որ Ռուսաստանից է եկած եղել, որտեղ հայերեն տառերը չի սովորել: Երեք հոգի չի հիշել՝ արդյոք պաստառ նկատել է, թե՝ ոչ, իսկ մեկը՝ պաստառներին նայելու սովորություն ընդհանրապես չի ունեցել:

Նրանք, **ովքեր տեսել են պաստառները, բայց չեն կարդացել**, հիմնականում շտապել են և ժամանակ չեն ունեցել: Բացի այդ՝ նրանց պաստառները կա՛մ ընդհանրապես չեն հետաքրքրել, կա՛մ չեն հետաքրքրել,

[75] «Խաղաղության երկխոսություն» ՀԿ, Ա. Հարությունյան, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունից բխող 2020-2022 թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում պաշտպանական ոլորտի միջոցառումների մշտադիտարկման արդյունքները, ՁԵԿՈՒՅՑ 2020թ. հունվարի 1-2021թ. մայիսի 31, Վանաձոր 2021թ., էջ 25, նկար 2, https://peacedialogue.am/2021/08/06/hrap_defense_arm/:

[76] «Խաղաղության երկխոսություն» ՀԿ, Ա. Հարությունյան, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունից բխող 2020-2022 թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում պաշտպանական ոլորտի միջոցառումների մշտադիտարկման արդյունքները, ՁԵԿՈՒՅՑ 2020թ. հունվարի 1-2021թ. մայիսի 31, Վանաձոր 2021թ., էջ 26, նկար 3, https://peacedialogue.am/2021/08/06/hrap_defense_arm/:

քանի որ դրանց բովանդակությունը երկար կամ ձանձրալի է եղել: Հարցվողներից մեկը հայերեն կարդալ չի իմացել, մյուսը չի մտածել, որ պաստառների բովանդակությունը կարող է իրեն պետք գալ, մեկ ուրիշը կարդալ չի սիրել, մյուսը ասել է, որ արդեն իսկ գիտի իր իրավունքները:

Նրանք, **ովքեր կարդացել են պաստառները**, ասել են, որ պաստառները իրավունքների և պարտականությունների մասին են: Ոմանք ոչ կոնկրետ, այլ մոտավոր են հիշել դրանց բովանդակությունը կամ չեն հիշել: Պաստառները կարդացած զորակոչիկների մոտ տպավորվել են արձակուրդ գնալու, բժշկական օգնություն ստանալու, խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի չարժանանալու, հրամանատարության, ինչպես նաև թեժ գիծ զանգահարելու մասին տեղեկությունները: Զորակոչիկները նաև ուշադրություն են դարձրել զինկոմիսարիատներում փակցված այլ պաստառներին՝ նվիրված զենքերին, ականներին, հայրենասիրությանը, հերոսներին և հայրենիքի պաշտպանությանը:

2022թ. ձմեռային զորակոչի ընթացքում հարցված 325 զորակոչիկներից 72%-ը չի տեսել որևէ պաստառ, 16,6%-ը տեսել է, բայց չի կարդացել, 6,5% տեսել և կարդացել է, իսկ 4,6%-ը ուշադիր չի եղել կամ չի հիշել:

Այսպիսով, համադրելով վերոնշյալ չորս հարցումները, կարելի է տեսնել, որ զորակոչիկների մեծամասնությունը (66-72%) չի տեսել զինկոմիսարիատներում փակցված մարդու իրավունքների վերաբերյալ պաստառներ: 2020 և 2021 թվականներին հարցվածների 33%-ն է տեսել պաստառները, իսկ 2022թ. այդ թիվը նվազել է՝ դառնալով 16-18%: Պաստառները կարդացածների մոտ հիմնականում տպավորվել են արձակուրդին, անվճար բժշկական օգնությանը, վերադասի և այլ զինծառայողների կողմից բռնություն չկիրառելուն, ՊՆ «Թեժ գծին» դիմելու մասին տեղեկությունները:

Ամփոփելով կարելի է նշել, որ չնայած պաստառների բովանդակությունն օգտակար է եղել կյանքի իրավունքի և խոշտանգումներից ու վատ վերաբերմունքի այլ ձևերից զերծ մնալու իրավունքի մասին իրազեկելու տեսանկյունից, զինկոմիսարիատներում դրանց փակցված լինելը, սակայն, զորակոչիկների մեծ մասը չի նկատել, նկատածների կեսն էլ դրանք չի կարդացել: Հարցվածների կեսը նաև հրաժարվել է գնալ և տեղում կարդալ դրանք:

Անհրաժեշտ է հետագա միջոցներ մտածել՝ պաստառների բովանդակությունը զորակոչիկներին ծանոթ դարձնելու ուղղությամբ: Որպես այդպիսի մեկ միջոց կարելի է, օրինակ, այդ պաստառների, նրանց բովանդակության և դրանց փակցված լինելու վայրերի մասին տեղեկություն տարածել սոցիալական մեդիայով և հեռուստատեսությամբ:

Մշտադիտարկման արդյունքները. Զորամասերում և զինկոմիսարիատներում կյանքի իրավունքի վերաբերյալ 15 իրազեկման ակցիաներ

Ըստ Պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկության՝ 2020-2022թ. ընթացքում զորամասերում և զինկոմիսարիատներում թվով 15 իրազեկման ակցիաները իրականացվել են ՊՆ մարդու իրավունքների և

բարեվարքության կենտրոնի (ՄԻԲԿ) կողմից:[77] Զորամասերում ավագ սպա-իրավաբանների, հրամանատարների՝ սոցիալ-իրավական գծով օգնական սպաների կամ ԲՀԱ գծով տեղակալների կողմից պարբերաբար անցկացվել են «Կյանքի իրավունք» և «Խոշտանգումների արգելք» թեմայով քննարկումներ: Այդ քննարկումների ընթացքում օգտագործվել են համապատասխան միջազգային, ներպետական իրավական իրավական ակտեր և պրակտիկ նյութեր (հրամաններ, կարգադրություններ, դատավճիռներ):[78]

Որպես իրազեկման ակցիայի օրինակ՝ ՊՆ-ն նաև նշել է Երևանում ԵԽ գրասենյակի հետ համագործակցությամբ մշակված և 2021թ. տպագրված «Զինծառայողների քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ձեռնարկի առաքումը զորամասեր:[79]

ԽԵ հնարավորություն չի ունեցել մշտադիտարկելու զորամասերում և զինկոմիսարիատներում նախատեսված իրազեկման ակցիաները: Հնարավոր չէ նաև գնահատել այդ իրազեկման ակցիաների ազդեցությունը զինված ուժերում մահվան դեպքերի թվի փոփոխության վրա:

Մշտադիտարկման արդյունքները. Զորամասերում և զինկոմիսարիատներում մարդու իրավունքների վերաբերյալ առնվազն 3 տեղեկատվական նյութերի տարածում

Ինչպես նշվեց նախորդ բաժնում, ԵԽ համագործակցությամբ մշակված «Զինծառայողների քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ձեռնարկի առաքումը զորամասեր ՊՆ-ն համարել է որպես իրազեկման ակցիա:

Ինչ վերաբերում է առնվազն 3 տեղեկատվական նյութերի տարածմանը, ապա ըստ ՄԻՊ ԳԾ 2020թ. հաշվետվության՝ 2020թ. սեպտեմբերի 27-ին Արցախի և Հայաստանի դեմ սանձազերծած պատերազմի կապակցությամբ արձակվել է մարտական գործողությունների ընթացքում զինված ուժերի անձնակազմի կողմից Միջազգային մարդասիրական իրավունքի դրույթների պահպանման և հակառակորդի զինծառայողների նկատմամբ հակահրավական գործողություններ կատարելուց զերծ մնալու վերաբերյալ ՀՈՒ ԳԾ պետի համապատասխան հրաման:[80]

Բացի այդ, ՊՆ-ից տեղեկացել ենք, որ 2022թ. ՊՆ և ՀՈՒ համապատասխան վարչությունների կողմից նախապատրաստվել և զորամասեր են ուղարկվել մարդու իրավունքների՝ այդ թվում, իրավունքների պաշտպանության միջոցների մասին 5 տեղեկատվական նյութ, որոնցից 2-ը վերաբերել է կանանց իրավունքներին: Նյութերը պարունակել են ՀՀ օրենսդրության, զինվորական ծառայությունը կանոնակարգող, իրավունքներ սահմանող այլ ներպետական ու

[77] ՊՆ, ՀՀ ՊՆ մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի պետն այցելել է ՊՆ Զ ԵՎ ԶՀԾ տարածքային ստորաբաժանում, 18 հունվարի 2022թ., https://mil.am/hy/news/10279; ՊՆ, Իրազեկման այց զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանում, 1 հուլիսի 2022թ., https://mil.am/hy/news/10812:

[78] ՊՆ/510-ԳՔ/1208, 7 մարտի 2023; տես նաև՝ ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2021թ. տարեկան հաշվետվություն, էջ 13-14, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=43162693d2cba48e4896&size_mode=1.

[79] ՊՆ/510-ԳՔ/1208, 7 մարտի 2023; ԵԽ, Արմեն Գրիգորյան, ձեռնարկը «Զինծառայողների քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին», նոյեմբեր 2021թ., https://rm.coe.int/handbook-human-rights-in-rmed-forces/1680a8f5d1:

[80] ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 5, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=976038ef7fd6eba6832&size_mode=1:

միջազգային իրավական ակտերի դրույթներ: Այդ տեղեկատվական նյութերը համացանցում առկա չեն[81] և ԽԵ-ին չեն տրամադրվել: Նշվել է, որ դրանք նախատեսված են ծառայողական օգտագործման համար:[82]

ԽԵ-ին անհասկանալի է, թե ինչու մարդու իրավունքների մասին տեղեկատվական նյութերը հրապարակման ենթակա չեն՝ հատկապես հաշվի առնելով, որ այդ նյութերի հասանելիությունը պարտադիր զինվորական ծառայության ենթակա քաղաքացիներին կարող է կանխարգելիչ ազդեցություն ունենալ ապագայում իրենց ծառայության ընթացքում իրավունքների խախտման գործում:

Մշտադիտարկման արդյունքները. զորամասերում և զինկոմիսարիատներում մարդու իրավունքների վերաբերյալ առնվազն 3 տեսաձայնագրությունների տարածում

«Զինուժ»-ի 2020թ. հունիսի 6-ի թողարկման շրջանակներում ցուցադրվել է անիմացիոն տեսանյութ, որում ներկայացվել է, որ ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի՝ անկախ սեռից, կարող է ծառայության անցնել ՀՀ զինված ուժերում, եթե համապատասխանում է սահմանված պահանջներին: Կանայք և տղամարդիկ ունեն կամավոր զինծառայության անցնելու հավասար հնարավորություններ, օրինակ՝ ստանալ ռազմական կրթություն, անցնել պայմանագրային զինվորական ծառայութան կամ առաջխաղացում ունենալ: Նշվել է նաև, որ զինծառայողները համազգեստով քաղաքացիներ են՝ ունենալով նույն իրավունքներրն ու ազատությունները, ինչ մյուս քաղաքացիները: Զինծառայողների համար գործում են որոշ հատուկ կանոններ, մի շարք սոցիալական երաշխիքներ և իրավունքների պաշտպանության միջոցներ:[83] Նույն տեսանյութը ցուցադրվել է նաև «Զինուժ»-ի 2020թ. հունիսի 20-ի թողարկմանը:[84]

«Զինուժ»-ի 2020թ. հունիսի 13-ի թողարկման շրջանակներում անդրադարձ է կատարվել ՀՀ զինված ուժերում ձևավորված կանանց խորհուրդներին: Նշվել է, որ դրանք հասարակական հիմունքներով մշտապես գործող մարմիններ են՝ զորամասի հրամանատարի անմիջական ղեկավարության ներքո՝ բաղկացած 3-7 անդամից: Խորհրդի անդամներն ընտրվում են զորամասի զինծառայողների կողմից բաց քվերակությամբ 1 տարի ժամկետով: Ըստ տեսանյութի՝ կանանց խորհուրդների վերջանական նպատակն է կին զինծառայողների ծառայության շարժառիթավորումը և զինվորական ծառայության գրավչության բարձրացումը:[85]

«Զինուժ»-ի 2020թ. օգոստոսի 8-ի թողարկման շրջանակներում անիմացիոն ֆիլմի միջոցով անդրադարձ է կատարվում ռազմական կրթությանը: Նշվում է, որ ռազմական համալսարանում կրթությունն անվճար է և որակյալ, ապահովվում է բարձր աշխատավարձ, երաշխավորվում է կարիերային առաջընթաց, տրվում են սոցիալական երաշխիքներ: Շեշտվում է, որ ռազմական

[81] ՊՆ/510-ԳՔ/967-2021, 25 փետրվարի 2021թ.:
[82] ՊՆ/510-ԳՔ/1208, 7 մարտի 2023:
[83] ԶԻՆՈՒԺ MEDIA, Զինուժ, 06.06.20, 6 հունիսի 2020թ., 22:57 րոպեից, https://www.youtube.com/watch?v=K5mQn7wFG0I:
[84] ԶԻՆՈՒԺ MEDIA, Զինուժ, 20.06.20, 20 հունիսի 2020թ., 33:51 րոպեից, https://www.youtube.com/watch?v=-fFa_-QFetU:
[85] ԶԻՆՈՒԺ MEDIA, Զինուժ, 13.06.20, 13 հունիսի 2020թ., 25:43 րոպեից, https://www.youtube.com/watch?v=kJCC43LvNZE:

համալսարան կարող են ընդունվել ՀՀ քաղաքացիները՝ անկախ սեռից, և ներկայացվում է ընդունելության կարգը:[86]

2021թ. փետրվարի 5-ին ՀՀ պաշտպանության նախարարությունը հրապարակել է անիմացիոն ֆիլմ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ: Տեսանյութում նշվում է, որ որպես համազգեստով քաղաքացիներ՝ զինծառայողներն օգտվում են մարդու պաշտպանության նույն մեխանիզմներից, ինչ մյուս քաղաքացիները: Խորհրդատվություն ստանալու կամ իրավունքների ենթադրյալ խախտումների դեպքերում զինծառայողները կարող են դիմել իրավունքների պաշտպանության ներքին և արտաքին մեխանիզմների՝ անմիջական հրամանատարին, ՊՆ մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնին՝ զանգահարելով «Թեժ գիծ» կամ ուղարկելով նամակ էլ. հասցեին, կին զինծառայողների դեպքում՝ նաև Գլխավոր շտաբում գործող կին զինծառայողների հարցերով զբաղվող ստարաբաժանմանը, Կանանց խորհուրդներին, մարդու իրավունքների պաշտպանին՝ զանգահարելով «Թեժ գիծ» կամ ուղարկելով գրավոր բողոք, Գլխավոր շտաբի «Վստահության գիծ», դատարան: Շեշտվում է, որ այս կառույցներին դիմելիս անձնական տվյալները պաշտպանվում են և չեն հրապարակվում առանց անձի համաձայնության:[87]

2021թ. հոկտեմբերի 22-ին Եվրոպայի խորհուրդը հրապարակել է 2 անիմացիոն տեսանյութ. մեկը՝ ՀՀ զինված ուժերում կանանց ներգրավման մասին անիմացիոն տեսանյութ, որը ներկայացնում է կանանց համար զինվորական ծառայության հավասար հնարավորությունների, մասնագիտական պարտականությունները անձնական կյանքի հետ համատեղելու և խաղաղապահ առաքելություններում կանանց ներգրավվածության խորագրերը:[88] Մյուսը ֆիլմը նվիրված է զինծառայողների սոցիալական երաշխիքների և արտոնությունների համակարգի թեմային՝ ընդգծելով բնակարանային ապահովությունը և զինված ուժերում ծառայողներին տրամադրվող անվճար բժշկական օգնությանն ու սպասարկմանը:[89]

ԽԵ այս երկու տեսաձայնագրությունների վերնագրերը անգլերեն են, և դրանք տեղադրված են ոչ թե YouTube, այլ Vimeo կայքում, ինչն ակնհայտ ավելի դժվար կարող է դարձնել տեսաձայնագրություններին առնչվելը այն անձանց համար, ովքեր տեղյակ չեն տվյալ նյութերի մասին:

2021թ. դեկտեմբերի 14-ին ԵԽ-ն կրկին Vimeo հրապարակել է անիմացիոն տեսանյութ, որը նույնպես վերաբերում է Հայաստանում զինծառայողների սոցիալական երաշխիքների և արտոնությունների համակարգին:[90]

2021թ. նոյեմբերի 24-ին հրապարակվել է «Կանանց ներգրավվածությունը ԶՈՒ-երում» տեսանյութը, որը տեղադրված է ՀՀ ՊՆ կայքում և առկա է «Զինուժ Media» ալիքում, սակայն այն գտնվում է «Unlisted» (չցուցակված)

[86] ԶԻՆՈՒԺ MEDIA, Զինուժ, 08.08.20, 8 օգոստոսի 2020թ., 25:21 րոպեից, https://www.youtube.com/watch?v=XzbVWgNV6MU&t=1519s:
[87] ՊՆ, Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները (տեսահոլովակ), 5 փետրվարի 2021թ., https://mil.am/hy/news/8886:
[88] CoE, Military Service of Women, 22 հոկտեմբերի 2021թ., https://vimeo.com/637863329.
[89] CoE, The system of social guarantees and benefits for military servicepersons (Part I), 22 հոկտեմբերի 2021թ., https://vimeo.com/637865467:
[90] CoE, Sixth animation film HRWAF.mp4, 14 դեկտեմբերի 2021թ., https://vimeo.com/656465951:

կարգավիճակում: Այդ պատճառով յութուբյան էջում տեսանյութը անհնար է գտնել. այն դիտելու համար պետք է ունենալ տեսանյութի հղումը:[91]

Վերոնշյալ տեսանյութերը պատրաստվել են Եվրոպայի խորհրդի «Մարդու իրավունքները և կանայք Հայաստանի զինված ուժերում. II փուլ» ծրագրի շրջանակներում՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ համագործակցությամբ: Ծրագիրն իրականացվում է Եվրոպայի խորհրդի՝ Հայաստանի համար 2019-2022թթ. ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորում են Գերմանիան, Իռլանդիան, Լիխտենշտեյնը և Շվեդիան:

Այսպիսով, չնայած ՊՆ-ն ԵԽ համագործակցության շրջանակներում պատրաստել է մի շարք տեսանյութեր ԶՈՒ մարդու իրավունքների՝ այդ թվում, կանանց հավասարության վերաբերյալ, սակայն այդ իրազեկող տեսանյութերի հասանելիություն լայն հանրությանը՝ հատկապես երիտասարդությանը, պարզ չէ: Հեռուստատեսություն, որով հեռարձակվում է «ԶԻՆՈՒԺ» հաղորդումը, երիտասարդներն ավելի հազվադեպ են դիտում, քան ավելի մեծ տարիքով անձինք. Vimeo կայքից պարբերաբար օգտվողները Հայաստանում շատ չեն, իսկ YouTube կայքի Unlisted բաժնում ներառված տեսանյութը չի կարող նույնիսկ առաջարկվել դիտորդներին մեկ այլ նմանատիպ տեսանյութ դիտելու դեպքում:

Գործողություն 3

Զինված ուժերում ամրապնդել հանդուրժողականության և փոխադարձ հարգանքի մթնոլորտը

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ կյանքի իրավունքի ապահովմանն ուղղված երրորդ գործողությամբ նախատեսվել է 2020-2022թթ. ընթացքում զինված ուժերում ամրապնդել հանդուրժողականության և փոխադարձ հարգանքի մթնոլորտը, որով ակնկալվում է նվազեցնել ԶՈՒ-ում ոչ կանոնադրային հարաբերությունների հետևանքով մահվան դեպքերը: Նման մթնոլորտի ամրապնդման համար ակնկալվում է.

- ուսումնասիրություն կատարել ԶՈՒ-ում անհանդուրժողականության դրսևորումների պատճառների, նպաստող գործոնների և դրանց հաղթահարման ուղիների վերաբերյալ,
- ինչպես նաև զորամասերի 30%-ում կազմակերպել հոգեբանների դասախոսություններ:

Գործողության կատարման համար պատասխանատու մարմինը ՀՀ պաշտպանության նախարարությունն է, իսկ համակատարող մարմինները՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը՝ համաձայնությամբ, Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակը:

Ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

Մշտադիտարկման արդյունքները

[91] ՊՆ, Կանանց ներգրավվածությունը զինված ուժերում; 25 նոյեմբերի 2021թ., https://mil.am/hy/news/10141; ԶԻՆՈՒԺ MEDIA, Կանանց ներգրավվածությունը ԶՈՒ-ում, 25 նոյեմբերի 2021թ., https://www.youtube.com/watch?v=a1xvSHILUMI:

Ըստ ՊՆ տեղեկության՝ 2022թ. օգոստոսին բոլոր զորամիավորումներում և զորամասերում անցկացվել են «Հայրենիքի պաշտպանության գործում միմյանց նկատմամբ փոխադարձ հարգանքի դրսևորման և հանդուրժողականության մթնոլորտի պահպանման կարևորությունը» թեմայով պարապմունքներ:[92]

Զինծառայողների հետ տարվող հոգեբանական աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2022թ. ՀՀ ԶՈՒ ԲՀԱ վարչությունում մշկվել և տպագրվել է «Զինծառայողների բացասական հոգեվիճակները, դրանց կանխարգելման և հաղթահարման ուղիները» մեթոդագործնական ձեռնարկը:[93]

Մշտադիտարկման արդյունքները. ուսումնասիրություն

2020թ. ընթացքում Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի հետ համագործակցության շրջանակներում մշակվել է «ՀՀ զինված ուժերում ոչ ֆորմալ փոխհարաբերությունների վարքային նորմերը և զինվորների մոտ քրեական ենթամշակույթի դրսևորման սոցիալական և հոգեբանական հիմնախնդիրների վերաբերյալ» հետազոտության մեթոդաբանությունը, որի իրականացումը 2022թ. սեպտեմբերի 13-14-ի մարտական գործողություններով պայմանավորված հետաձգվել է:[94]

Մշտադիտարկման արդյունքները. հոգեբանների դասախոսություններ զորամասերի 30%-ում

Ըստ ՊՆ գրության՝ 2020թ. սեպտեմբերի 1-ից նոյեմբերի 28-ը նախատեսված է եղել կազմակերպել սպա-հոգեբանների դասընթացներ, այդ թվում՝ «Հանդուրժողականության և փոխադարձ հարգանքի մթնոլորտի ամրապնդում» թեմայով դասախոսություն:[95] 2020թ. սեպտեմբերի 1-ից մեկնարկել է սպա-հոգեբանների եռամսյա վերապատրաստման դասընթացների ծրագիրը:[96] Դասընթացները, սակայն, մարտական գործողությունների պատճառով ընդհատվել են սեպտեմբերի 27-ից:[97] Դասախոսությունների թեմաները մշակվել են **«ԱՐԱՐ»** քաղաքակրթական հետազոտությունների հիմնադրամի հետ համագործակցությամբ:[98]

2022թ. պլանավորվել և անցկացվել են զորամասերի հրամանատարների ԲՀԱ գծով տեղակալների և սպա-հոգեբանների ամենամյա վերապատրաստման դասընթացներ, հավաք-խորհրդակցություններ, ինչպես նաև համաբանակային

[92] ՊՆ/510-ԳՔ/1139, 2 մարտի 2023թ.; տես նաև՝ ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2021թ. տարեկան հաշվետվություն, էջ 15-16, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=43162693d2cba48e4896&size_mode=1:
[93] ՊՆ/510-ԳՔ/1139, 2 մարտի 2023թ.:
[94] ՊՆ/510-ԳՔ/1139, 2 մարտի 2023թ.; ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 6, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=976038ef7fd6eba6832&size_mode=1; ՊՆ/510-ԳՔ/968-2021, 25 փետրվարի 2021թ.:
[95] ՊՆ/510-ԳՔ/2711-20, 2 սեպտեմբերի, 2020թ.:
[96] ՊՆ/510-ԳՔ/2711-20, 2 սեպտեմբերի, 2020թ.; ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 7, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=976038ef7fd6eba6832&size_mode=1; ԶԻՆՈՒԺ MEDIA, Զինուժ, 05.09.20, 5 սեպտեմբերի 2021թ., 27:59 րոպեից, https://www.youtube.com/watch?v=ntDYC1N451s; ՊՆ, Մեկնարկել է սպա-հոգեբանների եռամսյա վերապատրաստման ծրագիրը, 1 սեպտեմբերի 2020թ., https://mil.am/hy/news/8324:
[97] ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 7, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=976038ef7fd6eba6832&size_mode=1.
[98] ՊՆ/510-ԳՔ/2230-2020, 16 հուլիսի, 2020թ:

կոնֆերանսներ: 2022թ. առաջին կիսամյակում ՌԴ ռազմական համալսարանում վերապատրաստվել են 8 սպա-հոգեբաններ:[99]

ԽԵ-ին հնարավոր չի եղել մշտադիտարկել, թե արդյոք սպա-հոգեբանների վերապատրաստումն ընդգրկել է զորամասերի 30%-ը տվյալ տեղեկատվությանը հասանելիություն չունենալու պատճառով: Բացի այդ՝ 2020-2022թթ. ընթացքում մի շարք տարածքների ու զորամասերի կորստի պայմաններում նույնիսկ ՊՆ-ին է դժվար լինելու հաշվարկելու՝ արդյոք տվյալ գործողության կատարումը ներառել է զորամասերի 30%-ը:

Զորամասերում հոգեբանների դասախոսությունների կազմակերպումը ԳԾ-ում նշվում է որպես զինված ուժերում հանդուրժողականության և փոխադարձ հարգանքի մթնոլորտն ամրապնդելու գործողության անմիջական ակնկալվող արդյունք: Սպա-հոգեբանների դասընթացները պետք է դիտարկել ոչ այնքան որպես գործողության անմիջական արդյունք, այլ դրա կատարմանը հասնելու միջոց: Այսինքն՝ ոչ թե հանդուրժողականության ապահովման արդյունքում են հոգեբանները դասընթացներ անցնում, այլ հոգեբանների դասընթացները նպաստում են զինված ուժերում հանդուրժողականության ամրապնդմանը:

Գործողություն 4

Սահմանել զինված ուժերում մահվան դեպքերի արագ և թափանցիկ քննության վերաբերյալ իրազեկման չափորոշիչներ

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ կյանքի իրավունքի ապահովմանն ուղղված չորրորդ գործողությամբ նախատեսվել է սահմանել զինված ուժերում մահվան դեպքերի արագ և թափանցիկ քննության վերաբերյալ իրազեկման չափորոշիչներ:

Այս գործողությամբ ակնկալվում է նվազեցնել զինված ուժերում մահվան դեպքերի վերաբերյալ քրեական գործերով մինչդատական վարույթի ընթացքում մարդու իրավունքների խախտման դեպքերը: Դրա իրականացման համար ակնկալվում է մինչև 2022թ. առաջին կիսամյակը ընդունել զինված ուժերում մահվան դեպքերի արագ և թափանցիկ քննության վերաբերյալ գերատեսչական ակտեր (ուղեցույցներ)՝ քննչական և դատավարական գործողությունների վերջնաժամկետների, եղանակների, տուժողների իրավահաջորդների/ներկայացուցիչների և հանրությանը իրազեկման պարբերականության վերաբերյալ:

Գործողության կատարման և անմիջական արդյունքի համար որպես պատասխանատու մարմին է սահմանվել ՀՀ գլխավոր դատախազությունը՝ համաձայնությամբ, իսկ համակատարող մարմիններն են արդարադատության նախարարությունը, պաշտպանության նախարարությունը, ՀՀ քննչական կոմիտեն՝ համաձայնությամբ, ՀՀ ոստիկանությունը, Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակը:

Ըստ ԳԾ փաստաթղթի՝ ֆինանսավորումը կատարվելու է օրենքով չարգելված աղբյուրներից, իսկ պետական բյուջեից ֆինանսավորում չի պահանջվում:

[99] ՊՆ/510-ԳՔ/1139, 2 մարտի 2023թ.:

Մշտադիտարկման արդյունքները

Ինչպես նշվել է վերևում, միջազգային կառույցները մատնանշել են, որ բանակում կյանքի իրավունքի ոչ արդյունավետ քննության պատճառները պայմանավորված են եղել քրեական արդարադատության համակարգային խնդիրներով՝ ներառյալ գործի երկար քննությամբ:[100]

2021թ. ընթացքում մշակվել և 2021թ. ապրիլի 4-ին արձակվել է «Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և քրեակատարողական հիմնարկներում մահվան դեպքերի արագ և թափանցիկ քննության չափորոշիչներ սահմանելու մասին» ՀՀ գլխավոր դատախազի N 38 հրամանը:[101] Նշված հրամանով ՀՀ զինվորական դատախազին և կայազորների զինվորական դատախազներին հանձնարարվել է, ի թիվս այլնի, ապահովել զինված ուժերում մահվան դեպքերով արագ և թափանցիկ քննության հրամանով սահմանված չափանիշները: Հրամանով սահմանվում են չափորոշիչներ, որոնք վերաբերում են նախաքննության ընթացքում հնարավոր բոլոր վարկածների առաջ քաշմանը և դրանց արագ ու զուգահեռ ստուգմանը, վկաների հարցաքննությանը, պաշտպանության միջոցների կիրառմանը, մահացած զինծառայողի վնասվածքների պատշաճ փորձաքննությանը, տուժողի իրավահաջորդի ներկայացրած տեղեկություններին, դեպքի վայրի զննությանը, ապացույցների ձեռքբերմանը, դատաբժշկական փորձաքննություններին և հստակ եզրակացություններին, օպերատիվ-հետախուզական տեղեկությունների ստուգմանը, վատ վերաբերմունքի կամ խոշտանգման արդյունքում ձեռք բերված ապացույցների անթույլատրելիությանը, հրամանատարական կազմի՝ իր պարտականությունների կատարմանը:[102]

Գլխավոր դատախազի 2021թ. ապրիլի 1-ի N 38 հրամանով սահմանված գործի քննության չափանիշները արտահայտել են այն խնդիրները, որոնք մատնանշվել են ՄԱԿ-ի, ԵԽ-ի մասնագիտացված մարմինների զեկույցներում և Հայաստանի դեմ բանակում ոչ մարտական պայմաններում կյանքի իրավունքի խախտման ՄԻԵԴ վճիռներում:[103] Հաշվի առնելով այս հանգամանքը՝ գտնում ենք, որ Գլխավոր դատախազի տվյալ որոշումը կարևոր քայլ է բանակում ոչ մարտական պայմաններում մահացությունների քննության արդյունավետությունն ապահովելու և կյանքի իրավունքի ընթացակարգային խախտումները կանխելու ուղղությամբ:

Անդրադառնալով այս գործողության ակնկալվող ազդեցությանը՝ այն է, զինված ուժերում մահվան դեպքերի վերաբերյալ քրեական գործերով մինչդատական վարույթի ընթացքում մարդու իրավունքների խախտման դեպքերի նվազմանը, ՀՀ Գլխավոր դատախազությունն ինքն է նույնիսկ ընդունել, որ հնարավոր չէ

[100] CoE Commissioner for Human Rights, Report 2015, § 86; ECtHR, ECtHR, Anahit Mkrtchyan v. Armenia (3673/11), 7 August 2020, § 96:
[101] ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 7, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=976038ef7fd6eba6832&size_mode=1; ՀՀ դատախազություն, Գրություն, 19/507-21, 1 մարտի 2021թ.; ՀՀ դատախազություն, 19/1103-21, 28 ապրիլի 2021թ.:
[102] ՀՀ ԳԴ, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և քրեակատարողական հիմնարկներում մահվան դեպքերի արագ և թափանցիկ քննության չափորոշիչներ սահմանելու մասին, Հրաման, 1 ապրիլի 2021թ., կետ 1, https://www.prosecutor.am/myfiles/files/hraman%2038.pdf:
[103] CoE Commissioner for Human Rights, Report 2015, § 86; UN CAT, Concluding observations 2017, § 36; ECtHR, Anahit Mkrtchyan v. Armenia (3673/11), 7 August 2020, §§ 8, 9ւ-100; ECtHR, Muradyan v. Armenia (11275/07), 24 February 2017, §§ 142-143; ECtHR, Mirzoyan v. Armenia (57129/10), 23 August 2019, §§ 72, 82:

քանակապես չափել այս ազդեցությունը, հետևաբար, Դատախազությունը նման վիճակագրություն չի վարում:[104]

Սույն զեկույցի սկզբում արդեն նշել ենք ՄԻՊ 2020-2022թ. ԳԾ գործողությունների ազդեցության չափորոշիչների մասով խնդիրները:

ՀՀ զինված ուժերում կյանքի իրավունքի ապահովմանն ուղղված առաջարկներ

- Սահմանել ելակետային տվյալներ 2019թ. ընդունված ՄԻՊ ռազմավարությունից և 2020-2022թ. գործողությունների ծրագրից առաջ բանակում ոչ մարտական պայմաններում մահացությունների դեպքերով:
- Սահմանել չափելի նպատակ զինված ուժերում մահվան դեպքերի նվազեցման և դրանց քննության արդյունավետության առումով:
- Տրամադրել հանրությանը միասնական վիճակագրական տվյալներ բանակում ոչ մարտական պայմաններում մահացությունների, դրանց պատճառների և դրանց քննության վերաբերյալ:
- Նախատեսել ռազմավարությունում և ԳԾ-ում միջոցառումներ՝ ուղղված զորակոչի և վարժական զորահավաքների շրջանակներում բժշկական զննությունների ընթացքում մարդու իրավունքների խախտման դեպքերի նվազեցմանը:
- Ապահովել բանակում ոչ մարտական պայմաններում մահացությունների դեպքերի արդյունավետ քննությունը՝ իրականացնելով քրեական արդարադատության ընդհանուր բարեփոխումներ՝ այդ թվում որպես առաջնահերթություն, սահմանել պատշաճ դատաբժշկական փորձաքննությունների մեխանիզմների ներդրումն ու կիրառումը:
- Ներգրավել փաստաբաններին զինված ուժերում կյանքի իրավունքի թեմայով դասընթացներում (վերապատրաստումներում):
- Ներառել կյանքի իրավունքի թեմայով հենց զինված ուժերում դրա ապահովման առանձին վերապատրաստումներ քննիչների, դատախազների ու դատավորների համար:
- Դիտարկել զորամասերում հոգեբանների դասախոսությունները ոչ թե որպես հանդուրժողականության և փոխադարձ հարգանքի ամրապնդման անմիջական արդյունք, այլ դրան հասնելու միջոց:

[104] ՀՀ ԳԴ, 31/8-6-23, 25 ապրիլի 2023թ.:

- Օգտագործել սոցիալական մեդիայի հնարավորությունները մարդու իրավունքների՝ այդ թվում, կյանքի իրավունքի մասին իրազեկման նյութերը տարածելու գործում: Օգտագործել նաև սոցիալական մեդիան ու հեռուստատեսությունը զինկոմիսարիատներում ու զորամասերում մարդու իրավունքների մասին պաստառների վերաբերյալ իրազեկելու համար: Հրապարակել մարդու իրավունքներին վերաբերող ամեն իրազեկող նյութ՝ այդ թվում, զինվորական ծառայության դեռ չանցած անձանց և նրանց ընտանիքների շրջանում:

- Գնահատել 2020-2022թթ. ընթացքում ՀՈՒ-ում մարդու իրավունքների մասին համացանցով տարածված նյութերի հասանելիությունը. որքան են այդ նյութերը դիտվել, ովքեր են թիրախավորվել, և մշակել թիրախային ալգորիթմեր այդ իրազեկող նյութերը հնարավորինս լայն շահառուներին հասցնելու նպատակով:

ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԱՐԳԵԼՔ

Ընդհանուր դիտարկումներ

ՄԻՊ ռազմավարությունը նշում է, որ չնայած խոշտանգումների դեմ պայքարի ոլորտում վերջին տարիներին իրականացված օրենսդրական բարեփոխումներին և գործնականում դրանց կիրառման մեխանիզմների ներդրմանը, Հայաստանում դեռևս առկա են մի շարք օրենսդրական, գործնական բացեր ու խնդիրներ, որոնք հնարավորություն չեն տալիս ամբողջությամբ ապահովելու այս իրավունքի արդյունավետ պաշտպանությունն ու երաշխավորումը:[105]

ՄԱԿ-ի և ԵԽ-ի տարբեր մասնագիտացված կառույցները, «Հյուման ռայթս ուոտչ»-ը տարբեր զեկույցներում մատնանշել են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են բանակում խոշտանգումների, այլ վատ վերաբերմունքի դեպքերը, քրեական ենթամշակույթը, վատ վերաբերմունքի ենթարկված և նման վերաբերմունքին ականատես եղած զինծառայողների կողմից այդ դեպքերով անկախ մարմիններին բողոքներ չներկայացնելը՝ պայմանավորված վրեժխնդրության վախով:[106]

Վիճակագրական և ելակետային տվյալների բացակայություն

ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարը կոչ էր արել ՀՀ իշխանություններին, որպեսզի վերջիններս հանրությանը պատշաճ կերպով տեղեկություններ տրամադրեն բանակում մարդու իրավունքների խախտումների մասին:[107] ՄԻՊ ռազմավարությամբ նշվում է, որ բացի պաշտոնական վիճակագրությամբ արտացոլված դեպքերից՝ խոշտանգումների բազմաթիվ դեպքեր կարող են մնալ անհայտ, որ հանրությանը հայտնի դարձած խոշտանգման դեպքերը ևս մտահոգիչ են, իսկ դրանց մի մասը մնում է չբացահայտված:[108] Ինչպես բանակում ոչ մարտական պայմաններում մահացությունների, այնպես էլ խոշտանգումների դեպքերով հանրությանը հասանելի միասնական պաշտոնական վիճակագրություն չի վարվում:

ՄԻՊ ռազմավարությունում և 2020-2022թթ. ԳԾ-ում տվյալներ չկան այն մասին, թե խոշտանգման դեպքերի ինչ պաշտոնական վիճակագրության մասին է խոսքը, և ինչ սկզբունքով են նման դեպքերը դիտարկվել որպես «խոշտանգման դեպքեր»: Պարզ չէ անգամ, թե ինչ սկզբունքով են նման դեպքերը համարվել բացահայտված կամ չբացահայտված: 2020-2022թթ. ԳԾ-ով նպատակ է դրվել դատարան ուղարկված խոշտանգման հիմքով հարուցված քրեական գործերի

[105] ՄԻՊ ռազմավարություն, 2019թ. էջ 22, https://www.moj.am/storage/uploads/1Razmavarutyun.MIP.pdf:
[106] UN Working Group on Arbitrary Detention, Report 2011, § 67; UN CAT, Concluding Observations 2012, §§ 9, 12; UN CAT, Concluding Observations 2017, §§ 35-36; CoE Commissioner for Human Rights, Report 2011, §§ 123, 124, 130-133, 137-138; CoE Commissioner for Human Rights, Report 2015, §§ 85-86, 91; Report 2013, p. 394; HRW, Report 2015, p. 72; HRW, Report 2016, p. 82:

[107] CoE Commissioner for human rights, Report 2011, § 142:
[108] ՄԻՊ ռազմավարություն, 2019թ, էջ 10, https://www.moj.am/storage/uploads/1Razmavarutyun.MIP.pdf:

թվի առնվազն 5% աճը:[109] Սակայն ներկայացված չեն ելակետային տվյալներ զինված ուժերում ո՛չ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի դեպքերի, ո՛չ էլ դրանց վերաբերյալ գործերի քննության վերաբերյալ: Բացի այդ՝ հարց է առաջանում՝ արդյոք գործերը դատարան ուղարկելու փուլը միայն թույլ է տալիս եզրակացնել, որ խոշտանգումների դեպքերը բացահայտվում են, ինչն էլ իր հերթին, ըստ ԳԾ-ի, հանգեցնելու է խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի նվազմանը:

ՀՈՒ-ում խոշտանգման արգելքի վերաբերյալ իրազեկում

Ի տարբերություն կյանքի իրավունքի թեմայի՝ 2020-2022թթ. ԳԾ-ով **զինված ուժերում խոշտանգման արգելքի վերաբերյալ իրազեկման ակցիաներ, տեսաձայնագրություններ, այլ իրազեկող նյութերի տարածում չի նախատեսվել**: Եվ դա այն դեպքում, երբ ՄԻՊ ռազմավարությունում ևս շեշտվում է խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի բացարձակ արգելքը:[110] Այս արգելքը գործում է բոլոր պայմաններում՝ այդ թվում, զինված հակամարտություններում:

Անհրաժեշտ է ՀՈՒ-ում խոշտանգման և այլ վատ վերաբերմունքի արգելքի մասին իրազեկման միջոցառումներ իրականացնել՝ ներառելով նաև արգելված արարքների օրինակներ ու սկզբունքներ: Իրազեկումը պետք է իրականացվի մինչ պարտադիր զինծառայությանը զորակոչվելը, ինչպես նաև ռազմական ուսումնական հաստատություններում, արդեն ծառայող բոլոր օղակների սպաների, Ռազմական ոստիկանության շրջանում: Մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկող պաստառները և այլ նյութերը պետք է ներառեն այս արգելված արարքի ձևերը և պետք է շեշտադրվի նման արարքի՝ հանցավոր լինելու փաստը: Քննություն իրականացնող բոլոր մարմինների ներկայացուցիչներին անհրաժեշտ է սովորեցնել այդ հանցագործությանը հատուկ քննության մեթոդներ՝ այդ թվում, ստամբուլյան արձանագրության հիման վրա ապացույցները հավաքելու ու պահպանելու մասով:

Պարտադիր ժամկետային ծառայություն անցած անձանց ընկալումները բանակում վատ վերաբերմունքի վերաբերյալ

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի կողմից վերջին տարիներին պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած՝ այդ թվում, պատերազմին մասնակցած, և զորացրված հարցվածների 72,3%-ը գտել է, որ ծառայության ընթացքում իրենց զորամասում եղել են, այսպես կոչված, «չսիրված» սպաներ: 23,2%-ը նշել է, որ նման սպաներ չեն եղել: «Չսիրված» սպաներ (հրամանատարներ) հասկացությունը վերաբերել է այն սպաներին, որոնք կոպիտ են եղել զինվորների հետ՝ հայհոյել կամ հարվածել են նրանց:[111] Հարցին դրական պատասխան տվածների 36%-ը գտել է, որ մարտական

[109] ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ, էջ, 10, https://www.moj.am/storage/uploads/mip2022.pdf:
[110] ՄԻՊ ռազմավարություն, 2019թ. էջ 21, https://www.moj.am/storage/uploads/1Razmavarutyun.MIP.pdf:
[111] «Խաղաղության երկխոսություն» ՀԿ, ՀՀ Զինված Ուժերում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների վերհանման նպատակով իրականացված հարցազրույցների վերլուծություն, Վանաձոր, հոկտեմբեր 2022թ., էջ 13, https://peacedialogue.am/2022/10/07/hr_survey_arm/:

գործողությունների ընթացքում և հետո այդ սպաները դարձել են ավելի սիրված:[112]

32,1%-ի հավաստմամբ՝ ծառայության ընթացքում իրենց նկատմամբ ոչ տեղին կոպտություն է դրսևորվել սպաների կողմից, 42,9%-ի՝ իրենց նկատմամբ նման վերաբերմունք չի դրսևորվել: Հարցվածների 56,3%-ը նշել է, որ նման կոպիտ վերաբերմունք դրսևորվել է իրենց ծառայակիցների նկատմամբ: 29,5%-ը պատասխանել է, որ ծառայակիցները նման վերաբերմունքի չեն արժանացել:

«Ինչպե՞ս է այն դրսևորվել» (կոպիտ վերաբերմունքը) հարցին ամենատարածված պատասխանները եղել են.

- «հարվածել են» (59,5%),
- «ծեծել են» (51,4%),
- «վիրավորել են» (47,3%),
- «հայհոյել են» (45,9%),
- «ծաղրել են» (33,8%):[113]

Ցավոք, հարցվածներից շատերը՝ 34,6%, խուսափել են պատասխանել, թե, ըստ իրենց, որոնք են եղել սպաների նման վարքագծի պատճառները: Նրանք, ովքեր նշել են պատճառները, ասել են.

- որպեսզի զինվորները «գլխին չնստեն» (19,8%),
- ինքնահաստատման միջոց էր (13,6%),
- մարդ տեսակն էր այդպիսին (11,1%),
- պատերազմի դաժանությունները տեսնելը (7,4%):[114]

Պարտադիր ժամկետային ծառայություն անցած անձանց ընկալումները բանակում սպաների հետ հարաբերությունների մասին

ԽԵ ՀԿ-ի կողմից պարտադիր ժամկետային զինծառայություն անցած հարցվածների մեծամասնությունը՝ 94,6%, ասել է, որ իրենց զորամասում եղել են բացառապես կանոնադրային հարաբերություններով առաջնորդվող սպաներ: Ընդամենը 5,4%-ն է ասել, որ նման սպաներ իրենց զորամասում չեն եղել: 17,9%-ը փորձել է հարմարվել նման պայմաններում ծառայելուն, իսկ 25,5%-ը չի պատասխանել, թե ինչպես են կարողացել «լեզու գտնել» նման սպաների հետ:[115]

---

[112] «Խաղաղության երկխոսություն» ՀԿ, ՀՀ Զինված Ուժերում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների վերհանման նպատակով իրականացված հարցազրույցների վերլուծություն, Վանաձոր, հոկտեմբեր 2022թ., էջ 14, https://peacedialogue.am/2022/10/07/hr_survey_arm/:

[113] «Խաղաղության երկխոսություն» ՀԿ, ՀՀ Զինված Ուժերում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների վերհանման նպատակով իրականացված հարցազրույցների վերլուծություն, Վանաձոր, հոկտեմբեր 2022թ., էջ 17-19, https://peacedialogue.am/2022/10/07/hr_survey_arm/:

[114] «Խաղաղության երկխոսություն» ՀԿ, ՀՀ Զինված Ուժերում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների վերհանման նպատակով իրականացված հարցազրույցների վերլուծություն, Վանաձոր, հոկտեմբեր 2022թ., էջ 17, https://peacedialogue.am/2022/10/07/hr_survey_arm/:

[115] «Խաղաղության երկխոսություն» ՀԿ, ՀՀ Զինված Ուժերում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների վերհանման նպատակով իրականացված հարցազրույցների վերլուծություն, Վանաձոր, հոկտեմբեր 2022թ., էջ 15, https://peacedialogue.am/2022/10/07/hr_survey_arm/:

Հարցվածների մեծամասնությունը՝ 56%, գերադասում է կանոնադրային հարաբերություններին հետևող սպաներին, 19%-ը՝ կանոնադրային հարաբերություններին մասամբ հետևող, և միայն 4%-ը՝ կանոնադրային հարաբերություններին չհետևող սպաներին: Ավելին, մարտական գործողություններին մասնակցած հարցվածների մոտ կանոնադրային հարաբերություններով առաջնորդվող սպաների նկատմամբ վերաբերմունքը էլ ավելի դրական է եղել: Նրանցից ոմանք, օրինակ, նշել են, որ «չնայած այդ պահին հաճելի չի, սակայն պատերազմին հասկացանք, որ «ուստավը» ավելի լավ ա»; «պատրաստում է դժվարություններին», «իրենց («ուստավնիկ սպաների») հետ գիտելիք ես ձեռք բերում: Պատերազմը ցույց տվեց, որ գիտելիքը կարա փրկի»: Պատերազմի ժամանակ դա ավելի լավ երևաց, որ ուստավը ճիշտ էր»:[116]

Պարտադիր ժամկետային ծառայություն անցած անձանց ընկալումները բանակում մյուս պարտադիր ժամկետային զինծառայողների հետ հարաբերությունների մասին

ԽԵ ՀԿ-ն պարտադիր ժամկետային զինծառայություն անցած քաղաքացիներին հարցեր է ուղղել նաև իրենց զորամասերում «չսիրված» և «խեղճ» զինծառայողների, ինչպես նաև ծառայության ժամանակ կռիվների մասին:

Հարցվածների 67%-ը հայտնել է, որ ծառայության ընթացքում իրենց զորամասում եղել է **«բոլորի կողմից չսիրված զինծառայող»**, իսկ 30%-ը՝ որ չեն ունեցել: Նման ծառայակցի հետ 46.7%-ը նախընտրել է չշփվել: 48%-ը գտել է, որ նույնիսկ մարտական գործողություններից հետո այդ զինծառայողների նկատմամբ վերաբերմունքը չի փոխվել, իսկ 19%-ը՝ որ նրանց նկատմամբ վերաբերմունքը փոխվել է դեպի լավը:

Համածառայակիցների չսիրված լինելու ամենատարածված պատճառները նշվել են՝

- ՌՈ-ին և սպաներին «գործ տալը» (24%)
- անպատասխանատու լինելը կամ հրամանատարությանը չենթարկվելը (16%)
- մեծամտությունը (16%):[117]

Բացի այդ, 69%-ը նշել է, որ իրենց զորամասում եղել են նաև **«խեղճ» զինվորներ, որոնց անընդհատ ճնշել են, նեղացրել կամ աշխատեցրել**», իսկ 29%-ի զորամասերում նման զինծառայողներ չեն եղել: Հարցվածները մեծամասամբ՝ 77,9%, չեն մանրամասնել, թե ովքեր են եղել նման զինծառայողները: Նրանք, ովքեր ասել են, նշել են հետևյալ խմբերը.

- զինծառայողները, որոնք չեն կարողացել իրենց պաշտպանել (13%),
- սեռական փոքրամասնությունների ներկայացուցիչները (7,8%),
- նորակոչիկները (2,6%),

[116] «Խաղաղության երկխոսություն» ՀԿ, ՀՀ Զինված Ուժերում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների վերհանման նպատակով իրականացված հարցազրույցների վերլուծություն, Վանաձոր, հոկտեմբեր 2022թ., էջ 15-17, https://peacedialogue.am/2022/10/07/hr_survey_arm/:

[117] «Խաղաղության երկխոսություն» ՀԿ, ՀՀ Զինված Ուժերում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների վերհանման նպատակով իրականացված հարցազրույցների վերլուծություն, Վանաձոր, հոկտեմբեր 2022թ., էջ 20-21, https://peacedialogue.am/2022/10/07/hr_survey_arm/:

- ոչ ադեկվատ[118] զինծառայողները (2,6%):

Այդպիսի «խեղճ» զինծառայողներին, ըստ հարցվածների 44,2%-ի, հաճախ են նեղացրել, ըստ 27,3%-ի՝ նրանց հազվադեպ էին նեղացնում: 36%-ը նշել է, որ «խեղճ»-երին նեղացնում էին հիմնականում զինծառայողները, 3%-ը՝ որ սպաները, 13%՝ որ թե՛ սպաները, թե՛ զինծառայողները:

«խեղճ» զինծառայողներին նեղացնելու փաստով երբեմն եղել է սպայական անձնակազմի կողմից (ասել է հարցվողներից 14,3%), երբեմն՝ (0,8%) համածառայակիցների կողմից միջամտություն: Մնացած դեպքերում հարցվողները նշել են, որ թե՛ սպաները, թե՛ ծառայակիցները չեն միջամտել կամ հազվադեպ են միջամտել:

Ըստ 2020-2022թթ. Զորակոչի հարցվածներից մեկի՝ «... հիմնականում աշխատում ես բանակում ուրիշի պատճառով խնդիրների մեջ չընկնես, հեռու մնաս: Կախված իրավիճակից՝ կարող էր նաև լիներ, որ օգնեինք: ... Շատ ժամանակ չէին իմանում (սպաները), իմանալու դեպքում էլ՝ նայած ով է...»:

«խեղճ» զինծառայողներին նեղացնելը արտահայտվում էր՝

- նրանց շահագործելով (54,5%)
- ծաղրելով (23,4%)
- ֆիզիկական կամ հոգեբանական ճնշումների ենթարկելով (7,8%)
- արհամարհելով, «մարդու տեղ չէին դնելով» (5,2%)
- նրանց պատկանող ունեցվածքը խլելով (3,9%)
- նրանց սպառնալով (1,3%):[119]

Օրինակ՝ 2020-2022թթ. զորակոչի հարցվածներից մեկը նշել է, որ ծառայության ընթացքում իրեն նեղացնելը սկսվել էր հրամանատարներից, հետո անցել նաև մյուս ծառայողներին. «Կարելի ա ասել, իրանց ստիպեցին հրամանատարները: Ծեծելուց, խփելուց բացի նաև շատ էին ստորացնում, ստիպում էին զուգարան մաքրել, առանձին նստել հաց ուտել, նկուղում քնել...»:

2017-2019թթ. զորակոչի մեկ հարցված նշել է, որ իրենց զորամասում «մյուս զինվորները և սպաները չէին թողնում որ նեղացնեն («խեղճ» զինվորներին), պատժում էին այդ զինվորներին, որ հասկացվի, որ բոլորը հավասար են»:

2019-2021թթ. Զորակոչից մեկ հարցված նշել է, որ նման «խեղճ» երկու զինծառայող կար իրենց զորամասում, որոնք «առանց հարցնելու վազում էին», երբ որ որևէ սպա «ասում էր ինչ որ գործ ա պետք անել... մեզնից հեռու իրանց համար ծառայում էին, բայց միաժամանակ, եթե պետք էր գործ անել, հասկանում էին, որ իրանք պիտի անեն: Բայց իրանց չենք ծեծել»:[120]

[118] «Ոչ ադեկվատ» ձևակերպումը հարցվողները չեն պարզաբանել:

[119] «Խաղաղության երկխոսություն» ՀԿ, ՀՀ Զինված Ուժերում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների վերհանման նպատակով իրականացված հարցազրույցների վերլուծություն, Վանաձոր, հոկտեմբեր 2022թ., էջ 22-26, https://peacedialogue.am/2022/10/07/hr_survey_arm/:

[120] «Խաղաղության երկխոսություն» ՀԿ, ՀՀ Զինված Ուժերում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների վերհանման նպատակով իրականացված հարցազրույցների վերլուծություն, Վանաձոր, հոկտեմբեր 2022թ., էջ 25, https://peacedialogue.am/2022/10/07/hr_survey_arm/:

Արդյունավետ քննություն

ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոմիտեի զեկույցներում և Հայաստանի դեմ ՄԻԵԴ կայացրած մի շարք վճիռներում (Զալյանը և այլք ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 36894/04 և 3521/07, վճիռը հրապարակվել է 17.06.2016),[121] Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 52316/09, վճիռը հրապարակվել է 14.12.2017),[122] Մուրադյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 11275/07, վճիռը հրապարակվել է 24.02.2017),[123] Հարությունյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 36549/03, վճիռը հրապարակվել է 28.09.2007)[124]) գործերում վերհանվել են ինչպես քրեական արդարադատության համակարգային, այնպես էլ զինվորական գործերով քննությանը հատուկ խնդիրները, որոնք խոչընդոտում են խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի արդյունավետ քննությանը: Այդպիսի խնդիրները ներառում են խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ենթադրյալ դեպքերով պետության անգործությունը,[125] անկախ, անաչառ[126] ու արագ[127] քննության բացակայությունը, բանակում ոչ մարտական պայմաններում մահացությունների դեպքերով վատ վերաբերմունքի վարկածը չզարգացնելը,[128] առանձին քրեական վարույթ չնախաձեռնելն ու մեկ այլ գործով վկաներին որպես կասկածյալ չներգրավվելը,[129] գործով վկաներին որպես կասկածյալ վերաբերվելը,[130] խոշտանգման կամ վատ վերաբերմունքի կատարման համար ենթադրվող ռազմական ոստիկանության աշխատակիցների ցուցմունքները վստահելի համարելը, իսկ տուժողինը՝ մանրամասն չգնահատելը,[131] հարկադրաբար խոստովանական ցուցմունքներ կորզելը և օգտագործումը դատարանում,[132] բժշկական զննությունների ինստիտուցիոնալ և գործնական թերությունները՝[133] այդ թվում՝ բժշկական զննությունների իրականացման կանխամտածված ձգձգումները, որոնք հանգեցնում են կարևոր ապացույցների անհետացման,[134] պատշաճ բժշկական զննություններ չանցկացնելը, զննության անցկացումը բժիշկ չհանդիսացող անձանց կողմից և բժշկական զննության պատշաճ փաստաթուղթ չկազմելը:[135]

Ինչպես անդրադարձ է կատարվել կյանքի իրավունքին նվիրված գլխում, 2021թ. ապրիլի 4-ին արձակվել է **«Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և քրեակատարողական հիմնարկներում մահվան դեպքերի**

[121] ECtHR, Zalyan and others v. Armenia (36894/04 and 3521/07), 17 June 2016:
[122] ECtHR, Matevosyan v. Armenia (52316/09), 14 December 2017:
[123] ECtHR, Muradyan v. Armenia (11275/07), 24 February 2017:
[124] ECtHR, Harutyunyan v. Armenia (36549/03), 28 September 2007:
[125] ECtHR, Zalyan and others v. Armenia (36894/04 and 3521/07), 17 June 2016, §§ 233, 271, 272, 274, 231, 233; ECtHR, Matevosyan v. Armenia (52316/09), 14 December 2017, § 75:
[126] ECtHR, Zalyan and others v. Armenia (36894/04 and 3521/07), 17 June 2016, §§ 9, 272, 274; ECtHR, Matevosyan v. Armenia (52316/09), 14 December 2017, § 77:
[127] ECtHR, Zalyan and others v. Armenia (36894/04 and 3521/07), 17 June 2016, § 272; ECtHR, Matevosyan v. Armenia (52316/09), 14 December 2017, §§ 78, 79:
[128] ECtHR, Muradyan v. Armenia (11275/07), 24 February 2017, §§ 144, 151:
[129] ECtHR, Zalyan and others v. Armenia (36894/04 and 3521/07), 17 June 2016, § 274:
[130] ECtHR, Zalyan and others v. Armenia (36894/04 and 3521/07), 17 June 2016, § 231, 233, 307, 309, 318, 325, 329, 274:
[131] ECtHR, Zalyan and others v. Armenia (36894/04 and 3521/07), 17 June 2016, §§ 275; ECtHR, Matevosyan v. Armenia (52316/09), 14 December 2017, § 77:
[132] CAT concluding observations 2017, § 13, CAT concluding observations 2012, § 16, UN working group on arbitrary detention visit to Armenia report 2011, § 67; ECtHR, Harutyunyan v. Armenia (36549/03), 28 September 2007, §§ 59, 64, 65:
[133] UN CAT, Concluding observations 2017, §§ 17-18; ECtHR, Zalyan and others v. Armenia (36894/04 and 3521/07), 17 June 2016, § 262; ECtHR, Matevosyan v. Armenia (52316/09), 14 December 2017, § 80:
[134] UN CAT, Concluding observations 2017, §§ 17-18:
[135] ECtHR, Matevosyan v. Armenia (52316/09), 14 December 2017, § 80; ECtHR, Zalyan and others v. Armenia (36894/04 and 3521/07), 17 June 2016, §§ 257, 258, 259, 260:

արագ և թափանցիկ քննության չափորոշիչներ սահմանելու մասին» ՀՀ գլխավոր դատախազի N 38 հրամանը:[136] Նշված հրամանով ՀՀ զինվորական դատախազին և կայազորների զինվորական դատախազներին հանձնարարվել է, ի թիվս այլնի, ապահովել զինված ուժերում մահվան դեպքերով արագ և թափանցիկ քննության հրամանով սահմանված չափանիշները: Հրամանով սահմանվում են **չափորոշիչներ,**[137] որոնք արտահայտում են վերոնշյալ մի շարք խնդիրներ և դրանց բացառման ջանքերը:[138] Այնուամենայնիվ, հրամանը վերաբերում է բանակում ոչ մարտական պայմաններում մահացության դեպքերի քննությանը, իսկ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այն դեպքերը, որոնք չեն հանգեցրել մահվան, ըստ էության, չեն ներառվել հրամանում:

Ավելին, 2020-2022թ. ընթացքում ԶՈՒ-ում խոշտանգման դեպքերի արագ և թափանցիկ քննության վերաբերյալ գերատեսչական ակտեր ՀՀ դատախազության կողմից չեն ընդունվել (ուղեցույցներ):[139]

Ինչպես նշվեց վերևում, սպաների կողմից կոպիտ վերաբերմունքի դրսևորումների՝ հարվածելու, ծեծելու, վիրավորելու, հայհոյելու, ծաղրելու պատճառների մասին 112 հարցվածները խուսափել են խոսել:[140] Սակայն 2020-2022թթ. զորակոչի հարցվածներից մեկը, խոսելով պատճառների մասին, անդրադարձել է նաև Ռազմական ոստիկանությանը՝ նշելով, որ «ՌՈ-ն տենց դեպքերի համար չի եկել: Սովորական բան ա, դրա համար ՌՈ չի գա, եթե մարդ չեն սպանել»:[141]

Համադրելով այս տեղեկությունը այն փաստի հետ, որ Գլխավոր դատախազի 2021թ. ապրիլի 4-ի հրամանը վերաբերում է միայն մահվան դեպքերի արագ և թափանցիկ քննության չափորոշիչներ սահմանելուն և չի ներառել մահվան չհանգեցրած խոշտանգման կամ այլ վատ վերաբերմունքի այն դեպքերը, կարելի է եզրակացնել, որ պետական կառույցները ոչ պատշաճ հրատապ մոտեցում ունեն խոշտանգումների և այլ վատ վերաբերմունքի կանխմանն ու զսպմանը: Սակայն Հայաստանի դեմ ՄԻԵԴ վճիռները վկայում են, որ զինծառայողի մահացությունը կարող է հետևել խոշտանգմանը կամ այլ վատ վերաբերմունքին, նման վերաբերմունքին ոչ պատշաճ արձագանքին, ինչպես նաև նման գործերի քննությունը կարող է տեղի ունենալ խոշտանգմամբ կամ այլ վատ վերաբերմունքի կիրառմամբ ցուցմունքների կորզմամբ:

---

[136] ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 7, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=976038ef7fd6eba6832&size_mode=1; ՀՀ դատախազություն, Գրություն, 19/507-21, 1 մարտի 2021թ.; ՀՀ դատախազություն, 19/1103-21, 28 ապրիլի 2021թ.:
[137] ՀՀ ԳԴ, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և քրեակատարողական հիմնարկներում մահվան դեպքերի արագ և թափանցիկ քննության չափորոշիչներ սահմանելու մասին, Հրաման, 1 Ապրիլի 2021թ., https://www.prosecutor.am/myfiles/files/hraman%2038.pdf:
[138] ՀՀ ԳԴ, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և քրեակատարողական հիմնարկներում մահվան դեպքերի արագ և թափանցիկ քննության չափորոշիչներ սահմանելու մասին, Հրաման, 1 Ապրիլի 2021թ., կետ 1, https://www.prosecutor.am/myfiles/files/hraman%2038.pdf:
[139] ՀՀ ԳԴ, 31/8-6-23, 25 ապրիլի 2023թ.:
[140] «Խաղաղության երկխոսություն» ՀԿ, ՀՀ Զինված Ուժերում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների վերհանման նպատակով իրականացված հարցազրույցների վերլուծություն, Վանաձոր, հոկտեմբեր 2022թ., էջ 17-19, https://peacedialogue.am/2022/10/07/hr_survey_arm/:
[141] «Խաղաղության երկխոսություն» ՀԿ, ՀՀ Զինված Ուժերում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների վերհանման նպատակով իրականացված հարցազրույցների վերլուծություն, Վանաձոր, հոկտեմբեր 2022թ., էջ 19, https://peacedialogue.am/2022/10/07/hr_survey_arm/:

Գործի քննության անկախությունն ապահովելու նպատակով ՄԻԵԴ գործերից հետո Հայաստանում օրենսդրական փոփոխությունների արդյունքում կառուցվածքային գործառնական փոփոխություններ են կատարվել: Առանձին գործում է ՀՀ քննչական կոմիտեն, որն իրականացնում է զինվորական ծառայության ընթացքում կատարած հանցագործությունների՝ այդ թվում՝ խոշտանգման նախաքննություն:[142] Օրենսդրությամբ բացառվել է ռազմական ոստիկանների կողմից նախաքննության իրականացումը:[143] Սակայն քանի որ ապացույցների հավաքումը տեղի է ունենում ոչ միայն նախաքննության, այլև հետաքննության ընթացքում, իրավակիրառ պրակտիկայում չեն վերացել խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի դեպքերով անարդյուավետ քննության ռիսկերը:

Չնայած **բժշկական զննությունների** հետ կապված ինստիտուցիոնալ և գործառնական թերություններին, որոնք մատնանշվել էին միջազգային կառույցների կողմից, ՄԻՊ ռազմավարությունը և 2020-2022թթ. ԳԾ-ն այս ոլորտի բարեփոխումների օրակարգ չեն նախատեսել:

Նախկին պարտադիր զինծառայողների ընկալումները Ռազմական ոստիկանության մասին

ԽԵ նախկինում պարտադիր զինծառայություն անցած անձանց հարցրել է նաև Ռազմական ոստիկանության վերաբերյալ նրանց ընկալումների մասին:

Հարցման մասնակիցների կեսից ավելին՝ 55,4%, նշել է, որ ծառայության ընթացքում ունեցել է բացասական վերաբերմունք ՌՈ-ի, քննչական կոմիտեի և դատախազության նկատմամբ, իսկ 20,5%-ը նորմալ է վերաբերել վարույթ իրականացնող վերոնշյալ մարմիններին: Միայն մեկ հոգի է ունեցել դրական վերաբերմունք, ով տվյալ պահին աշխատել է ՌՈ-ում:

Հատկանշական է, որ հարցվածներից չորսը մանրամասներ են ներկայացրել ՌՈ-ի հետ ունեցած իրենց փորձից: 2015-2017թթ. և 2017-2019թթ. զորակոչերի զինծառայողներից երկուսը դրական փորձ են ունեցել: Նրանցից մեկը ասել է, որ ինքը մեկ անգամ եղել է ՌՈ-ում, ուր տարվել էր որպես վկա. «Հարգալից են եղել: Հարցաքննել են և բաց թողել»: Մյուսն ասել է, որ ծառայակիցներից մեկին ՌՈ-ն տարել է մեկ այլ ծառայակցի հարվածելու համար. «ոչ մի բռնություն չի եղել, ամեն ինչ ըստ օրենքի»:

2019-2021թթ. զորակոչից հարցվածներից երկուսը, սակայն, բացասական են արտահայտվել ՌՈ-ի մասին: Նրանցից մեկն ասել է. «Ռազմական ոստիկանությանը լավ վերաբերվող մարդ չկա: Ինձ չեն տարել, բայց ընկերներիցս մի քանի հոգի գնացել են: Կռիվ էր եղել մի քանի ջոկի մեջ: Տենց մի քանի հոգի տարել էին: Վախեցնել, գոռալ, հայհոյել պարզ ա՝ եղել ա: Նույնը ինչ սովորական ոստիկաներն են անում: Դե մերոնք բան չեն ասել, մի օր հետո բաց են թողել»: Հարցվածներից մյուսը նշել է. «Ռազմականին ոչ մի զինվոր կամ սպա լավ չի վերաբերվում: Դրանց սիրող չկա, երևի իրենց հարազատները չեն սիրում անգամ: Նույնն էլ քննչականը կամ դատախազությունը: Իրենց մոտ

[142] ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 1 հուլիսի 1998թ., հոդված 190(5):
[143] CoE, Action plan (17/08/2020), Communication from Armenia concerning the case of ZALYAN AND OTHERS v. Armenia (Application No.36894/04) 1383rd meeting (29 September-1 October 2020) (DH), [DH-DD(2020)747], էջ 3, https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016809f667b; ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 1 հուլիսի 1998թ., հոդված 189:

չենք գնացել, մենակ իրանք էին գալիս: ՌՈ-ն ժամանակ առ ժամանակ գալիս էր ստուգումներ անցկացնելու: Հարցեր էին տալիս, առանձին մեր հետ խոսում էին: Բայց դե ասելու բան չկար: Ինչ ուզում ա լինի, բան չես ասելու: Ավելի լավ ա քեզ գլխից խփես քան ՌՈ բան պատմես ու գործ տվող դառնաս»:

ՌՈ տանելու ամենատարածված պատճառը, որ նշվել է, կռիվ անելն է (25%), սակայն հարցվածների մեծամասնությունը (56%) նախընտրել է չխոսել ՌՈ տանելու պատճառների մասին: Նրանք, ովքեր պատասխանել են, կեսից ավելին՝ 55,6%-ը, նշել է, որ հարգալից են վերաբերվել իրենց ՌՈ-ում, իսկ 36,1%-ը՝ անհարգալից: Մեկ հարցված ասել է, որ ինքը միանգամից ծանոթ է գտել:[144]

Խոշտանգումների արգելքին նվիրված գործողություններ

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ-ում պաշտպանական ոլորտում խոշտանգումների և վատ վերաբերմունքի բացառմանը կամ դրանց նվազմանն ուղղված գործողություններից «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն մշտադիտարկել է գործողություններ 12-ը, 14-ը, 15-ը, 18-ը, 19-ը և 26-ը, որոնք նվիրված են ՌՈ բաժիններում տեսաձայնագրման միջոցների տեղադրմանը, խոշտանգման հանցանքի նկատմամբ վաղեմության ժամկետների կիրառման սահմանափակումների ամրագրմանը, «Ֆիզիկական ուժեղ ցավ» և «հոգեկան տառապանք» եզրույթների մեկնաբանման և կիրառման վերաբերյալ ուղեցույցների մշակմանը, խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմի ստեղծմանը, խոշտանգումից տուժած անձանց հոգեբանական, սոցիալական և իրավաբանական ծառայություններից օգտվելու իրավունքի արդյունավետ իրականացման մեխանիզմների ապահովմանը, ռազմական ոստիկանների, քննիչների, դատախազների, դատավորների համար խոշտանգման և վատ վերաբերմունքի թեմայով վերապատրաստումների իրականացմանը: Ստորև ներկայացվում են այդ գործողությունների մշտադիտարկման արդյունքները:

Գործողություն 12

Ռազմական ոստիկանության բաժիններում տեղադրել տեսաձայնագրման միջոցներ

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ խոշտանգումների արգելքին նվիրված 12-րդ գործողությամբ նախատեսվել է մինչև 2021թ. երկրորդ կիսամյակը ռազմական ոստիկանության բաժիններում՝

- ՀՀ ռազմական ոստիկանության 13 բաժնում,
- 3 բաժանմունքում,
- 1 զորամասում,
  տեղադրել տեսաձայնագրման միջոցներ, յուրաքանչյուրում՝ 8 տեսախցիկ:

[144] «Խաղաղության երկխոսություն» ՀԿ, ՀՀ Զինված Ուժերում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների վերհանման նպատակով իրականացված հարցազրույցների վերլուծություն, Վանաձոր, հոկտեմբեր 2022թ., էջ 43-48, https://peacedialogue.am/2022/10/07/hr_survey_arm/:

Ակնկալվում է, որ տվյալ գործողության կատարմամբ կնվազեն ռազմական ոստիկանության բաժիններում խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերը, քրեական գործերի մինչդատական վարույթում քրեական դատավարության մասնակիցների իրավունքների խախտումները, քննչական և դատավարական գործողությունների իրականացման կարգի խախտմամբ ապացույցների ձեռքբերման դեպքերը, ինչպես նաև տեսաձայնագրությունները կօգտագործվեն որպես ապացույց՝ այդ դեպքերի վերաբերյալ քրեական գործերով:

Ռազմական ոստիկանության մասով գործողության կատարման և անմիջական արդյունքի համար պատասխանատու պետական մարմինը պաշտպանության նախարարությունն է, իսկ համակատարող մարմին չի սահմանվել:

Ֆինանսավորումը նախատեսվում է կատարել պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ-ում փոփոխությունների նախագծով առաջարկվել է ժամկետի փոփոխություն՝ գործողության կատարումը 2021թ. երկրորդ կիսամյակից տեղափոխել 2022թ. երկրորդ կիսամյակ:[145]

Մշտադիտարկման արդյունքները

ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոմիտեն իր 2017թ. զեկույցում առաջարկել է Հայաստանին «կրկնապատկել ջանքերը»՝ կանխելու զինծառայողների նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքերը:[146] Տեսախցիկների տեղադրումը այդպիսի խախտումների կանխման մեկ միջոց կարող է հանդիսանալ:

Ըստ Պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկության՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Երևանի, Էջմիածնի, Աբովյանի, Արարատի, Գյումրիի, Վայքի, Սիսիանի, Իջևանի բաժիններում տեղեդրված են եղել տեսախցիկներ, իսկ մնացած տարածքային ստորաբաժանումներում տեսախցիկների տեղադրումն ընթացքի մեջ է եղել:[147] Տեսախցիկների տեսադիտարկումն իրականացվում է տարածքային ստորաբաժանումների ղեկավարների և հերթապահների կողմից:[148]

ՊՆ-ն նաև տեղեկացրել է, որ 2022թ. ընթցքում ՌՈ տարածքային ստորաբաժանումներում տեղադրված տեսախցիկների միջոցով խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքեր չեն արձանագրվել:[149]

Գործողություն 14

[145] ՄԻՊ 2019թ. ռազմավարության 2020-2022թթ. ԳԾ փոփոխություններ և լրացումներ, Նախագիծ, էջ 1, https://www.e-draft.am/projects/3178/about:
[146] UN CAT, Concluding observations 2017, § 36:
[147] ՊՆ/510-ԳՔ/1078, 28 փետրվարի 2023թ.; ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2022թ. Տարեկան հաշվետվություն էջ 6-7, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=8816640f5b3a56b9b4345&size_mode=1:
[148] ՊՆ/510-ԳՔ/1078, 28 փետրվարի 2023թ.:
[149] ՊՆ/510-ԳՔ/1078, 28 փետրվարի 2023թ.:

Օրենսդրորեն ամրագրել վաղեմության ժամկետի կիրառման սահմանափակումներ խոշտանգման հանցանքի նկատմամբ

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ խոշտանգումների արգելքին նվիրված 14-րդ գործողությամբ նախատեսվել է մինչև 2020թ. երկրորդ կիսամյակ օրենսդրորեն ամրագրել վաղեմության ժամկետի կիրառման սահմանափակումներ խոշտանգման հանցանքի նկատմամբ:

Ակնկալվում է, որ օրենքի նախագծի ընդունման արդյունքում կնվազեն խոշտանգման դեպքերը, դրանց վերաբերյալ քրեական գործերի հարուցումը մերժելու կամ դրանք կարճելու մասին որոշումները:

Գործողության կատարման և անմիջական արդյունքի համար պատասխանատու պետական մարմինն արդարադատության նախարարությունն է, իսկ համակատարող մարմինները՝ ՀՀ գլխավոր դատախազությունը՝ համաձայնությամբ, ՀՀ քննչական կոմիտեն՝ համաձայնությամբ, ՀՀ ոստիկանությունը և Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակը:

Պետական բյուջեից ֆինանսավորում չի պահանջվում:

Մշտադիտարկման արդյունքները

2021թ. մայիսի 5-ին ընդունված և 2022թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական նոր օրենսգրքի համաձայն՝ վաղեմության ժամկետներ չեն կիրառվում խոշտանգում կատարած անձանց նկատմամբ:[150] Նոր օրենսգրքի համաձայն՝ խոշտանգում կատարած անձանց նկատմամբ չեն կարող կիրառվել նաև ներում[151] և համաներում:[152]

Մինչ նոր քրեական օրենսգրքի ընդունումը Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 40094/05, վճիռը հրապարակվել է 02.01.2013) գործով ՄԻԵԴ վճռի կատարման համատեքստում Հայաստանի վճռաբեկ դատարանը դիմել է ՄԻԵԴ-ին՝ ստանալու խորհրդատվական կարծիք այն մասին՝ արդյոք վաղեմության ժամկետներ չկիրառելը կհակասի Կոնվենցիայի 7-րդ հոդվածին (*nullum crimen sine lege* և *nulla poena sine lege*. հանցանք և պատիժ բացառապես օրենքի հիման վրա), եթե ներպետական օրենսդրությունը վաղեմության ժամկետներ չկիրառելու պահանջ չի սահմանում:[153] Ըստ 2022թ. ապրիլի 26-ին ՄԻԵԴ Բարձր պալատի խոհրդրատվական կարծիքի՝ երբ հանցանքը, ներպետական օրենսդրության համաձայն, ենթակա է վաղեմության ժամկետի սահմանափակման, և տվյալ սահմանափակման ժամկետը լրացել է, ՄԻԵԿ 7-րդ հոդվածը բացառում է այդ հանցանքի համար քրեական հետապնդումը: Բացի այդ, առաջին հերթին ազգային դատարանները պետք է որոշեն՝ արդյոք միջազգային իրավունքի նորմերը, որոնք իրավական ուժ ունեն ներպետական իրավական համակարգում, կարող են բավարար հստակ և կանխատեսելի

[150] ՀՀ քրեական օրենսգիրք, 5 մայիսի 2021թ., հոդված 83 (10):
[151] ՀՀ քրեական օրենսգիրք, 5 մայիսի 2021թ., հոդված 92:
[152] ՀՀ քրեական օրենսգիրք, 5 մայիսի 2021թ., հոդված 91:
[153] ECtHR Press Realeas, A request by the Court of Cassation of Armenia for an advisory opinion under Protocol No. 16 has been accepted, 12 May 2021, https://hudoc.echr.coe.int/eng-press#%7B%22sort%22:%5B%22kpdate%20Descending%22%5D,%22languageisocode%22:%5B%22ENG%22%5D,%22itemid%22:%5B%22003-7020362-9470289%22%5D%7D:

իրավական հիմք ապահովել եզրակացնելու, որ տվյալ հանցանքը ենթակա չէ վաղեմության ժամկետի սահմանափակման:[154]

Հետևաբար, ՀՀ ներպետական դատարանները պետք է որոշեն մասնավորապես Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի ՄԻԵԴ վճռի կատարմամբ վերաբացված գործերում վաղեմության ժամկետի հարցը, մինչդեռ նոր քրեական օրենսգիրքը արդեն հստակ սահմանել է խոշտանգում կատարած անձի նկատմամբ վաղեմության ժամկետի չկիրառման պահանջը հետագա գործերի համար:

2020-2022թ. ԳԾ-ում նշվում է նաև, որ օրենքի նախագծի ընդունման արդյունքում կնվազեն խոշտանգման դեպքերը, դրանց վերաբերյալ քրեական գործերի հարուցումը մերժելու կամ դրանք կարճելու մասին որոշումները: Վերևում արդեն նշել ենք նման դեպքերի նվազման կապակցությամբ ելակետային տվյալների բացակայության խնդիրը:

Բացի այդ, վաղեմության ժամկետներ չկիրառելու օրենքի պահանջը կատարելու դեպքում ոչ թե պետք է նվազեն, այլ ամբողջությամբ վերանան խոշտանգման դեպքերով քրեական գործերի հարուցումը մերժելու կամ դրանք կարճելու մասին որոշումները, եթե նման որոշումները հիմնված են լինում միայն վաղեմության ժամկետի հանգամանքի վրա:

Չնայած Արդարադատության նախարարությունը հանդիսացել է այս գործողության կատարման պատասխանատու մարմինը, խԵ այն հարցմանը, թե արդյոք ՀՀ նոր քրեական օրենսգրքի ուժի մեջ մտնելուց, այսինքն՝ 2022թ. հուլիսի 1-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ը նվազել են խոշտանգման դեպքերը և դրանց վերաբերյալ քրեական գործերի հարուցումը մերժելու կամ դրանք կարճելու մասին որոշումները՝ որպես այս գործողության կատարման ազդեցության չափիչ, Նախարարությունը չի պատասխանել: Վերջինս հղում է կատարել Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին ՀՀ օրենքի հավելվածի 3-րդ կետին և ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի ՀՀ արդարադատության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին թիվ 704-Լ որոշմանը, նշելով, որ խԵ ներկայացված հարցադրումը դուրս է Արդարադատության նախարարության իրավասության շրջանակից:[155]

Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին ՀՀ օրենքի և ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի ՀՀ արդարադատության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին թիվ 704-Լ որոշման համաձայն՝ Արդարադատության նախարարությունը մշակում և իրականացնում է արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը:[156]

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության 2019թ. ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թ. ԳԾ-ում Արդարադատության նախարարությունը սահմանվել է որպես գործողություն 14-ի միակ պատասխանատու մարմին: Ռազմավարական փաստաթղթի կամ դրա որևէ

[154] ECtHR, Advisory Opinion on the applicability of statutes of limitation to prosecution, conviction and punishment in respect of an offence constituting, in substance, an act of torture, Requested by the Armenian Court of Cassation (Request no. P16-2021-001) [GC] § 75-78, https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22003-7317048-9981911%22]}:

[155] ԱՆ, 8343-2023, 17 փետրվարի 2023թ.:

[156] Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին ՀՀ օրենքի հավելված, կետ 3, 23 մարտի 2018թ.; ՀՀ արդարադատության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին ՀՀ վարչապետի թիվ 704-Լ որոշում, 11 հունիսի 2018թ.:

կետի պատասխանատու նշանակում է տվյալ կետի կատարման համար հանձնառություն, երաշխավորություն կրող:[157]

Դա նշանակում է, որ ԳԾ մշակման գործընթացքում արդեն իսկ համարվել է, որ խոշտանգման հանցանքի նկատմամբ վաղեմության ժամկետի կիրառման սահմանափակումները օրենսդրորեն ամրագրելու գործողությունը վերաբերում է արդարադատության ոլորտին, հետևաբար, դրա ազդեցության իրականացման պատասխանատուն հանդիսանում է Արդարադատության նախարարությունը: Տվյալ համատեքստում պատասխանատվությունը ներառում է ամբողջ գործողությունը՝ այդ թվում, նախանշված ազդեցությունը, այս դեպքում՝ խոշտանգման դեպքերի, դրանց վերաբերյալ քրեական գործերի հարուցումը մերժելու կամ դրանք կարճելու մասին որոշումների նվազումը: Այս առումով, Արդարադատության նախարարությունը անռվազն պատասխանատվություն է կրում՝ չափելու, թե որքանով է իր իսկ նախանշած և իր պատասխանատվության ներքո գտնվող գործողության ազդեցությունը կատարվել կամ չի կատարվել:

Հետևաբար, գտնում ենք, որ Արդարադատության նախարարության ձեռքում նման տվյալների բացակայությունը վկայում է իր կողմից տվյալ գործողության պատասխանատվության թերի կատարման մասին:

Գործողություն 15

Մշակել «ֆիզիկական ուժեղ ցավ» և «հոգեկան տառապանք» եզրույթների մեկնաբանման և կիրառման վերաբերյալ ուղեցույցներ՝ միջազգային չափանիշներին համապատասխան

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ խոշտանգումների արգելքին նվիրված 15-րդ գործողությամբ նախատեսվել է մինչև 2021թ. առաջին կիսամյակը կատարել ուսումնասիրություն խոշտանգումների համատեքստում «ֆիզիկական ուժեղ ցավ» և «հոգեկան տառապանք» եզրույթների սահմանումների, դրսևորումների վերաբերյալ: Ակնկալվում է նաև, որ նույն ժամանակամիջոցում ՀՀ Արդարադատության ակադեմիայի կողմից ընդունված կլինի ուղեցույց իրավակիրառողների համար՝ նշված հասկացությունների մեկնաբանման և կիրառման վերաբերյալ, իսկ ուղեցույցը կիրառվելիս կլինի ՀՀ Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների շրջանակներում: Որպես ազդեցություն՝ ակնկալվում է, որ կնվազեն խոշտանգման դեպքերը, դրանց վերաբերյալ քրեական գործերով քրեական գործի հարուցումը մերժելու կամ դրանք կարճելու մասին որոշումները:

Գործողության կատարման համար պատասխանատու մարմինը ՀՀ արդարադատության նախարարությունն է, իսկ համակատարող մարմինները՝

- ՀՀ Արդարադատության ակադեմիան՝ համաձայնությամբ,
- ՀՀ գլխավոր դատախազությունը՝ համաձայնությամբ,
- ՀՀ հատուկ քննչական ծառայությունը՝ համաձայնությամբ,

[157] Տես օրինակ՝ Ստեփան Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան. Երեւան: Հայկական ՍՍՌ Պետական Հրատարակչութիւն (1944), էջ 1821, http://www.nayiri.com/search?dt=HY_HY&r=0&l=en&query=պատասխանատու.

- ՀՀ ոստիկանությունը:

Ֆինանսավորումը նախատեսվում է կատարել պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

2021թ. փետրվարին ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ-ում փոփոխությունների նախագծով առաջարկվել է ժամկետի փոփոխություն՝ գործողության կատարման վերջնաժամկետը 2021թ. առաջին կիսամյակից տեղափոխել 2022թ. առաջին կիսամյակ:[158]

Մշտադիտարկման արդյունքները

2021թ. հրապարակվել է «Ուժեղ ցավի տարրը խոշտանգման հասկացությունում. դրա մեկնաբանման և կիրառման վերաբերյալ» գործնական ուղեցույց, որը մշակվել է Արդարադատության նախարարության և Ռաուլ Վալենբերգի անվան Մարդու իրավունքների ու մարդասիրական իրավունքի ինստիտուտի (Raoul Wallenberg Institute of Human Rights and Humanitarian Law, RWI) համագործակցության արդյունքում: Ուղեցույցը մշակվել է միջազգային և տեղական փորձագետների կողմից՝ ՀՀ համապատասխան պետական հաստատությունների և քաղհասարակության կազմակերպությունների հետ խորհրդակցությունների աջակցությամբ: Ծրագիրը ֆինանսավորել է Շվեդիայի միջազգային զարգացման գործակալությունը (SIDA):[159]

Այն ներկայացնում և մեկնաբանում է ուժեղ ցավի կամ տառապանքի տարրի վերաբերյալ միջազգային և ՀՀ ներպետական նորմերն ու դատական պրակտիկան:[160]

Ուղեցույցը կիրառվել է Արդարադատության ակադեմիայի քրեական իրավունք առարկայի ուսուցման ընթացքում:[161]

Գործողություն 18

Ստեղծել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմ, որը կերաշխավորի դիմողի պաշտպանությունը

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ խոշտանգումների արգելքին նվիրված 18-րդ գործողությամբ նախատեսվել էր մինչև 2022թ. առաջին կիսամյակը ստեղծել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմ՝

[158] ՄԻՊ 2019թ. ռազմավարության 2020-2022թթ. ԳԾ փոփոխություններ և լրացումներ, Նախագիծ, էջ 1, https://www.e-draft.am/projects/3178/about:
[159] ԱՆ, /8436-2023, 17 փետրվարի 2023թ.; RWI, Syuzanna Soghomonyan and Ergun Cakal, The Element of Severe Pain in the Definition of Torture, 2021, https://rwi.lu.se/wp-content/uploads/2021/09/The-Element-of-Severe-Pain-in-the-Definition-of-Torture-2021.pdf (հասանելի է նաև հայերեն); տես նաև՝ ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2021թ. տարեկան հաշվետվություն, էջ 27-28, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=43162693d2cba48e4896&size_mode=1.
[160] RWI, Syuzanna Soghomonyan and Ergun Cakal, The Element of Severe Pain in the Definition of Torture, 2021, https://rwi.lu.se/wp-content/uploads/2021/09/The-Element-of-Severe-Pain-in-the-Definition-of-Torture-2021.pdf (հասանելի է նաև հայերեն):
[161] ԱՆ, /8436-2023, 17 փետրվարի 2023թ.:

զինված ուժերում ներդնելով խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու միջոցներ: 2021թ. ապրիլի դրությամբ՝ ԳԾ փոփոխությունների նախագծով, սակայն, առաջարկվել է փոփոխել տվյալ գործողությունը՝ դրանից հանելով «անանուն»-ը և ավելացնելով այնպիսի մեխանիզմ, որը կերաշխավորի դիմողի պաշտպանությունը»:[162] Որպես անմիջական արդյունք նախատեսվել է ՁՈՒ-ում ներդնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին հաղորդումներ ներկայացնող անձի պաշտպանությունը երաշխավորող մեխանիզմ:[163]

Նման մեխանիզմի ներդրմամբ ակնկալվում է, որ կնվազեն զինված ուժերում խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերը:

Գործողության կատարման և անմիջական արդյունքի համար պատասխանատու մարմինը պաշտպանության նախարարությունն է, իսկ համակատարող մարմինը՝ Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակը:

ԳԾ փոփոխությունների նախագծում նաև առաջարկվել է գործողության կատարման վերջնաժամկետը 2020թ. առաջին կիսամյակից տեղափոխել 2022թ. երկրորդ կիսամյակ:[164]

Մշտադիտարկման արդյունքները

2020-2022թթ. ընթացքում չի ստեղծվել դիմողի պաշտպանությունն ապահովող՝ պաշտպանական ոլորտում կամ զինված ուժերում խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին հաղորդումներ ներկայացնելու առանձին մեխանիզմ:

2020թ. դրությամբ ՀՀ պաշտպանության նախարարության մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնում արդեն գործել է «Թեժ գիծը», իսկ զինված ուժերի գլխավոր շտաբում ստեղծված է եղել «Վստահության գիծը», որը ծառայության է անցել 2020թ. ապրիլի 13-ից:[165]

Ըստ ՊՆ տրամադրած տեղեկության՝ խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերբերմունքի մասին տեղեկություն տրամադրելու դեպքում զինծառայողների տվյալները և հեռախոսահամարը գաղտնի են պահվում:[166] «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն մի քանի դեպքերով փորձ է ունեցել, երբ արդյունավետ կիրառվել է «Թեժ գծի» միջոցով իրավունքների խախտման համար անանուն հաղորդումներ ներկայացնելը: Ըստ ԽԵ ՀԿ-ի փորձի՝ քաղաքացիների հավաստմամբ հաճախ դժվարություններ են առաջանում «Թեժ գծին» միանալու ընթացքում: ՊՆ-ի

[162] ՄԻՊ 2019թ. ռազմավարության 2020-2022թթ. ԳԾ փոփոխություններ և լրացումներ, Նախագիծ, էջ 2, https://www.e-draft.am/projects/3178/about:
[163] ՄԻՊ 2019թ. ռազմավարության 2020-2022թթ. ԳԾ փոփոխություններ և լրացումներ, Նախագիծ, էջ 2, https://www.e-draft.am/projects/3178/about:
[164] ՄԻՊ 2019թ. ռազմավարության 2020-2022թթ. ԳԾ փոփոխություններ և լրացումներ, Նախագիծ, էջ 1-2, https://www.e-draft.am/projects/3178/about:
[165] ՊՆ, ՁՈՒ ԳԾ «Վստահության գիծը» կգործի ամենօրյա ռեժիմով, 17 ապրիլի, 2020թ., https://mil.am/hy/news/7729.
[166] ՊՆ/510-ԳՔ/1103, 1 մարտի 2023թ.:

պատճառաբանությունը ծանրաբեռնվածությունն է, հետևաբար, նախատեսվել է շատացնել քաղաքացիների զանգերի ընդունման գծերը:

ՊՆ կայքից տեղեկանում ենք, որ ԳԾ «Վստահության գիծը» հնարավորություն է տալիս դիմումները, առաջարկները կամ բողոքները, ըստ անհրաժեշտության, ներկայացնել նաև անանուն, իսկ զանգերի գաղտնիությունը երաշխավորվում է:[167] Սահմանվել է խիստ վերահսկողություն «Վստահության գիծ» դիմած զինծառայողների հետապնդումը բացառելու համար, իսկ դրա ի հայտ գալու դեպքում նշանակվում է ծառայողական քննություն և ընդունվում համարժեք որոշում:[168]

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն դեռևս կոնկրետ փորձ չի ունեցել «Վստահության գծի» գործունեության հետ կապված և չի կարող եզրակացություններ կատարել գործնականում դրա աշխատանքի և արդյունավետության վերաբերյալ:

Նույնը վերաբերում է ռազմական ոստիկանությունում անանուն հաղորդումներին:

Այսպիսով, ՀՀ ԶՈՒ-ում մարդու իրավունքների խախտումներով բողոքարկման մի քանի մեխանիզմի առկայության պայմաններում, մի քանի հարցեր են առաջանում ՄԻՊ գործողություն 18-ի վերաբերյալ: Նախ, ի՞նչ նկատի ունի «մեխանիզմ» ձևակերպումը. արդյո՞ք այն վերաբերում է նոր ինստիտուտի կամ նոր ընթացակարգի, թե՞ նոր ինստիտուտի և ընթացակարգի ստեղծմանը: Երկրորդ, եթե ՄԻՊ ռազմավարական փաստաթղթում ներառվել է խոշտանգումների և այլ վատ վերաբերմունքի մասին անանուն հաղորդումների մեխանիզմ ստեղծելու գործողությունը, ապա կարելի է ենթադրել, որ պետությունը ոչ բավարար է համարել գործող մեխանիզմները: Եվ վերջապես, տվյալ գործողությունը մշակելիս արդյո՞ք հաշվի են առնվել պաշտպանական ոլորտում գործող մեխանիզմների գոյությունը, նրանց գործունեության արդյունավետությունը, հնարավոր բացերը կամ թերացումները:

Հետևաբար, առանց այս հարցերի պատասխանների հնարավոր չէ ամբողջական եզրակացություն անել ՄԻՊ ռազմավարության գործողություն 18-ով նախատեսված՝ ԶՈՒ-ում խոշտանգման և այլ վատ վերաբերմունքի մասով անանուն հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմի ստեղծման անհրաժեշտության, հետո նաև բուն ստեղծման գործողության կատարման մասին:

Զորակոչիկների ընկալումները խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, դրանց մասին հաղորդումներ ներկայացնելու և գործող մեխանիզմների մասին

Խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի վերաբերյալ զորակոչիկների ընկալումները պարզելու նպատակով ԽԵ ՀԿ մշտադիտարկող խումբը նրանց հարցեր է ուղղել 2020թ.

[167] ՊՆ, ԶՈՒ ԳԾ «Վստահության գիծը» կգործի ամենօրյա ռեժիմով, 17 ապրիլի, 2020թ., https://mil.am/hy/news/7729; տես նաև՝ ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2021թ. տարեկան հաշվետվություն, էջ 29, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=43162693d2cba48e4896&size_mode=1:

[168] ՊՆ, ԶՈՒ ԳԾ «Վստահության գիծը» կգործի ամենօրյա ռեժիմով, 17 ապրիլի, 2020թ., https://mil.am/hy/news/7729:

ամառային, 2021թ. ձմեռային, 2022թ. ամառային և 2022թ. ձմեռային զորակոչերի ընթացքում:

Այն հարցի մեկ ասպեկտին ծանոթանալու համար մշտադիտարկող խումբը հարցրել է՝ **արդյոք հրամանատարն իրավունք ունի զինծառայողին հարվածելու**, եթե այո, ապա **որ դեպքերում և ինչ իրավիճակում**: 2020թ. ամառային զորակոչին հարցված 196 զորակոչիկների ճնշող մեծամասնությունը՝ 89,7%, ասել է, որ հրամանատարը չունի նման իրավունք, 8,7%-ը նշել է, որ որոշ հանգամանքներում հրամանատարը զինծառայողին հարվածելու իրավունք ունի:

2021թ. ձմեռային զորակոչի ընթացքում հարցված 527 զորակոչիկներից ճնշող մեծամասնությունը՝ 92,5%, պատասխանել է, որ նման իրավունք չկա, իսկ 7%-ը է նշել, որ որոշ հանգամանքներում հրամանատարը զինծառայողին հարվածելու իրավունք ունի: Ըստ նրանց՝ հրամանատարի կողմից զինծառայողի նկատմամբ բռնությունը արդարացված կլինի, եթե վերջինս հրաժարվում է կատարել հրամանը, չի ենթարկվել վերադասին կամ հենց ինքն առաջինն է բռնություն գործադրել կամ անձնական վիրավորանք է հնչեցրել հրամանատարի նկատմամբ: 2021թ. պատասխաններում որպես հարվածելու արդարացում ավելացել է նաև ռազմական դրությունը:

2022թ. ամառային զորակոչին հարցված 375 զորակոչիկների ճնշող մեծամասնությունը՝ 86%, նշել է, որ հրամանատարն իրավունք չունի հարվածելու զինծառայողին, 3%-ը՝ որ ունի, իսկ 9%՝ որ որոշ դեպքերում իրավունք ունի հարվածելու: Զորակոչիկների հրամանատարը իրավունք ունի հարվածելու զինծառայողին հրամանը չկատարելու կամ որևէ այլ սխալ կատարելու, անձնական վիրավորանքի դեպքում, և ի պատասխան զինվորի կողմից հարվածի:

2022թ. ձմեռային զորակոչին 325 հարցված զորակոչիկների ճնշող մեծամասնությունը՝ 85,5%, ևս ասել է, որ հրամանատարն իրավունք չունի հարվածելու զինծառայողին: 1,8%-ն ասել է, որ կա, իսկ 11%-ը համարել է, որ հարվածելու իրավունք կա որոշ դեպքերում: Հարցվածներից շատերի կարծիքով հրամանատարն իրավունք ունի հարվածելու զինծառայողին անձնական վիրավորանքի, հրամանը չկատարելու կամ որևէ այլ սխալ անելու դեպքում, և ի պատասխան զինվորի հարվածելուն: Ոմանք նույնիսկ գտել են, որ նման իրավունք կա առանց պատճառի, դաստիարակչական նպատակով և պետական դավաճանության համար:

Համադրելով վերոնշյալ տվյալները՝ տեսնում ենք, որ 2020-2022թթ. հարցված 1423 զորակոչիկների ճնշող մեծամասնությունը՝ 88,8%, համարել է, որ հրամանատարը իրավունք չունի հարվածելու զինծառայողին, 4,9%-ը՝ որ իրավունք ունի, իսկ 5,2%-ը՝ որ իրավունք ունի որոշ դեպքերում:

Այն հարցին, թե որ **մարմնին կդիմեն, եթե ենթարկվեն վատ վերաբերմունքի կամ ականատես լինեն համածառայակցի նկատմամբ վատ վերաբերմունքի**, 2020թ. ամառային զորակոչին 196 հարցվածների 58%-ը հայտնել է, որ չի դիմի ոչ մի մարմնի կամ կփորձի սեփական ուժերով լուծել խնդիրը, հրամանատարին կդիմեր 7,6%-ը , իսկ ՊՆ, «Թեժ գիծ»՝ 1,5%:

2021թ. ձմեռային զորակոչին 527 հարցվածներից ոչ ոքի չէր դիմի կամ ոչինչ չէր անի 61%-ը, հրամանատարին կդիմեր 12,5%-ը, իսկ ՊՆ, «Թեժ գիծ»՝ 1,3%-ը:

2022թ. ամառային և ձմեռային զորկոչերին մշտադիտարկող խումբը զորակոչիկներին հարցրել է, թե ինչ կանեն, ում կդիմեն այն դեպքում, եթե ականատես լինեն սպայի կամ վերադասի և (կամ) այլ զինվորի կողմից իրենց կամ իրենց ծառայակիցներին ծաղրելու, հայհոյելու, հարվածելու կամ ծեծելու դեպքում:

2022թ. ամառային զորակոչին 375 հարցված զորակոչիկներից, **սպայի կամ վերադասի կողմից** ծառայակից ընկերոջը **ծաղրելու, հայհոյելու, հարվածելու կամ ծեծելու դեպքում** հարցին շատերը՝ 32,8%, ասել են, որ հաշիվ կպահանջեն, 28,2%-ը նշել է, որ չգիտի, ու կախված է իրավիճակից: 21,8%-ը ոչինչ չէր անի, իսկ 19,4%-ն ինքն էլ ի պատասխան կհայհոյեր, կծաղրեր, կհարվածեր: 12,5% ասել է, որ կդիմի վերադաս (զորամասի) հրամանատարին, 2,4%-ը՝ ՌՈ, ՊՆ թեժ գիծ, ՄԻՊ թեժ գիծ, 5,6%-ը՝ ընկերներին կամ ծնողներին, իսկ 2,6%-ը՝ ընկերներին: 4,5%-ը՝ կփորձի ինքնուրույն լուծել՝ զրուցելով: Հարցվողներից ոմանք նաև նշել են, որ առիթ չեն ստեղծի կամ թույլ չեն տա, որ հասնի հարվածելուն, իսկ հակառակ դեպքում՝ հաշիվ կպահանջեն կամ կդիմեն հրամանատարին, ընկերներին կամ նույնիսկ Փաշինյանին:

2022թ. ամառային զորակոչին 375 հարցված զորակոչիկներից, **մեկ այլ զինվորի կողմից** ծառայակից ընկերոջը **ծաղրելու, հայհոյելու, հարվածելու կամ ծեծելու դեպքում** հարցին կեսից ավելին՝ 53,6%, ասել է, որ հաշիվ կպահանջի, շատերը ի պատասխան կհայհոյեին, կծաղրեին, կհարվածեին, կամ իրավիճակից կախված՝ կորոշեին ինչպես վարվել՝ 28%: 6,9%-ը ոչինչ չէր անի, կդիմեր հրամանատարին 6,1%-ը, ընկերներին կամ ծնողներին՝ 5,3%, միայն ընկերներին՝ 4%: Վեճն ինքնուրույն կլուծեր հարցվածների 3,2%-ը, իսկ ՌՈ, ՊՆ թեժ գիծ, ՄԻՊ թեժ գիծ կդիմեր 0,8%:

2022թ. ձմեռային զորակոչին 325 հարցվածներից **սպայի կամ վերադասի կողմից** ծառայակից ընկերոջը **ծաղրելու, հայհոյելու, հարվածելու կամ ծեծելու դեպքում** հարցին շատերը՝ 39%, պատասխանել է, որ հաշիվ կպահանջի, 33,2%-ը չի իմացել, 14,4%-ն ինքն էլ ի պատասխան կծաղրեր, կհայհոյեր ու կհարվածեր, 9,8%-ը ոչինչ չէր անի, 7,6%-ը կփորձեր խոսել, 2,7%-ը կդիմեր ընկերներին կամ ծնողներին, 1,8%-ը՝ ՌՈ, ՊՆ թեժ գիծ, ՄԻՊ թեժ գիծ:

2022թ. ձմեռային զորակոչին 325 հարցվածներից այլ զինվորի կողմից ծառայակից ընկերոջը **ծաղրելու, հայհոյելու, հարվածելու կամ ծեծելու դեպքում** հարցին մեծամասնությունը՝ 39%, ասել է, որ հաշիվ կպահանջի, 27,3%-ը կգործի կախված իրավիճակից, 24,6%-ն ի պատասխան կծաղրի, 8,9%-ը կխոսի, 4,9%-ը կդմինի հրամանատարին:

Համադրելով վերոնշյալ տվյալները, կարելի է եզրակացնել, որ 2020-2022թթ. 1423 հարցված զորակոչիկներից շատերը՝ 38%, խոշտանգման կամ այյլ վատ վերաբերմունքի ականատես լինելու դեպքում ոչինչ չէր անի կամ ոչ ոքի չէր դիմի: Բավական մեծ թիվ են կազմել նրանք, ովքեր պատասխան կհայհոյեին, կծաղրեին կամ կհարվածեին՝ 21,4%, հրամանատարին կդիմեր 11,7%-ը, Թեժ գիծ, ՄԻՊ կամ ՌՈ կդիմեր միայն 1,7%:

Գործողություն 19

Ապահովել խոշտանգումից տուժած անձանց հոգեբանական, սոցիալական և իրավական ծառայություններից օգտվելու իրավունքի արդյունավետ իրականացման մեխանիզմները

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ խոշտանգումների արգելքին նվիրված տասինիններորդ գործողությամբ նախատեսվել է ապահովել խոշտանգումից տուժած անձանց հոգեբանական, սոցիալական և իրավական ծառայություններից օգտվելու իրավունքի արդյունավետ իրականացման մեխանիզմները: Որպես անմիջական արդյունք՝ ակնկալվում է 2020թ. երկրորդ կիսամյակում բարելավել խոշտանգումից տուժած անձանց հոգեբանական, սոցիալական և իրավական ծառայություններից օգտվելու կարգը, պայմանները և արդյունավետ կիրառել այն:

Ակնկալվում է, որ սույն գործողության կատարմամբ խոշտանգման և այլ վատ վերաբերմունքի զոհերը պետության կողմից կապահովվեն վերականգնողական ծառայություններով, այդ թվում՝ բժշկական, հոգեբանական, սոցիալական և իրավական, ինչպես նաև կստեղծվեն երաշխիքներ խոշտանգման զոհերի իրավունքների վերականգնման ուղղությամբ:

Գործողության կատարման պատասխանատու մարմինը ՀՀ արդարադատության նախարարությունն է: Համակատարող մարմին նախատեսված չէ:

Ֆինանսավորումը կատարվելու է պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ-ի փոփոխությունների շրջանակներում այս գործողության իրականացման վերջնաժամկետը երկարաձգվել է[169] մինչև 2022թ. երկրորդ կիսամյակ:[170]

Մշտադիտարկման արդյունքները

ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոմիտեն իր 2017թ. զեկույցում մատնանշել է, որ անհանգստացնող է, որ գոյություն չունի պետության կողմից ֆինանսավորվող հանրային մասնագիտացված կենտրոն, որը կցուցաբերեր բազմամասնագիտական և ամբողջական վերականգնողական՝ այդ թվում՝ բժշկական, հոգեբանական, սոցիալական և իրավաբանական ծառայություններ խոշտանգման և վատ վերաբերմունքի տուժողների համար:[171] Բացի այդ՝ կոմիտեն առաջարկել էր, որպեսզի փոխհատուցում և վերականգնողական ծառայություններ՝ այդ թվում, պատճաշ բժշկական և հոգեբանական աջակցություն տրամադրվեն բանակում վատ վերաբերմունքի արժանացած զինծառայողներին:[172]

[169] ԱՆ, № /14.1/12102-2021, 11 մայիսի 2021թ.:

[170] ՄԻՊ 2019թ. ռազմավարության 2020-2022թթ. ԳԾ փոփոխություններ և լրացումներ, Նախագիծ, էջ 33, https://www.e-draft.am/projects/3178/about:

[171] UN CAT, Concluding observations 2017, §§ 45, 46:

[172] UN CAT, Concluding observations 2017, § 36:

Ըստ Արդարադատության նախարարության տրամադրած տեղեկության՝ ԱՆ-ը ԵԽ փորձագիտական աջակցությամբ մշակել է խոշտանգումից տուժած անձանց ռեաբիլիտացիայի իրավունքի վերաբերյալ միջազգային չափանիշների, արտասահմանյան փորձի և ներպետական օրենսդրության, պրակտիկայի համեմատական դիտարկմանն առնչվող հետազոտությունը:[173]

Տվյալ հետազոտությունը ԽԵ ՀԿ-ին հասանելի չէ: Սակայն հետևյալ դիտարկումն ունենք այս գործողության վերաբերյալ:

Չնայած գործողություն 19-ը իր բնույթով ընդգրկուն է, ներառելով հոգեբանական, սոցիալական և իրավական ոլորտները, սակայն գործողության կատարման համար սահմանվել է միայն պատասխանատու մարմին՝ Արդարադատության նախարարությունը, իսկ որևէ այլ պետական մարմին չի ընդգրկվել նույնիսկ որպես համակատարող: Այնինչ, տվյալ գործողության կատարումը կախված է առնվազն առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի և պաշտպանության նախարարությունների գործունեությունից՝ հաշվի առնելով, որ նրանցից յուրաքանչյուրը ունի առանձին լիազորություններ և պարտավորություններ նշված ոլորտներում:

Օրինակ, զինծառայողներին հոգեբանական, սոցիալական և իրավական ծառայությունների տրամադրումը չի սահմանափակվում միայն Պաշտպանության նախարարությամբ, այլ ներառում է այլ պետական մարմիններ ևս: Քանի որ ՀՀ ինստիտուցիոնալ համակարգը զինծառայողների հոգեբանական, սոցիալական և իրավական հարցերում ձևավորվել է տարիների ընթացքում՝ ենթարկվելով հաճախակի և ֆրանգմենտալ փոփոխությունների՝ այդ թվում, կառուցակարգերի ու նրանց լիազորությունների առումով, ոլորտի պատասխանատուների և վերահսկողություն իրականացնող մարմինների համար երբեմն խոչընդոտներ են առաջանում հստակ տարանջատելու լիազորությունների և պարտականությունների շրջանակները: Հետևաբար, բարդություններ են առաջանում համակարգային կրկնությունները և բացերը մատնանշելու գործում:

Առաջարկում ենք, առաջին հերթին, քարտեզագրել այս երեք ոլորտների համատեքստում պաշտպանական ոլորտին վերաբերող իրավական, ինստիտուցիոնալ և գործառութային ասպեկտները: Քարտեզագրման գործում կարող են օգտագործվել տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունները, որպեսզի հստակ և պատկերավոր վերհանվեն կրկնությունները և բացերը: Այնուհետև հնարավոր կլինի ավելի արդյունավետ որոշել, թե համակարգը բարելավվելու կամ վերափոխվելու ինչ կարիքներ ունի, և ինչ փոփոխություններ են անհրաժեշտ դրան հասնելու համար:

2020թ. և 2022թ. սեպտեմբերի ադրբեջանական հարձակումների հետևանքները

2020-2022թթ. ընթացքում ինչպես 2020թ. և 2022թ. սեպտեմբերի ադրբեջանական ագրեսիայի ընթացքում, այնպես էլ դրանցից դուրս բազմաթիվ զինծառայողներ և քաղաքացիական անձինք են գերեվարվել ադրբեջանական

[173] ԱՆ, 8327-2023, 17 հունվարի 2023թ.; տես նաև՝ ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2021թ. տարեկան հաշվետվություն, էջ 30-31, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=43162693d2cba48e4896&size_mode=1:

զորքերի կողմից: Ադրբեջանը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շարունակել է անօրինական կերպով իր վերահսկողության տակ պահել հայ զինծառայողների և քաղաքացիական անձանց՝ նրանց ենթարկելով խոշտանգումների, դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, սպանությունների՝ այդ թվում, կոլեկտիվ սպանությունների, և անօրինական քրեական հետապնդումների, ինչպես նաև օգտագործել նրանց որպես պատանդներ՝ Հայաստանից քաղաքական զիջումներ կորզելու նպատակով: Ըստ ՄԻԵԴ-ում հայ գերիների գործերով ներկայացուցիչ Սիրանուշ Սահակյանի՝ 2022թ. վերջի դրությամբ, Ադրբեջանում պահվում է առնվազն 113 հայ գերի:[174] 2022թ. Սեպտեմբերյան իրադարձությունների հետևանքով գերեվարման ենթարկվածների թիվը հայտնի չէ, սակայն 2022թ. հոկտեմբերին վերադարձված 17 գերիների թվում չէին հայտնի գնդակահարության տեսանյութի զինծառայողները:[175] 2022թ. փետրվարի դրությամբ, գերությունից ազատվել է 150 հոգի:[176]

Բազում փաստեր են հանրայնորեն հասանելի ադրբեջանցիների կողմից հայ գերիներին խոշտանգելու, այլ վատ վերաբերմունքի ենթարկելու և սպանելու մասին: Վերադարձված գերիներից առնվազն երկուսը՝ պարտադիր ժամկետային զինծառայողներ Սարո Մարկոսյանը և Նարեկ Ներսիսյանը, որոնց ծնողները ճանաչել էին տարածված տեսանյութերից, գերությունից վերադարձվելուց հետո ուղարկվել են ծառայությունը շարունակելու: Գերությունց վերադարձվելուց հետո զինծառայողներն անցել են բժշկական զննություն՝ այդ թվում՝ աշխատել են հոգեբանի հետ: Վերջինս նշել է, որ դեռ շատ են հանդիպելու, սակայն ոչ մի հետագա հոգեբանական օգնություն չի ցուցաբերվել զինծառայողներին: Սա այն դեպքում, որ զինծառայողները գերության պայմաններում ենթարկվել են վատ վերաբերմունքի, վերադարձից հետո հայտնել են, որ պատրաստ չեն ծառայության, ինչպես նաև նրանց մոտ վարքի փոփոխություններ են տեղի ունեցել:

Չնայած ԳԾ փոփոխություններով ավելացվել է նոր՝ պատերազմի հետևանքներին առնչվող 48.1 գործողությունը, որում ներառվել են գերության մեջ գտնվող, բայց ոչ գերությունից վերադարձված անձինք՝ որպես շահառուներ: Չնայած որ ադրբեջանական գերությունում գտնվելը ենթադրում է միաժամանակ խոշտանգումների և այլ վատ վերաբերմունքի ենթարկվելը, գործողություններ 19-ը և 48.1-ը նույնիսկ միասին վերցված, փաստորեն, չեն ապահովում գերությունից վերադարձած անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանությունը:

Անհրաժեշտ էր գործողություն 19-ում ավելացնել ենթակետ, որը կվերաբերեր զինված ուժերում և (կամ) զինված հակամարտության հետևանքով

[174] Սիրանուշ Սահակյանի հարցազրույցը՝ Hayeli.am, Հայ ռազմագերիներ. Ալիևը ձեռագիր է փոխել. Սիրանույշ Սահակյան, https://www.youtube.com/watch?v=qXC_U40daLk; Medialab, «38 հաստատված գերիներ շարունակում են պահվել Ադրբեջանում, իսկ առնվազն 80 գերեվարվածի հրաժարվում են հաստատել». Սիրանուշ Սահակյան, 18 մարտի 2022թ, available at https://medialab.am/218154/:

[175] Սիրանուշ Սահակյանի հարցազրույցը՝ Hayeli.am, Հայ ռազմագերիներ. Ալիևը ձեռագիր է փոխել. Սիրանույշ Սահակյան, https://www.youtube.com/watch?v=qXC_U40daLk:

[176] Իրազեկ քաղաքացիների միավորում, Գերիների հարցը. քանի հոգի, երբ և որ երկրի միջնորդությամբ է վերադարձել հայրենիք, 22 փետրվարի 2022թ., https://uic.am/15010:

խոշտանգումների և այլ վատ վերաբերմունքի ենթարկված անձանց հոգեբանական, սոցիալական և իրավական աջակցության ապահովմանը:

2021թ. փետրվարի 4-ին կառավարությունն ընդունեց որոշում՝ «Ադրբեջանի Հանրապետության կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած անձանց և հանրության հոգեբանական վերականգնման» կարգը, որում որպես շահառու ներառված էին նաև գերության մեջ գտնված անձինք:[177] Ծրագրի կատարումը դրվեց Արտակարգ իրավիճակների նախարարության պատասխանատվության ներքո:[178] Յոթ կազմակերպություն և մեկ անհատ և շուրջ 60 հոգեբաններ ընտրվեցին՝ միանալու կոնսորցիումին, և ծրագիրը մեկնարկեց 2021թ. հուլիսին:[179]

Ըստ Պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկության՝ անհրաժեշտությունից ելնելով՝ 2020թ. հոկտեմբերի 12-ից մինչև 2021թ. դեկտեմբերի 24-ը ՊՆ «Լեռնային Հայաստան» հանգստյան տուն պետական հիմնարկում ծավալված Երևանի կայազորային հոսպիտալի «Հետտրավմատիկ հոգեվերականգնողական բաժանմունքում» վերականգնողական բուժում և հոգեբանական աջակցություն են ստացել հոգեկան տրավմաներ ստացած՝ այդ թվում նաև գերությունից վերադարձած զինծառայողները:[180]

ԽԵ ՀԿ-ին պարզ չեն, թե պետությունը որ հոգեբանական աջակցությունն է համարել «անհրաժեշտ» և ինչ չափանիշների հիման վրա, ըստ որի որոշել է, թե գերությունից վերադարձած որ անձանց է անհրաժեշտ եղել տրամադրել այդ աջակցությունը:

Բացի այդ, ՊՆ-ն նշել է, որ չի տիրապետում 2021թ. փետրվարի 4-ի որոշման ծառայությունների և շահառուների քանակի վերաբերյալ տեղեկատվության: Իսկ Արդարադատության նախարարությունը, չնայած լինելով գործողություն 19-ի կատարման միակ պատասխանատու պետական մարմինը, հայտնել է, որ խոշտանգումից և այլ վատ վերաբերմունքից տուժած անձանց մատուցված ծառայությունների վերաբերյալ վիճակագրական տվյալներ առկա չեն,[181] և ադրբեջանական գերությունից վերադարձած զինծառայողներին տրամադրվող վերականգնողական ծառայությունների մասին տեղեկությունները դուրս են ԱՆ իրավասությունից: Ավելին, ՀՔԱՎ-ի մշտադիտարկան արդյունքում պարզ է դարձել, որ նույնիսկ հոգեբուժական ծառայություններ մատուցող

[177] ՀՀ կառավարություն, Ադրբեջանի Հանրապետության կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած անձանց և հանրության հոգեբանական վերականգնման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության թիվ 131 - Ն որոշում, 4 փետրվարի 2021թ., https://www.e-gov.am/gov-decrees/item/35548/:

[178] ՀՀ կառավարություն, «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության թիվ 639-Ն որոշում, 22 ապրիլի 2021, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151999:

[179] ՀՔԱՎ, Տեղեկանք, Ադրբեջանի Հանրապետության կողմից 2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի մասնակիցների և հանրության հոգեբանական վերականգնման աշխատանքները, Տեղեկանք, 22 դեկտեմբերի 2021, էջ 6-7, https://hcav.am/wp-content/uploads/2021/12/հոգեբանական-վերականգնում.pdf:

[180] ՊՆ/510-ԳՔ/1004, 22 փետրվարի 2023թ.:

[181] ԱՆ, 8327-2023, 17 հունվարի 2023թ.:

կազմակերպությունները իրազեկված չեն եղել պետական այս ծրագրի մասին, և նրանց հետ համագործակցությունը բացակայել է:[182]

Պաշտպանության նախարարությունը նաև նշել է, որ հետազոտության արդյունքներով, հետագա զինվորական ծառայության ընթացքում զինծառայողներին տրամադրվող հոգեբանական աջակցությունը շարունակվում է զորամասերում՝ սպա-հոգեբանների միջոցով:[183] Սպա-հոգեբանների ինստիտուտը ՀՀ զինված ուժերում գործում է 2013թ.-ից:

ԽԵ-ն չէր կարող մշտադիտարկել զորամասերում սպա-հոգեբանների աշխատանքը, սակայն մշտադիտարկող խումբը սպա-հոգեբանների մասով հարցեր է ուղղել վերջին տարիներին պարտադիր ժամկետային ծառայություն անցած և զորացրված անձանց: Հարցվածների ճնշող մեծամասնությունն (84%) ասել է, որ իրենց զորամասում եղել է սպա-հոգեբան, իսկ 12%-ը՝ որ չի եղել: Սակայն ճնշող մեծամասնությունը չի դիմել սպա-հոգեբանին, 5,3%-ը դիմել է, իսկ 14,9%-ը ասել է, որ հոգեբանի հետ խմբային հանդիպումներ են ունեցել: Ծառայության ժամանակ սպա-հոգեբանին դիմածների մեծամասնության համար օգտակար և արդյունավետ է եղել մասնագետի հետ շփումը: Նրանց կեսից ավելին, ովքեր չեն դիմել սպա-հոգեբանի, ասել է, որ դրա կարիքը չի ունեցել: Ոմանք չեն դիմել, որովհետև կարծել են, որ տղամարդուն վայել չէ, կամ վստահ չէին, որ իրենց զրույցը հրամանատարությանը կամ ռազմական ոստիկնությանը չէր հասցվի, կասկածել են մասնագիտական կարողությունների վրա, ծառայակիցների քննադատությանը չեն ցանկացել արժանանալ:[184]

Հարցվածները նաև անդրադարձել են զորամասի իրավաբանների ինստիտուտին՝ կարգապահական տույժ կիրառելու համատեքստում: Հարցվածներից ոչ ոք չի նշել, որ նշանակված տույժի կապակցությամբ դիմել է զորամասի իրավաբանին, քանի որ չի վստահել նրան:[185] Որևէ պատճառ չենք տեսնում չեզրակացնելու, որ նման անվստահությունը առկա է ոչ միայն կարգապահական տույժերի, այլ նաև այլ հարցերի՝ հատկապես, ավելի ծանր խախտումների՝ ինչպիսին է խոշտանգման կամ այլ վատ վերաբերմունքին ենթարկվելու դեպքում:

Արդարադատության նախարարությունը, ի պատասխան ԽԵ ՀԿ-ի հարցմանը՝ որպես գործողություն 19-ի կատարում, նշել է, որ Հանրային պաշտպանին իրավունք է տրվել խոշտանգումից տուժած անձանց իրավական օգնություն տրամադրել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով սահմանված կարգով փոխհատուցում ստանալու նպատակով:[186]

---

[182] ՀՔԱՎ, Տեղեկանք, Ադրբեջանի Հանրապետության կողմից 2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի մասնակիցների և հանրության հոգեբանական վերականգնման աշխատանքները, Տեղեկանք, 22 դեկտեմբերի 2021, էջ 12-14, 16-17, https://hcav.am/wp-content/uploads/2021/12/հոգեբանական-վերականգնում.pdf:
[183] ՊՆ/510-ԳՔ/1004, 22 փետրվարի 2023թ.:
[184] «Խաղաղության երկխոսություն» ՀԿ, ՀՀ Զինված Ուժերում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների վերհանման նպատակով իրականացված հարցազրույցների վերլուծություն, Վանաձոր, հոկտեմբեր 2022թ., էջ 29-32, https://peacedialogue.am/2022/10/07/hr_survey_arm/:
[185] «Խաղաղության երկխոսություն» ՀԿ, ՀՀ Զինված Ուժերում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների վերհանման նպատակով իրականացված հարցազրույցների վերլուծություն, Վանաձոր, հոկտեմբեր 2022թ., էջ 49, https://peacedialogue.am/2022/10/07/hr_survey_arm/:
[186] ԱՆ, 8327-2023, 17 հունվարի 2023թ.:

Հարկ ենք համարում մատնանշել, որ Հանրային պաշտպանի գրասենյակը այս լիազորությունը ունեցել է դեռևս 2020թ.-ից առաջ, հետևաբար, այս փաստը չի հանդիսանում 2020-2022թթ. ԳԾ-ի կատարման վկայություն:

Եվ վերջապես, Առողջապահության նախարարությունը, չնայած որ պաշտոնական գրությամբ պատասխանել է գործողություն 19-ի կատարման մասով ԽԵ ՀԿ-ի հարցերին, սակայն պարզապես հղումներ է կատարել պետության կողմից բժշկական սպասարկման մասին 2004, 2013, 2015 թվականների կառավարության որոշումների ու դրանց բովանդակությանը:[187] Հետևաբար Առողջապահության նախարարության պատասխանը որևէ կերպ լույս չեն սփռում այս գործողության կատարված լինելու կամ չլինելու վրա: Իսկ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը նշել է, որ գործողություն 19-ի համատեքստում հայցվող տեղեկատվության տրամադրումը դուրս է տվյալ նախարարության գործառույթների տիրույթից:[188]

Ցավալի է, բայց հարցումներին խուսափողական պատասխանները տեսել ենք պետական մարմինների կողմից, որը ոչ միայն թափանցիկության, այլ նաև տվյալներին չտիրապետելու կամ տիրապետել չցանկանալու, իրենց իսկ մշակած և իրականացվելիք ծրագրերի ընթացքին չհետևելու և հաշվետվողականության բացակայության մասին է վկայում:

Պատերազմի հետևանքով ստեղծված նոր մարտահրավերների պայմաններում անհրաժեշտ էր ոչ թե երկարաձգել Գործողություն 19-ի կատարման վերջնաժամկետը, այլ՝ ընդհակառակը, արագ և համակողմանի քայլեր ձեռնարկել՝ այդ թվում, օրենսդրական մակարդակում, զինծառայողներին անհրաժեշտ վերականգնողական՝ այդ թվում՝ հոգեբանական ծառայություններ մատուցելու ուղղությամբ:

2020-2022թթ. ընթացքում խոշտանգումից տուժած անձանց հոգեբանական, սոցիալական և իրավական ծառայություններից օգտվելու իրավունքի իրականացման մեխանիզմները զինված ուժերի մասով չի կարելի համարել ամբողջական, քանի որ համապատասխան պատասխանատու և կատարող մարմին չի սահմանվել: 2021թ. փետրվարին նախաձեռնված ծրագիրը ևս համապարփակ չի եղել, կարճ է տևել, չի ներառել բոլոր շահառուներին, ծրագրի կատարման վրա պատշաճ վերահսկողություն չի սահմանվել: Սակայն, անհրաժեշտ է երկարաժամկետ և համապարփակ ծրագիր մշակել զինված ուժերի և (կամ) զինված հակամարտության հետ կապված խոշտանգումից տուժած անձանց շարունակական աջակցություն ցուցաբերելու համար՝ հաշվի առնելով, հոգեկան առողջության ախտանիշների կրկնությունը:

Գործողություն 26

Վերապատրաստումներ իրականացնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի թեմայով՝ միջազգային չափանիշներին

[187] Առողջապահության նախարարություն, ՎՀ/02.1/3538-2023, 16 փետրվարի 2023թ.:
[188] Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՄՄ/ՔՀ-4-2-/8080-2023, 5 ապրիլի 2023թ.:

համապատասխան, այդ թվում՝ ռազմական ոստիկանների, քննիչների, դատախազների, դատավորների համար

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ խոշտանգումների արգելքին նվիրված քսանվեցերորդ գործողությամբ նախատեսել է վերապատրաստումներ իրականացնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի թեմայով՝ միջազգային չափանիշներին համապատասխան:

Ակնկալվում է 2020-2022թթ. ընթացքում վերապատրաստել

- ռազմական ոստիկանների 35%-ին,
- քննիչների 51%-ին,
- դատախազների 7%-ին,
- դատավորների 10%-ին:

Ակնկալվում է, որ վերապատրաստումների արդյունքում կնվազեն ռազմական ոստիկանության բաժիններում գտնվող անձանց, քրեական դատավարության մասնակիցների նկատմամբ խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերը:

Ռազմական ոստիկանների վերապատրաստման համար պատասխանատու մարմինը ՀՀ պաշտպանության նախարարությունն է, համակատարող մարմինները՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը՝ համաձայնությամբ, և Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակը:

ՀՀ արդարադատության նախարարությունը խոշտանգումների արգելքի թեմայով քննիչների, դատախազների և դատավորների վերապատրաստման համար պատասխանատու մարմինն է: Քննիչների վերապատրաստման համար համակատարող մարմիններ են սահմանվել ՀՀ Արդարադատության ակադեմիան՝ համաձայնությամբ, ՀՀ քննչական կոմիտեն՝ համաձայնությամբ, ՀՀ հատուկ քննչական ծառայությունը՝ համաձայնությամբ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը՝ համաձայնությամբ, և Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակը:

Դատախազների վերապատրաստումների համար որպես համակատարող մարմիններ են նախանշվել ՀՀ Արդարադատության ակադեմիան՝ համաձայնությամբ, ՀՀ գլխավոր դատախազությունը՝ համաձայնությամբ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը՝ համաձայնությամբ, և Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակը, իսկ դատավորների վերապատրաստումների համար՝ ՀՀ Արդարադատության ակադեմիան՝ համաձայնությամբ, Դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողովը՝ համաձայնությամբ, և Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակը:

Ֆինանսավորումը կատարվելու է պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

Մշտադիտարկման արդյունքները. ընդհանուր դիտարկումներ

ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոմիտեն իր 2017թ. եզրափակիչ դիտարկումներում նշել էր, որ անհրաժեշտ է զարգացնել պարտադիր ծառայողական վերապատրաստումները խոշտանգումների կանխարգելման և Ստամբուլյան արձանագրության հիման վրա դրանց արդյունավետ արձանագրման ու փաստաթղթավորման վերաբերյալ: **Կոմիտեն նաև առաջարկել էր մշակել և կիրառել հատուկ մեթոդաբանություն՝ գնահատելու այդ վերապատրաստումների ազդեցությունը խոշտանգումների նվազեցման, ինչպես նաև խոշտանգումների դեպքերի քննության արդյունավետության վրա:** Առաջարկվել էր մշակել վերապատրաստման ծրագրեր քննության իրականացման ոչ հարկադրական միջոցների կիրառման վերաբերյալ:[189]

Չնայած որ վերապատրաստումների արդյունքում կառավարությունն ակնկալում է նվազեցնել ռազմական ոստիկանության բաժիններում գտնվող անձանց, քրեական դատավարության մասնակիցների նկատմամբ խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերը, սակայն զեկույցի հրապարակման պահին որևէ **մեթոդաբանություն մշակված չի եղել՝** գնահատելու այդ վերապատրաստումների ազդեցությունը խոշտանգումների նվազեցման և խոշտանգումների դեպքերի քննության արդյունավետության վրա:

Խոշտանգումների արգելքի վերաբերյալ **վերապատրաստումներ չեն նախատեսվել փաստաբանների համար**: Խոշտանգումների արգելքի նյութական և ընթացակարգային ասպեկտների մասին փաստաբանների խորը գիտելիքները և գործնական հմտությունները, սակայն, հավելյալ երաշխիք են դրա խախտման դեպքերով տուժողների իրավունքների պաշտպանության և իրենց դատավարական իրավունքների խախտումները կանխելու տեսանկյունից: Սա հատկապես վերաբերում է զինված ուժերում խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի դեպքերին, քանի որ տուժողների իրավունքներն ավելի խոցելի են դառնում ոլորտի զգայունության և գաղտնիք պարունակող տեղեկատվության հետ աշխատանքի առկայությամբ:

Բացի այդ, **հրամանատարների համար խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի թեմայով վերապատրաստումներ չեն նախատեսվել,** այնինչ զորամասերում հենց հրամանատարներն են պատասխանատու ինչպես խոշտանգումները կանխելու, այնպես էլ նախնական փուլում դրանց հետաքննության համար:[190]

Մշտադիտարկման արդյունքները. ռազմական ոստիկանների վերապատրաստում

Ըստ ՊՆ գրության՝ 2020-2022թթ. ընթացքում խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի թեմայով՝ միջազգային չափանիշներին համապատասխան, վերապատրաստվել է

[189] UN CAT, Concluding observations 2017, § 43-44, UN CAT, Concluding observations 2012, § 25:
[190] ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 1 հուլիսի 1998թ., հոդված 56 (1), 56 (8):

Ռազմական ոստիկանության կարգապահական վաշտի, ընդունիչ-բաշխիչի և կարգապահական մեկուսարանի անձնակազմի 29%-ը:[191]

Մշտադիտարկման արդյունքները. քննիչների վերապատրաստում

Արդարադատության ակադեմիայի քննիչների տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրում ընդգրկվել է **«Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր»** դասընթացը, որի առարկայական ծրագրում, որպես առանձին թեմա, նախատեսվել է քրեական իրավունքի և դատավարության ոլորտում խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի արգելքի, ռասիզմի և խտրականության արգելքի պաշտպանությանն առնչվող ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքի վերաբերյալ թեմաները, ինչպես նաև ՀՀ նկատմամբ դրա կիրառման հիմնահարցերը[192]:

Արդարադատության ակադեմիան անցկացրել է նաև **«Զինված ուժերի համատեքստում խոշտանգումների, վատ վերաբերմունքի և մահվան դեպքերի արդյունավետ քննության վերաբերյալ»** դասընթաց:[193]

Մշտադիտարկման արդյունքները. դատախազների վերապատրաստում

ՀՀ Արդարադատության ակադեմիայի կողմից դատախազների համար իրականացվել է **«Զինվորական հանցագործությունների որակման և քննության մեթոդիկայի առանձնահատկությունները»** դասընթաց:

ՀՀ Արդարադատության ակադեմիայի կողմից դատախազների համար իրականացվել է **«Խոշտանգումների քրեաիրավական բնութագիրը և քննության առանձնահատկությունները»** դասընթացը, որի շրջանակներում ուսումնասիրվում են նաև ՄԻԵԴ չափանիշները:

ՀՀ Արդարադատության ակադեմիան անցկացրել է **«Զինված ուժերի համատեքստում խոշտանգումների, վատ վերաբերմունքի և մահվան դեպքերի արդյունավետ քննության վերաբերյալ»** սեմինար:[194]

---

[191] ՊՆ/510-ԳՔ/1249, 9 մարտի 2023թ.; տես նաև՝ ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2021թ. տարեկան հաշվետվություն, էջ 37, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=43162693d2cba48e4896&size_mode=1:

[192] ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 17-18, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=976038ef7fd6eba6832&size_mode=1; ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2022թ. տարեկան հաշվետվություն, էջ 11-12, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=8816640f5b3a56b9b4345&size_mode=1:

[193] 2020թ. Առաջին կիսամյակային հաշվետվություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ, 20 հուլիսի, 2020 թ., էջ 27; ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2021թ. տարեկան հաշվետվություն, էջ 38, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=43162693d2cba48e4896&size_mode=1; ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2022թ. տարեկան հաշվետվություն, էջ 11-12, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=8816640f5b3a56b9b4345&size_mode=1:

[194] Կիսամյակային հաշվետվություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ, 20 հուլիսի, 2020 թ., էջ 27-28; ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2021թ. տարեկան հաշվետվություն, էջ 39, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=43162693d2cba48e4896&size_mode=1; ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2022թ. տարեկան հաշվետվություն, էջ 11-12, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=8816640f5b3a56b9b4345&size_mode=1:

Մշտադիտարկման արդյունքները. դատավորների վերապատրաստում

ՀՀ Արդարադատության ակադեմիայում դատավորների և դատավորների թեկնածուների վերապատրաստման ծրագրում ընդգրկված է եղել **«Խոշտանգումների քրեաիրավական բնութագիրը և քննության առանձնահատկությունները»** դասընթացը:[195] Վերապատրաստման ուսուցման ծրագրում ընդգրկվել է նաև **«Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր»** դասընթացը, որի ծրագրում որպես առանձին թեմա նախատեսվել է քրեական իրավունքի և դատավարության ոլորտում խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի արգելքի, ռասիզմի և խտրականության արգելքի պաշտպանությանն առնչվող ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքի վերաբերյալ թեմաները, ինչպես նաև ՀՀ նկատմամբ դրա կիրառման հիմնահարցերը:[196]

ՀՀ Արդարադատության ակադեմիան անցկացրել է **«Զինված ուժերի համատեքստում խոշտանգումների, վատ վերաբերմունքի և մահվան դեպքերի արդյունավետ քննության վերաբերյալ»** դասընթաց:[197]

Դասընթացների անցկացման և մասնակիցների մասով հաշվետվությունում մանրամասներ ներկայացված չեն:

ՀՀ զինված ուժերում խոշտանգումների արգելքի ապահովմանն ուղղված առաջարկներ

- Սահմանել զինված ուժերում խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերը որպես այդպիսին համարելու, բացահայտված կամ չբացահայտված լինելու հստակ չափանիշներ և դրանց հիման վրա հրապարակել վիճակագրական տվյալներ:

- ՄԻՊ ԳԾ-ում ներառել ելակետային տվյալներ զինված ուժերում խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի, ինչպես նաև այդ դեպքերի քննության վերաբերյալ:

- Ապահովել զինված ուժերում խոշտանգման դեպքերի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածին և 2021թ. մայիսին ընդունված նոր քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածին համաձայն գործերի քննությունը և մեղավորների դատապարտումը:

---

[195] ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 19, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=976038ef7fd6eba6832&size_mode=1; ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2022թ. տարեկան հաշվետվություն, էջ 13, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=8816640f5b3a56b9b4345&size_mode=1:

[196] ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 19, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=976038ef7fd6eba6832&size_mode=1; ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2022թ. տարեկան հաշվետվություն, էջ 13, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=8816640f5b3a56b9b4345&size_mode=1:

[197] Կիսամյակային հաշվետվություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ, 20 հուլիսի, 2020 թ., էջ 28-29; ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2021թ. տարեկան հաշվետվություն, էջ 40-41, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=43162693d2cba48e4896&size_mode=1; ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2022թ. տարեկան հաշվետվություն, էջ 13, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=8816640f5b3a56b9b4345&size_mode=1:

- Ապահովել զինված ուժերում խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերով գործերի արդյունավետ քննությունը՝ այդ թվում, բարեփոխումների օրակարգ նախատեսելով բժշկական զննությունների ինստիտուցիոնալ և գործնական թերությունները վերացնելու համար:

- Չհետաձգել Գործողություն 19-ով նախատեսված՝ խոշտանգումից տուժած անձանց հոգեբանական, սոցիալական և իրավական ծառայություններից օգտվելու իրավունքի արդյունավետ իրականացման մեխանիզմների գործակցումը: Անհապաղ պաշտաճ հոգեբանական աջակցություն ցուցաբերել 2020թ. սեպտեմբերի 27-ի, 2022թ. սեպտեմբերի 13-ի ռազմական գործողությունների արդյունքում, ինչպես նաև 2020-2022թթ. ընթացքում այլ գերեվարված և վերադարձված անձանց:

- Մշակել հատուկ մեթոդաբանություն՝ գնահատելու խոշտանգումների ու վատ վերաբերմունքի թեմայով վերապատրաստումների ազդեցությունը խոշտանգման ու վատ վերաբերմունքի դեպքերի նվազեցման և դրանց քննության արդյունավետության վրա՝ ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոմիտեի 2017թ. եզրափակիչ դիտարկումներին համապատասխան:

- Նախատեսել 2020-2022թթ. ԳԾ-ով զինված ուժերում ոչ միայն կյանքի իրավունքին, այլ նաև խոշտանգումների ու վատ վերաբերմունքի արգելքին նվիրված իրազեկող նյութերի, տեսաձայնագրությունների և ակցիաների իրականացում: Իրականացնել այդ իրազեկման միջոցառումները մինչ պարտադիր զինծառայության զորակոչվելը, ծառայության ընթացքում, ռազմական ուսումնական հաստատություններում, ծառայող սպաների, ՌՈ շրջանում: Պաստառներում և այլ իրազեկող նյութերում ներառել արգելված արարքի ձևերը: Քննություն իրականացնող մարմիններին իրազեկել այս հանցագործության քննության հատուկ մեթոդների՝ այդ թվում, ստամբուլյան արձանագրության հիման վրա ապացույցներ հավաքելու և պահպանելու մասին:

- Գլխավոր դատախազի 2021թ. ապրիլի 4-ի հրամանը, որը վերաբերում է մահվան դեպքերի արագ և թափանցիկ քննության չափորոշիչներ սահմանելուն, կիրառել նաև մահվան չհանգեցրած խոշտանգման կամ այլ վատ վերաբերմունքի դեպքերի քննությունում:

- Ուսումնասիրություն իրականացնել՝ պարզելու ՌՈ և այլ իրավապահ մարմիններին զինծառայողների կողմից չվստահելու խորքային պատճառները: Քայլեր ձեռնարկել այդ պատճառները վերացնելու ուղղությամբ:

- Իրականացնել վերապատրաստումներ խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի թեմայով նաև հրամանատարների և սպաների համար:

- Փաստաբաններին ևս ներգրավել զինված ուժերում խոշտանգումներից և վատ վերաբերմունքի այլ ձևերից զերծ մնալու իրավունքի թեմայով վերապատրաստումներում:

- Քարտեզագրել սոցիալական, իրավաբանական և հոգեբանական աջակցության ոլորտներում պաշտպանական ոլորտին վերաբերող իրավական, ինստիտուցիոնալ և գործառույթային ասպեկտները և տարբեր պետական կառույցների պարտավորությունների շրջանակները: Սահմանել համապատասխան պատասխանատու և կատարող մարմին զինված ուժերում սոցիալական, իրավաբանական և հոգեբանական աջակցության տրամադրումն ապահովելու հարցում:

- Մշակել սոցիալական, իրավաբանական և հոգեբանական աջակցության ոլորտների համար համապարփակ, շարունակական և երկարաժամկետ ծրագրեր՝ ներառելով բոլոր շահառուներին և սահմանելով ծրագրերի կատարման վերահսկողության պատշաճ մեխանիզմ: Ծրագրերը պետք է ներառեն ինչպես զինված հակամարտությունում, այնպես էլ դրանից դուրս ՁՈՒ-ում խոշտանգումից տուժած անձանց շարունակական հոգեբանական, սոցիալական և իրավական աջակցության ապահովումը և հաշվի առնեն հոգեկան առողջության ախտանիշների կրկնությունը:

ԳՈՐԾԻ ԱՐԴԱՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

2019թ. ՄԻՊ ռազմավարությունը շեշտում է, որ գործի արդարացի քննության իրավունքը ժողովրդավարական հասարակությունում մարդու իրավական անվտանգության երաշխիքն է:[198] Ռազմավարությունը և 2020-2022թթ. ԳԾ-ն առավելապես թիրախավորում են քրեական արդարադատության ոլորտում գործերի արդարացի քննությունը, մասնավորապես, նախնական քննության կատարելագործման նպատակով իրականացվող միջոցառումներով:

Ընդհանուր դիտարկումներ

2020-2022թթ. ԳԾ-ն նպատակ է դնում նվազեցնել գործի արդար քննության իրավունքի ենթադրյալ խախտմամբ ՄԻԵԴ ներկայացված բողոքների քանակը, իսկ որպես խնդիր մատնանշել է մեղադրյալ անձանց նկատմամբ մարդու իրավունքների խախտումների քանակի և բողոքների նվազումը: Սակայն ո՛չ ՄԻՊ ռազմավարությունը, ո՛չ էլ 2020-2022թթ. ԳԾ-ն չեն ներկայացնում կառավարության որոշման ընդունման պահին այդպիսի խախտումների հասանելի քանակական տվյալներ: Հետևաբար, արդար քննության իրավունքի և, հատկապես, մեղադրյալի այդ իրավունքի խախտման դեպքերի նվազումը չափելն անհնար է դառնում:

Միջազգային մասնագիտացված մարմինները նշել են, որ չնայած օրենսդրական նախաձեռնություններին, որոնցով արգելվում է խոշտանգմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը դատարանում, գործնականում հարկադրաբար վերցված խոստովանական ցուցմունքները դատարանում օգտագործվում են որպես ապացույց: Զինծառայողները՝ այդ թվում, տուժողները, ևս ենթարկվում են խոշտանգման կամ վատ վերաբերմունքի՝ նրանցից տեղեկություններ ստանալու նպատակով:[199]

Գործի արդար քննության իրավունքին նվիրված գործողություններ

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ-ում գործի արդար քննության իրավունքի ապահովմանն ուղղված գործողություններից «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն մշտադիտարկել է գործողություններ 27-ը, 28-ը և 34-ը, որոնք նվիրված են քննչական և դատավարական գործողությունների տեսաձայնագրման ապահովմանը, քննչական բաժինների կահավորմանը, արդար քննության իրավունքի թեմայով ռազմական ոստիկանների, քննիչների, դատախազների,

[198] ՄԻՊ 2019թ. ռազմավարություն, էջ 23, https://www.moj.am/storage/uploads/1Razmavarutyun.MIP.pdf:
[199] UN CAT, Concluding observations 2017, § 13, UN CAT, Concluding observations 2012, § 16, UN Working group on arbitrary detention visit to Armenia report 2011, § 67; CoE Commissioner for Human Rights, Report 2015, § 86; ECtHR, Harutyunyan v. Armenia (36549/03), 28 September 2007, §§ 59, 64, 65:

դատավորների վերապատրաստումներին: Ստորև ներկայացվում են այդ գործողությունների մշտադիտարկման արդյունքները:

Գործողություն 27

Ապահովել քննչական և դատավարական գործողությունների տեսաձայնագրումը

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ-ի գործի արդար քննության իրավունքին նվիրված 27-րդ գործողությամբ նախատեսվել է մինչև 2022թ. առաջին կիսամյակն ապահովել քննչական և դատավարական գործողությունների տեսաձայնագրումը:

Ակնկալվում է, որ մինչև սահմանված վերջնաժամկետը ՀՀ քննչական կոմիտեի 85 ստորաբաժանումներում առկա կլինեն տեսաձայնագրման միջոցներ:

ՀՀ քննչական կոմիտեում տեսաձայնագրման միջոցների տեղադրման պատասխանատու մարմինը ՀՀ քննչական կոմիտեն է՝ համաձայնությամբ: Համակատարող մարմին չի սահմանվել:

Ֆինանսավորումը կատարվելու է պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

Մշտադիտարկման արդյունքները

ՀՀ Արդարադատության նախարարության տրամադրած տեղեկության համաձայն՝ 2022թ. դեկտեմբերի դրությամբ ՀՀ քննչական կոմիտեի ոչ մի ստորաբաժանում ապահովված չի եղել տեսաձայնագրման սարքավորումներով և կահավորման գործընթացքը դեռևս գտնվել է ընթացքի մեջ: Նախարարությունը որպես պատճառ նշել է, որ ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի՝ պարտադիր տեսաձայնագրման պահանջի վերաբերյալ հոդված 214(3)-ը ուժի մեջ է մտնում 2023թ. հուլիսի 1-ից:[200]

Վերնշյալ պատճառաբանությունը, սակայն, չի կարող բավարարել տվյալ գործողությունը որպես կատարված համարելը հետևյալ պատճառներով. առաջին. գործողություն 27-ը հստակ նշում է, որ մինչև 2022թ. առաջին կիսամյակ ՀՀ քննչական կոմիտեի 85 ստորաբաժանումներում պետք է առկա լինեին տեսաձայնագրման միջոցներ: Երկրորդ, եթե նույնիսկ ՀՀ նոր Քրեական դատավարության օրենսգրքով տեսաձայնագրումը պարտադրող նորմը ուժի մեջ պետք է մտնի 2023թ. հուլիսին, միևնույնն է, տեսաձայնագրման միջոցները պետք է տեղադրված, փորձված և տեխնիկապես պատրաստ լինեն մինչև այդ նորմի ուժի մեջ մտնելը: 2023թ. փետրվարի 21-ի դրությամբ, ըստ ՀՀ քննչական կոմիտեի, առաջիկա ամիսներին ՀՀ քննչական կոմիտեի բոլոր քննիչների համար ձեռք են բերվելու անհատական տեսախցիկներ: 2023թ. հունվարից մինչև հունիս ժամանակահատվածը դուրս է սույն զեկույցի մշտադիտարկման տիրույթից:[201]

Գործողություն 28

[200] ԱՆ, 7972-2023, 16 փետրվարի 2023թ.:
[201] ՀՀ ՔԿ, 12/12/51556-2023, 21 փետրվարի 2023թ.:

Քննչական բաժինները կահավորել այնպես, որ ճանաչման ներկայացնելու և առերեսման քննչական գործողությունը հնարավոր լինի իրականացնել մասնակիցների՝ միմյանց տեսողական ընկալումից դուրս գտնվելու պայմաններում

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ-ի գործի արդար քննության իրավունքին նվիրված 28-րդ գործողությամբ նախատեսվել է քննչական բաժինները կահավորել այնպես, որ ճանաչման ներկայացնելու և առերեսման քննչական գործողությունը հնարավոր լինի իրականացնել մասնակիցների՝ միմյանց տեսողական ընկալումից դուրս գտնվելու պայմաններում:

Գործողության իրականացումն անկալվում է մինչև 2021թ. առաջին կիսամյակը ՀՀ քննչական կոմիտեի 10 ստորաբաժանումներում:

ՀՀ քննչական կոմիտեում նման սենյակի ստեղծման համար պատասխանատու մարմին է նախանշվել ՀՀ քննչական կոմիտեն, իսկ ՀՔԾ-ում[202] սենյակի ստեղծման համար՝ ՀՔԾ-ն (ևս համաձայնությամբ): Համակատարող մարմին երկու դեպքում էլ չի սահմանվել:

Ֆինանսավորումը կատարվելու է պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

Մշտադիտարկման արդյունքները

2022թ. դեկտեմբերի դրությամբ, ՀՀ քննչական կոմիտեի թվով 7 ստորաբաժանումներում առկա են եղել ճանաչման ներկայացնելու քննչական գործողության մասնակիցների՝ միմյանց տեսողական ընկալումից դուրս իրականացման համար նախատեսված սենյակներ: Նախատեսված այդպիսի 10 սենյակի փոխարեն 7-ի առկայությունը, ըստ ՀՀ Արդարադատության նախարարության և ՀՀ Քննչական կոմիտեի, պայմանավորված է շենքային պայմանների բարելավման և հիմնանորոգման գործընթացքով, և որ ակնկալվում է այդպիսի սենյակների ավելացում:[203]

Գործողություն 34

Ռազմական ոստիկանների, քննիչների, դատախազների, դատավորների համար իրականացնել միջազգային չափանիշներին համապատասխան վերապատրաստումներ գործի արդարացի քննության իրավունքի թեմայով

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ-ի գործի արդար քննությանը նվիրված 34-րդ գործողությամբ նախատեսվել է վերապատրաստումներ իրականացնել գործի արդարացի քննության իրավունքի թեմայով՝ միջազգային չափանիշներին համապատասխան, այդ թվում՝

[202] ՀՔԾ-ն՝ Հատուկ քննչական ծառայությունը, 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ լուծարված է եղել, սակայն ՄԻՊ 2019թ. ռազմավարության ընդունման պահին դեռ գոյություն է ունեցել: ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ-ում ներառվել են միջոցառումներ նաև ՀՔԾ-ի ներգրավմամբ:

[203] ԱՆ, 8445-2023, 17 փետրվարի 2023թ.; ՀՀ ՔԿ, 12/12/51556-2023, 21 փետրվարի 2023թ.; տես նաև՝ ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2021թ. տարեկան հաշվետվություն, էջ 49-50, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=43162693d2cba48e4896&size_mode=1:

- ռազմական ոստիկանների,
- քննիչների,
- դատախազների,
- դատավորների համար:

Ակնկալվում է 2020-2022թթ. ընթացքում վերապատրաստել

- ռազմական ոստիկանների 30%-ին,
- ՀՔԾ քննիչների 11%-ին,
- դատախազների 25%-ին,
- դատավորների 41%-ին:

Ակնկալվում է, որ ռազմական ոստիկանների և դատախազների վերապատրաստումների արդյունքում կնվազեն գործի արդարացի քննության իրավունքի խախտման դեպքերը քրեական գործի քննության մինչդատական վարույթում, ՀՔԾ քննիչների վերապատրաստումների արդյունքում՝ քրեական գործի նախաքննության փուլում, ինչպես նաև քրեական, քաղաքացիական և վարչական գործերով՝ դատավորների վերապատրաստումների արդյունքում՝ քննության ողջ ընթացքում:

Ռազմական ոստիկանների վերապատրաստման հարցում պատասխանատու մարմինը ՀՀ պաշտպանության նախարարությունն է, իսկ համակատարող մարմին չի սահմանվել:

ՀՔԾ քննիչների, դատախազների ու դատավորների վերապատրաստման համար պատասխանատու մարմինը ՀՀ արդարադատության նախարարությունն է:

ՀՔԾ քննիչների վերապատրաստումների համար որպես համակատարող մարմիններ են նախանշվել ՀՀ Արդարադատության ակադեմիան՝ համաձայնությամբ, ՀՀ քննչական կոմիտեն՝ համաձայնությամբ, և Հատուկ քննչական ծառայությունը՝ համաձայնությամբ:

Դատախազների վերապատրաստումների համար համակատարող մարմիններն են ՀՀ Արդարադատության ակադեմիան՝ համաձայնությամբ, և ՀՀ գլխավոր դատախազությունը՝ ևս համաձայնությամբ:

Դատավորների վերապատրաստումների համար համակատարող մարմիններն են ՀՀ Արդարադատության ակադեմիան՝ համաձայնությամբ, և Դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողովը՝ համաձայնությամբ:

Ֆինանսավորումը կատարվելու է պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

Մշտադիտարկման արդյունքները. ռազմական ոստիկանների վերապատրաստում

Ըստ ՊՆ գրության՝ 2020-2022թթ. ընթացքում, միջազգային չափանիշներին համապատասխան՝ գործի արդարացի քննության իրավունքի թեմայով,

վերապատրաստվել է Ռազմական ոստիկանության հետաքննիչների, ՔՀ և ՁՈՒՊ անձնակազմի 28%-ը:[204]

Մշտադիտարկման արդյունքները. ՀՔԾ քննիչների վերապատրաստում

Չնայած որ տվյալ գործողության անմիջական արդյունքում նշված է վերապատրաստումների անցկացումը միայն ՀՔԾ քննիչների համար, այս գործողությամբ սահմանված գործի արդար քննության թեմայով վերապատրաստումներում ներգրավվել են նաև ՀՀ քննչական կոմիտեի քննիչները: Այս մասին «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին հայտնել են ՀՀ քննչական կոմիտեից[205]:

ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների (քննիչների) վերապատրաստման ուսուցման 2020թ. ծրագրում ընդգրկված **«Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր»** դասընթացի ծրագրում որպես ինքնուրույն թեմա նախատեսվել են արդար դատաքննության իրավունքի պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հիմնահարցերը:[206]

Քննիչների վերապատրաստման ծրագրում ընդգրկվել է նաև **«Զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական խնդիրները»** դասընթաց:[207]

Մշտադիտարկման արդյունքները. դատախազների վերապատրաստում

ՀՀ արդարադատության ակադեմիայի կողմից դատախազների համար իրականացվող վերապատրաստման ուսուցման ծրագրում ներառվել է **«Մարդու իրավունքների միջազգային իրավունքի արդի հարցեր»** թեման:[208] Վերապատրաստման ծրագրում ներառվել է նաև **«ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր»** դասընթացը:[209]

---

[204] ՊՆ/510-ԳՔ/1249, 9 մարտի 2023թ.:

[205] ՀՀ ՔԿ հատուկ հանձնարարությունների, կազմակերպական-վերլուծական և քրեագիտական գլխավոր վարչություն, N 12/12/47261-20, 28 օգոստոսի, 2020թ.:

[206] ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 24-25, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=976038ef7fd6eba6832&size_mode=1; ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2022թ. Տարեկան հաշվետվություն, էջ 15, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=8816640f5b3a56b9b4345&size_mode=1:

[207] ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրությունն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ; տես նաև՝ ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2021թ. տարեկան հաշվետվություն, էջ 52, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=43162693d2cba48e4896&size_mode=1:

[208] Դատախազություն, 44/6/19412-2020, 28 օգոստոսի, 2020թ.; տես նաև՝ ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրությունն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ:

[209] ՀՀ արդարադատության նախարարության 2020թ. հոկտեմբերի 14-ի գրությունն Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող դասընթացների վերաբերյալ; տես նաև՝ ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 25, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=976038ef7fd6eba6832&size_mode=1; ՄԻՊ ռազմավարության հաշվետվություն՝ թարմացված, այստեղ. http://e-rights.am/?app=AppEvent&page=default&event_id=124&event_tab=report, 12 փետրվարի 2021թ.; ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2021թ. տարեկան հաշվետվություն, էջ 53, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=43162693d2cba48e4896&size_mode=1; ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2022թ. Տարեկան հաշվետվություն, էջ 16, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=8816640f5b3a56b9b4345&size_mode=1:

Մշտադիտարկման արդյունքները. դատավորների վերապատրաստում

ՀՀ արդարադատության ակադեմիայի տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրերում ընդգրկվել են **«ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր»**, **«ՀՀ վարչական դատավարության արդի հարցեր»**, **«ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցեր»** դասընթացները, որոնց շրջանակներում քննարկվում են թեմաներ, ինչպիսիք են արդար դատաքննության իրավունքի իրավական բնույթը, արդարացի լսումներ, մրցակցության սկզբունք, հրապարակային քննության ողջամիտ ժամկետներ, ՄԻԵԴ-ի մոտեցումներում որպես «զենքերի հավասարություն» ամրագրված կողմերի հավասարությունը:[210]

Արդարադատության ակադեմիայի ծրագրում ընդգրկված է եղել նաև **«Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր»** դասընթացը, որի շրջանակներում ներառվել են նաև արդար դատաքննության իրավունքի պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հիմնահարցերը:[211]

Գործի արդար քննության իրավունքի ապահովմանն ուղղված առաջարկներ

- Հրապարակել և ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ-ում ներառել 2019թ. ՄԻՊ ռազմավարության ընդունման պահին գործի արդար քննության իրավունքի խախտման դեպքերով ՄԻԵԴ բողոքների, մեղադրյալ անձանց նկատմամբ մարդու իրավունքների խախտումների և այդ խախտումներով բողոքների ելակետային թվեր՝ հնարավորություն տալով չափել գործի արդար քննության իրավունքի խախտման դեպքերի ակնկալվող նվազումը:

---

[210] 2020թ. առաջին կիսամյակային հաշվետվություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ, 20 հուլիսի, 2020 թ., էջ 33, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=63645f2bc2b55978b6020&size_mode=1; ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 25, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=976038ef7fd6eba6832&size_mode=1; ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողով, N-66/20-Ու, Ե-7343, 22 հոկտեմբերի, 2020թ.; Դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողով, N-00/20-Ու, Ե-6451, 11 սեպտեմբերի, 2020թ.; Ուսումնական ծրագիր, դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստման, Հավելված 1, Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի 2019թ. նոյեմբերի 29-ի թիվ ԿԽ-010/19/1 որոշման, http://www.justiceacademy.am/assets/attachments/voroshum_datakan_havelvats1copy.pdf; Դատավորների ընդ. ժող. ուս. հարցերի հանձն., Ե-2282, 31 մարտի 2021թ.; ՀՀ արդարադատության ակադեմիա, 089/9-2021, 16 ապրիլի 2021թ.; ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2022թ. Տարեկան հաշվետվություն, էջ 16, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=8816640f5b3a56b9b4345&size_mode=1:

[211] 2020թ. առաջին կիսամյակային հաշվետվություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրով 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ, 20 հուլիսի, 2020 թ., էջ 33, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=63645f2bc2b55978b6020&size_mode=1; ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2021թ. տարեկան հաշվետվություն, էջ 53-54, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=43162693d2cba48e4896&size_mode=1; ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 25, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=976038ef7fd6eba6832&size_mode=1; ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2022թ. Տարեկան հաշվետվություն, էջ 16, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=8816640f5b3a56b9b4345&size_mode=1:

- Տեղադրել տեսաձայնագրող սարքավորումները ՀՀ քննչական կոմիտեի ստորաբաժանումներում մինչև ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի՝ պարտադիր տեսաձայնագրման պահանջի վերաբերյալ հոդվածի ուժի մեջ մտնելը՝ 2023թ. հուլիսի 1-ը:

ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔ

2020-2022թթ. ԳԾ-ում իրավահավասարության, խտրականության արգելքի գործողությունների կատարման համար որպես խնդիր դրվել է իրավահավասարության ապահովմանն ուղղված իրավական մեխանիզմների առկայությունը, իսկ որպես նպատակ՝ սահմանվել է, որ կաճի Իրավահավասարության խորհուրդ ներկայացված բողոքների քանակը, որի ելակետային տվյալը զրո է:[212] Այսպես, ի տարբերություն տվյալ զեկույցում դիտարկված այլ իրավունքների՝ իրավահավասարությանը, խտրականության արգելքին նվիրված բաժինը ներկայացրել է ելակետային տվյալ:

Սակայն հարց է առաջանում՝ արդյոք Իրավահավասարության խորհրդին ներկայացված բողոքների քանակի ավելացումը վկայելու է իրավահավասարության ապահովման և խտրականության դեմ պայքարի գործում պետության իրականացրած միջոցառումների արդյունավետության մասին:

Ընդհանուր դիտարկումներ

Կանանց նկատմամբ խտրկանության արգելք

ՄԱԿ-ի կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն նշել է Հայաստանում կանանց նկատմամբ խտրական կարծրատիպերի մշտական առկայությունը՝ կապված ընտանիքում և հասարակությունում կանանց և տղամարդկանց դերերի և պարտականությունների հետ, որով ստորադասվում է կանանց սոցիալական կարգավիճակը, կրթական և մասնագիտական առաջխաղաղացումը:[213] Դեռևս շարունակում է ցածր մնալ կանանց կողմից բարձր պաշտոնների զբաղեցումը և նրանց մասնակցությունը որոշումների կայացման գործում:[214]

Ըստ ՄԻՊ ռազմավարության՝ Հայաստանի համար շարունակում է գերակա նշանակություն ունենալ իրավահավասարության ապահովման օրենսդրական երաշխիքների ստեղծման և դրանց արդյունավետ կիրառման խնդիրը: Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմնախնդիրների առնչությամբ ՄԻՊ ռազմավարությունը հղում է կատարում **«Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությանը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին»** ՀՀ կառավարության որոշմանը և նշում, որ կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը կառավարության առաջնահերթություններից է:[215]

[212] ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ, էջ 26:
[213] Օրինակ՝ UPR 2019 (4th), § 19; CEDAW/C/ARM/CO/5-6, § 14:
[214] UPR 2019 (4th), § 76; CEDAW/C/ARM/CO/5-6, § 20 (a):

[215] ՄԻՊ ռազմավարություն, 2019թ., էջ 39, https://www.moj.am/storage/uploads/1Razmavarutyun.MIP.pdf:

ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1325 բանաձևի գործողությունների Հայաստանի 2019-2021թթ. ազգային ծրագրով ևս պետությունը նպատակ է դրել խթանելու կանանց ներգրավվածությունը զինված ուժերում:[216]

Կանանց ներգրավվածությունը ՀՀ զինված ուժերում խթանելը որպես առանձին գործողություն ներառվել է նաև ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ-ում, սակայն գործողություններ կամ ծրագրեր չեն ներառվել ՁՈՒ-ում կանանց նկատմամբ խտրականության կանխարգելման և կանանց բռնությունից պաշտպանության ուղղությամբ: Ճիշտ է, ԳԾ-ն նախատեսել է գործողություն 7-ը և 40-ը՝ վերապատրաստումներ իրականացնել իրավահավասարության, խտրականության արգելքի, ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության թեմաներով՝ միջազգային չափանիշներին համապատասխան, այդ թվում՝ ոստիկանների, քննիչների, դատախազների, դատավորների ու բուժաշխատողների, կրթական հաստատությունների ներկայացուցիչների համար, ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների աշխատակիցների համար: Սակայն այն չի ներառել պաշտպանության ոլորտը: Այնինչ Զինված ուժերի համատեքստում կանայք՝ որպես զինծառայողներ, և կանայք՝ որպես զինծառայողների ամուսիններ, երաշխավորված չեն բռնության չենթարկվելուց, սակայն խնդիրն այն է, որ գործնականում նման բռնությունը կարող է հայտնի չդառնալ կամ արդյունվետ չքննվել՝ հաշվի առնելով պաշտպանության ոլորտի և զինված ուժերի առանձնահատկությունները:

Այլ խմբերի նկատմամբ խտրականության արգելք

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ-ով Զինված ուժերում իրավահավասարության ապահովման գործում ուշադրության կենտրոնում է միայն կանանց ներգրավվածության ավելացումը: Անդրադարձ չի կատարվել այլ խմբերի իրավունքների պաշտպանությանն ու խտրականության բացառմանը՝ պայմանավորված սոցիալական, ազգային պատկանելության, սեռական կողմնորոշման և այլ հիմքերով: ԳԾ գործողություն 40-ը, որը նախատեսել է վերապատրաստումներ իրականացնել իրավահավասարության, խտրականության արգելքի ընդհանուր թեմայով, պաշտպանական գերատեսչությանը չի ներառել: ՊՆ-ն չի ներառել նաև գործողություն 41-ը որը նախատեսել է բարձրացնել իրավահավասարության, բոլոր հիմքերով խտրականության արգելքի վերաբերյալ իրազեկվածությունը, և պաշտպանական ոլորտում խտրականության արգելքի մասին իրազեկվածության բարձրացման միջոցառումները սահմանափակվել են միայն կանանց և տղամարդկանց հավասարության համատեքստով:

Այնինչ, 2022թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին հանրային քննարկման էր դրվել Պաշտպանության նախարարության հեղինակած օրենքի նախագիծ, ըստ որի՝ հնարավորություն էր տրվում պարտադիր զինծառայությունից վաղաժամ զորացրվել 24 միլիոն դրամի դիմաց:[217] Նման նախագծի առաջարկումն ինքնին

[216] ՀՀ կառավարություն, ՄԱԿ ԱԽ «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձևի դրույթների իրականացման գործողությունների 2019-2021թթ. ազգային խրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը, 28 փետրվարի 2019թ., https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2019/03/197_1klսoռ.pdf.

[217] Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, 24 օգոստոսի-9 սեպտեմբերի 2022թ., https://www.e-draft.am/projects/4679.

վկայում է, որ ՊՆ-ն առնվազն չի պատկերացնում կամ հաշվի չի առնում, որ գումարի դիմաց պարտադիր զինծառայությունից ազատումը ինքնին հանդիսանում է սոցիալ-տնտեսական հիմքով խտրականության դրսևորում:

Բացի այդ, ԽԵ կողմից հարցված նախկին պարտադիր ժամկետային զինծառայողներից ոմանք (4%) նշել են, որ, օրինակ սահմանափակումներով պիտանի ճանաչված զինծառայողների սահմանափակումները զորամասում պահպանվում էին ծանոթի միջնորդությամբ, իսկ 41% ասել է, որ չեն պահպանվել կամ մասամբ են պահպանվել:

Հարցվածներից մեկը նաև անդրադարձել է ՁՈՒ-ում առողջության պահպանման հարցում խտրականության հարցին՝ նշելով. «Մարդ կա՝ փոքր բանի համար հոսպիտալացվում է, քանի որ ծանոթ ունի, բայց մյուսը, որ կարիք ունի, մնում է հերթի մեջ, սպասում է երկար»:[218]

Բացի այդ, օրինակ, «Հյուման ռայթս ուոտչ»-ը իր 2019թ. և 2020թ. զեկույցներում առանձնացրել էր ԼԳԲՏ+ խմբին պատկանող անձանց նկատմամբ խտրականության հարցերը՝ կապված զինվորական ծառայության, դրան անցնելու կամ դրանից խուսափելու հետ:

ԽԵ մշտադիտարկող խումբը վերջին տարիներին պարտադիր ժամկետային զինծառայություն անցած ու զորացրված անձանց հետ հարցազրույցների արդյունքում նաև պարզել է, որ սեռական փոքրամասնությունների ներկայացուցիչները զորամասում ներառված են եղել **«խեղճ»** զինծառայողների շրջանում, որոնց զինծառայողները անընդհատ ճնշել, նեղացրել կամ աշխատեցրել (այդպես պատասխանել է 6 հոգի, 7.8%):[219]

2019-2021 թթ. զորակոչից հարցվածներից մեկը նշել է, որ իրենց զորամասում ծառայած սեռական փոքրամասնությունների ներկայացուցիչները, ովքեր «ամեն գործ անում էին, մեր հետ սեղան չէին նստում, մաքրելու գործերով էին զբաղվում: Հրամանատարը ասում էր, որ իրանց հետ կապ չունենանք, որ իրանք տղա չեն: Դե չգիտեմ, ոնց ասեմ, որ նորմալ հնչի: «Գոմիկ» էին ու ասենք տենց բան որ իմանաս, ո՞ր մի տղեն իրանց հետ հաց կուտի կամ ձեռը կտա ու կբարևի: Մի քանի անգամ եղել ա, մյուս զինվորները խփել են, ես էլ եմ արել, բայց մեծ մասամբ իրանք առանձին էին: Երբ պետք էր գործ անել, շինարարություն էր կամ մաքրություն էր, իրանք անում էին առանց ասելու»: [220]

[218] «Խաղաղության երկխոսություն» ՀԿ, ՀՀ Զինված Ուժերում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների վերհանման նպատակով իրականացված հարցազրույցների վերլուծություն, Վանաձոր, հոկտեմբեր 2022թ., էջ 17, 39, https://peacedialogue.am/2022/10/07/hr_survey_arm/:
[219] «Խաղաղության երկխոսություն» ՀԿ, ՀՀ Զինված Ուժերում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների վերհանման նպատակով իրականացված հարցազրույցների վերլուծություն, Վանաձոր, հոկտեմբեր 2022թ., էջ 22, https://peacedialogue.am/2022/10/07/hr_survey_arm/:
[220] «Խաղաղության երկխոսություն» ՀԿ, ՀՀ Զինված Ուժերում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների վերհանման նպատակով իրականացված հարցազրույցների վերլուծություն, Վանաձոր, հոկտեմբեր 2022թ., էջ 24-25, https://peacedialogue.am/2022/10/07/hr_survey_arm/:

Իրավահավասարությանը և խտրականության արգելքին նվիրված գործողություններ

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ-ում իրավահավասարությանն ու խտրականության արգելքին ուղղված գործողություններից «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն մշտադիտարկել է գործողություն 48-ը, որը նվիրված է զինված ուժերում կանանց ներգրավման խրախուսմանը, ինչպես նաև գործողություն 48.1-ը, որն ավելացվել է 2020թ. սեպտեմբերի 27-ի զինված հակամարտությունից հետո, և նվիրված է պատերազմի հետևանքով տեղահանված անձանց, հաշմանդամություն ստացած անձանց, զոհված, անհետ կորած և գերության մեջ գտնվող անձանց և նրանց ընտանիքների իրավունքների արդյունավետ պաշտպանության ծրագրերի իրականացմանը:

Ստորև ներկայացվում ենք այդ գործողության մշտադիտարկման արդյունքները:

Գործողություն 48

Խրախուսել կանանց ներգրավումը զինված ուժերում

ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ-ի իրավահավասարությանն ու խտրականության արգելքին նվիրված 48-րդ գործողությամբ նախատեսվել է խրախուսել կանանց ներգրավումը զինված ուժերում:

Ակնկալվում է մինչև 2022թ. առաջին կիսամյակը

- կատարել ուսումնասիրություն՝ զինված ուժերում կանանց ծառայության անցնելու, այն շարունակելու կամ դադարեցնելու դրդապատճառները պարզելու նպատակով,
- նախատեսել կին զինծառայողների իրավունքների խթանման և պաշտպանության հարցերով զբաղվող պաշտոնի ավելացում,
- մշակել և զանգվածային լրատվության միջոցներով տարածել զինված ուժերում կանանց ծառայության վերաբերյալ 5 տեսաձայնագրություն:

Ակնալվում է, որ վերոնշյալ գործողությունները կնպաստեն զինված ուժերում կին զինծառայողների թվի ավելացմանը: Կատարման համար պատասխանատու մարմինը ՀՀ պաշտպանության նախարարությունն է, իսկ համակատարող մարմին չի սահմանվել:

Ֆինանսավորումը կատարվելու է պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

2021թ. ապրիլի դրությամբ՝ ԳԾ փոփոխությունների նախագծով առաջարկվել է տվյալ գործողության կատարման վերջնաժամկետը 2022թ. առաջին կիսամյակից տեղափոխել 2022թ. երկրորդ կիսամյակ:[221]

[221] ՄԻՊ 2019թ. ռազմավարության 2020-2022թթ. ԳԾ փոփոխություններ և լրացումներ, Նախագիծ, էջ 5, https://www.e-draft.am/projects/3178/about:

Մշտադիտարկման արդյունքները. Ընդհանուր դիտարկումներ

ՀՀ ԶՈՒ կին զինծառայողների թվեր

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2021թ. տարեկան հաղորդման համաձայն՝ հղում տալով ՊՆ-ին՝ կանայք կազմել են ՀՀ ԶՈՒ-ում պայմանագրային զինծառայողների 9,5%-ը, 2020թ. այդ թիվը եղել է 8,5%, իսկ 2019թ.՝ 9,1%: 14,3%-ը ներառել է սպայական, 4,7%-ը՝ ավագ սպայական, 9,6%-ը՝ կրտսեր սպայական, 34,9%-ը՝ ավագ ենթասպայական, և 50,8%-ը՝ կրտսեր ենթասպայական և շարքային կազմերը:[222]

2022թ. համար թվային տվյալներ հանրայնորեն հասանելի չեն: ՄԻՊ 2022թ. տարեկան հաշվետվությունը նշում է, որ 2022թ. ընթացքում պահեստազորից ծառայության են անցել 951 կին զինծառայող:[223] Ըստ ՊՆ գրության՝ 2022թ. ընթացքում ՀՀ զինված ուժերից զորացրված կին զինծառայողների ընդհանուր թվի շուրջ 17%-ն արձակվել է պահեստազոր երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու հիմքով, շուրջ 3%-ի մոտ լրացել է զինվորական ծռայության մեջ գտնվելու սահմանային տարիքը, շուրջ 21%-ի՝ պայմանագրի ժամկետը, շուրջ 2%-ը՝ առողջական վիճակի պատճառով, շուրջ 6%-ը՝ հաստիքների կրճատման պատճառով, շուրջ 5%-ը՝ կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամկետը լրանալու պատճառով:[224]

Բացի այդ, կին զինծառայողների թվաքանակի ավելացման նպատակով ՀՀ ՊՆ N զորամասում կազմավորվել է հրաձգային վաշտ, որը համալրվելու է միայն կին զինծառայողներով:[225] Սակայն հայտնի չէ, թե միայն կին զինծառայողներից բաղկացած վաշտը արդյոք ավելացնելու է ՀՀ ԶՈՒ-ում կին զինծառայողների ընդհանուր թիվը, և եթե այո, ապա որքանով:

ՀՀ ԶՈՒ զորացրված կին զինծառայողների 46%-ի զորացրման պատճառները հայտնի չեն, ինչպես և հայտնի չէ զորացրվածների ընդհանուր թիվը, զորացրման հետևանքով ԶՈՒ-ում 2022թ. դրությամբ կին զինծառայողների թիվն ու տոկոսային հարաբերակցությունը տղամարդ զինծառայողների հետ, ինչպես նաև նախատեսվող վաշտի ստեղծմամբ ՀՀ ԶՈՒ-ում կանանց ընդհանուր թվի փոփոխության հարցը:

ԶՈՒ կին զինծառայողների իրավունքների իրազեկում

Չնայած նախատեսված չլինելով 2020-2022թ. ԳԾ-ով, ՊՆ-ն իրականացրել է կին զինծառայողների իավունքների մասին որոշ իրազեկման միջոցառումներ: Երևանում ԵԽ գրասենյակի հետ համագործակցությամբ տպագրվել և ՀՀ ԶՈՒ է

[222] ՀՀ մարդու իրավունքների պաշտպան, Տարեկան հաղորդում ՀՀ ՄԻՊ գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին, 2021, էջ 961, https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf:
[223] ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2022թ. տարեկան հաշվետվություն, էջ 21, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=8816640f5b3a56b9b4345&size_mode=1.
[224] ՊՆ/510-ԳՔ/1188, 6 մարտի 2023թ.:
[225] ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2022թ. տարեկան հաշվետվություն, էջ 21, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=8816640f5b3a56b9b4345&size_mode=1; ՊՆ/510-ԳՔ/1188, 6 մարտի 2023թ.:

առաքվել «Զինծառայող կանանց սոցիալական իրավունքները և երաշխիքները» վերտառությամբ տեղեկատվական ուղեցույց:[226]

Զորքեր է ուղարկվել նաև «Կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովմանը և կանանց իրավունքներին առնչվող ՀՀ ընդհանուր իրավական կարգավորումները» տեղեկատվական նյութը:[227]

2022թ. ապրիլի 6-ին ՀՀ ՊՆ վարչական համալիրում տարբեր շահագրգիռ գերատեսչությունների, ՀՀ ՊՆ և ԶՈՒ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, զորամիավորումների (զորամասերի) հրամանատարների ԲՀԱ գծով տեղակալների կին զինծառայողների, կանանց խորհուրդների, անդամների, բարձրագույն ուսումնական հաստատությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացվել է «Զինված ուժերում կանանց ներգրավման խթանումը» թեմայով կլոր սեղան-քննարկում:[228]

Մշտադիտարկման արդյունքները. ուսումնասիրություն

2021-2022թ. ՀՀ ՊՆ և ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի համագործակցությամբ իրականացվել է «Կանայք զինված ուժերում» հետազոտության ամփոփ ժողովածուն: Այս հետազոտությունը հանրայնորեն հասանելի չէ: ՄԻՊ ԳԾ հաշվետվությունները և ՊՆ գրությունները ևս դրանք չեն մատնանշում:

Հետազոտությունն իրականացված է եղել ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձևի դրույթների իրականացման ՀՀ ազգային ծրագրի շրջանակում: Այն ներկայացրել է, ի թիվս այլնի, ՀՀ-ում զինծառայող կանանց իրավունքների պաշտպանության, կարիքների բացահայտման, Հայկական բանակում կանանց հարմարման խնդիրների վերհանման և լուծման մեթոդաբանական մոտեցումներն ու ազգային առանձնահատուկ փորձը:

Սակայն ՄԻՊ ԳԾ-ով նախատեսված ուսումնասիրությունը, որը նվիրված պետք է լիներ զինված ուժերում կանանց ծառայության անցնելու, այն շարունակելու կամ դադարեցնելու դրդապատճառների մասին 2022թ. դեկտեմբերին հասանելի չի եղել: ՄԻՊ 2022թ. հաշվետվությունը և ՊՆ գրությունները որևէ կերպ չեն հիշատակել տվյալ ուսումնասիրության կատարված կամ չկատարված լինելը:[229]

Բացի այդ, գտնում ենք, որ հետազոտությունը պետք է ընդգրկի ոչ միայն զինված ուժերում կանանց ծառայության անցնելու, այն շարունակելու կամ դադարեցնելու, այլ նաև ծառայության չանցնելու դրդապատճառները: Հակառակ դեպքում հետազոտությունը դժվար թե կվերհանի հասարակությունում գոյություն ունեցող այն խոչընդոտները, որոնք

[226] ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2022թ. տարեկան հաշվետվություն, էջ 21-22, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=8816640f5b3a56b9b4345&size_mode=1; ՊՆ/510-ԳՔ/1188, 6 մարտի 2023թ.:
[227] ՊՆ/510-ԳՔ/1188, 6 մարտի 2023թ.:
[228] ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2022թ. տարեկան հաշվետվություն, էջ 21, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=8816640f5b3a56b9b4345&size_mode=1; ՊՆ/510-ԳՔ/1188, 6 մարտի 2023թ.:
[229] Տես օրինակ՝ ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2021թ. տարեկան հաշվետվություն, էջ 84-85, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=43162693d2cba48e4896&size_mode=1:

խանգարում են կանանց ընտրելու զինվորական ծառայությունը կամ զինվորական մասնագիտությունը:

Մշտադիտարկման արդյունքները. պաշտոն

ՀՀ ՁՈՒ գլխավոր շտաբի պետի 30.01.2020թ. հրամանով կանոնակարգվել է զորամասերում կանանց խորհուրդների ձևավորումն ու գործունեությունը: Նպատակներն են զինվորական կոլեկտիվներում, զինծառայողների ընտանիքներում կայուն բարոյահոգեբանական մթնոլորտի պահպանումը, զինծառայողներին հասարակական գործունեության մեջ ներգրավումը, կին զինծառայողներին ծառայությանն արդյունավետ ինտեգրումը, կարգապահության ամրապնդումը, ինչպես նաև զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանությունը, հայրենասիրական դաստիարակության կազմակերպման գործում զորամասի հրամանատարությանն աջակցություն ցուցաբերելը:[230]

«Զինուժ»-ի 2020թ. հունիսի 13-ի թողարկման շրջանակներում անդրադարձ է կատարվում ՀՀ զինված ուժերում ձևավորված կանանց խորհուրդներին: Նշվում է, որ դրանք հասարակական հիմունքներով մշտապես գործող մարմիններ են՝ զորամասի հրամանատարի անմիջական ղեկավարության ներքո՝ բաղկացած 3-7 անդամից: Խորհրդի անդամներն ընտրվում են զորամասի զինծառայողների կողմից բաց քվերակությամբ 1 տարի ժամկետով: Խորհուրդը համագործակցում է տարբեր մարմինների հետ: Դրա օժանդակությանը կարող է դիմել զորամասի անձնակազմի յուրաքանչյուր ոք: Խորհուրդների նպատակն է նպաստել կին զինծառայողների զինվորական ծառայության ինտեգրմանը, զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պահանջմունքների բարելավմանը և բարոյահոգեբանական կայուն վիճակի պահպանմանը: Խորհրդի խնդիրներն են աջակցել ընտանիքում կամ ծառայության վայրում ծագող խնդիրների ուսումնասիրմանն ու լուծմանը, զինծառայողների և քաղաքացիական անձնակազմի ընտանիքներին մայրության իրավունքի պաշտպանությունն ու ամրապնդումը, օժանդակություն ցուցաբերել երեխաների կրթական-դաստիարակչական աշխատանքների կազմակերպմանը, իրականացնել ընտանեկան արժեքների, առողջ ապրելակերպի, հոգևոր-բարոյական և հայրենասիրական դաստիարակության քարոզչություն, բարձրացնել զինվորականի ընտանիքի հեղինակությունը, զինծառայողների ընտանիքի անդամներին պարզաբանել զինվորական ծառայության բնույթով պայմանավորված խնդիրները, զինծառայողների ընտանիքի անդամների միջոցով ձևավորել հարգալից վերաբերմունք զինծառայողի մասնագիտության և զինված ուժերի նկատմամբ, զինծառայողների ընտանիքների անդամներին մասնակից դարձնել զորամասերի, զինավանների տարածքների բարեկարգման, մաքրման և կանաչապատման աշխատանքներին: Կանանց խորհուրդների վերջանակն նպատակն է կին զինծառայողների ծառայության շարժառիթավորումը և զինվորական ծառայության գրավչության բարձրացումը: [231]

Դեռևս 2019թ. հոկտեմբերի 19-ին ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով ձևավորվել է կին զինծառայողների հետ տարվող աշխատանքի բաժանմունք:

[230] ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2020թ. տարեկան հաշվետվություն, էջ 54-55, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=976038ef7fd6eba6832&size_mode=1:
[231] ԶԻՆՈՒԺ MEDIA, Զինուժ, 13.06.20, 13 հունիսի 2020թ., 25:43 րոպեից, https://www.youtube.com/watch?v=kJCC43LvNZE:

Բաժանմունքի գործունեության նպատակն է զինված ուժերում ուսումնասիրությունների, վերլուծությունների արդյունքում կին զինծառայողների զինծառայության կազմակերպման, հավասար հնարավորությունների ապահովման, կին զինծառայողներին հուզող խնդիրների, բարձրացված հարցերի լուծման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը:[232]

2022թ. ՀՀ ՊՆ ղեկավար կազմում ավելացվել է կին զինծառայողների հետ տարվող աշխատանքների գծով պաշտպանության նախարարի օգնականի հաստիք:[233]

2022թ. ևս մեկ մարմին ստեղծվեց, այս անգամ՝ Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր կանանց հարցերով խորհուրդ, որի առաջին հանդիպման ընթացքում համաձայնություն է ձեռք բերվել հաջորդիվ աշխատել զինված ուժերում կանանց առավել իմաստալից ներգրավման ուղղությամբ:[234]

Այսպիսով, 2022թ. դեկտեմբերի դրությամբ, առնվազն չորս մարմին կամ պաշտոն է ստեղծված եղել, որոնք այս կամ այն կերպ զբաղվել են ՁՈՒ-ում կանանց իրավունքների հարցերով: Պարզ չէ, թե դրանցից որ մեկն է եղել որպես ՄԻՊ ռազմավարությամբ նախատեսված պաշտոնի ավելացում: Բացի այդ, բոլոր այդ մարմինները ունեն խորհրդատվական բնույթ, այնինչ գտնում ենք, որ կին զինծառայողների իրավունքների խթանման և պաշտպանության հարցերով զբաղվող պաշտոնը ենթադրում է որոշումներ կայացնելու լիազորություններ: Չի սահմանվել տվյալ մարմինների ստեղծման և գործունեության/գործառույթների պատճառահետևանքային կապը ՁՈՒ-ում կանանց թվի ավելացման գործողության վրա:

Մշտադիտարկման արդյունքները. տեսաձայնագրություններ

Ըստ ՊՆ գրության՝ զինված ուժերում կանանց ծառայության վերաբերյալ հանրության իրազեկումն ապահովելու նպատակով Երևանում ԵԽ գրասենյակի հետ համատեղ նախապատրաստվել է 4 տեսաձայնագրություն:[235]

«Զինուժ» հաղորդման 2020թ. հունիսի 6-ի թողարկման շրջանակներում անիմացիոն ֆիլմի միջոցով բացատրվում է, որ ՀՀ օրենսդրությամբ՝ և՛ կանայք, և՛ տղամարդիկ կարող են ստանալ ռազմական կրթություն, անցնել պայմանագրային զինվորական ծառայության կամ առաջխաղացում ունենալ, եթե համապատասխանում են սահմանված պահանջներին: Նշվել է նաև, որ զինծառայողները համազգեստով քաղաքացիներ են՝ ունենալով նույն իրավունքներն ու ազատությունները, ինչ մյուս քաղաքացիները: Զինծառայողների համար գործում են որոշ հատուկ կանոններ, մի շարք սոցիալական երաշխիքներ և իրավունքների պաշտպանության միջոցներ:[236]

[232] ՊՆ/510-ԳՔ/1603, 25 մարտի 2021թ.:
[233] ՊՆ/510-ԳՔ/1188, 6 մարտի 2023թ.:
[234] ՄԻՊ, Քրիստինե Գրիգորյանը մասնակցել է «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» ՄԱԿ-ի թիվ 1325 բանաձևի՝ Հայաստանի 2022-2024 թվականների գործողությունների ազգային երկրորդ ծրագրի շնորհանդեսին, 2 նոյեմբերի 2022թ., https://ombuds.am/am/site/ViewNews/2391:
[235] ՊՆ/510-ԳՔ/1603, 25 մարտի 2021թ.:
[236] ԶԻՆՈՒԺ MEDIA, Զինուժ, 06.06.20, 6 հունիսի 2020թ., 22:57 րոպեից, https://www.youtube.com/watch?v=K5mQn7wFG0I:

Նույն տեսանյութը ցուցադրվել է նաև «Զինուժ»-ի 2020թ. հունիսի 20-ի թողարկմանը:[237]

«Զինուժ» հաղորդման 2020թ. հունիսի 6-ի թողարկման մեկ այլ տեսանյութ նվիրված է ռազմական կրթությանը, մասնավորապես, ներկայացվում է Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան ընդունելության կարգը ու նշվում, որ այսուհետ՝ որպես նորություն, կրթահամալիր կարող են դիմել նաև աղջիկները: Պաշտպանության նախարարի տեղակալ Գաբրիել Բալայանը հարցազրույցում շեշտում է, որ վարժարանի աղջիկների դասակի կեցության համար հատկացված է առանձին շինություն: Նախատեսվել է առնվազն մեկ դասակ 2020թ. ընդունելության համար: Աղջիկների դասակի համար ավելացվել են հրամամանատարության հաստիքները, կատարվել են որոշակի փոփոխություններ կենցաղային պայմանների հետ կապված, ձեռք են բերվել տեխնիկական միջոցներ: Նախարարի տեղակալը նաև նշել է, որ նախատեսվում է կարգապահության բարձրացում, քանի որ փորձը ցույց է տալիս, որ օրինակ՝ կին հրամանատարների առկայության դեպքում զինծառայողներն ավելի կարգապահ են:[238] Իսկ «Զինուժ» հաղորդման 2020թ. հունիսի 13-ի թողարկմանը մեկ ռեպորտաժ նվիրված է Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան առաջին աղջիկ դիմորդներից երկուսին:[239]

2020թ. օգոստոսի 8-ի «Զինուժ»-ի թողարկման շրջանակներում մեկ այլ անիմացիոն ֆիլմով ներկայացվում է ռազմական կրթության ու կարիերայի՝ և՛ կանանց, և՛ տղամարդկանց համար բաց լինելը: Տեսանյութը քաջալերում է և՛ կանանց, և՛ տղամարդկանց դիտարկել զինվորական կարիերան՝ նշելով, որ ռազմական համալսարանում կրթությունն անվճար է և որակյալ, ապահավվում է բարձր աշխատավարձ, երաշխավորվում է կարիերային առաջընթաց, տրվում են սոցիալական երաշխիքներ:[240]

2021թ. փետրվարի 5-ին ՊՆ պաշտոնական կայքում հրապարակվել է մեկ տեսանյութ՝ անիմացիոն ֆիլմ, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության միջոցների մասին:[241] Ներկայացվում են նաև այն ներքին և արտաքին մեխանիզմները, որոնց զինծառայողները կարող են դիմել իրավունքների խախտման դեպքում: Ներկայացվում են նաև կանանց համար գործող առանձին մեխանիզմները՝ օրինակ, Գլխավոր շտաբում գործող կին զինծառայողների հարցերով զբաղվող ստորաբաժանում: Հղում է կատարվում նաև զորամասերում գործող կանանց խորհուրդներին:[242]

2021թ. հոկտեմբերի 22-ին երկու տեսանյութ է հրապարակվել ԵԽ-ի կողմից Vimeo կայքում, որոնք վերաբերում են կանանց զինվորական ծառայությանը, ինչպես նաև սոցիալական երաշխիքների և արտոնությունների համակարգին: Առաջին ֆիլմը ներկայացնում է կանանց համար զինվորական ծառայության հավասար հնարավորությունների, մասնագիտական պարտականությունները անձնական կյանքի հետ համատեղելու և խաղաղապահ առաքելություններում

[237] ԶԻՆՈՒԺ MEDIA, Զինուժ, 20.06.20, 20 հունիսի 2020թ., 33:51 րոպեից, https://www.youtube.com/watch?v=-fFa_-QFetU:
[238] ԶԻՆՈՒԺ MEDIA, Զինուժ 06.06.20, 16:35 րոպեից, https://www.youtube.com/watch?v=K5mQn7wFG0I&t=1403s:
[239] ԶԻՆՈՒԺ MEDIA, Զինուժ, 13.06.20, 13 հունիսի 2020թ., 25:43 րոպեից, https://www.youtube.com/watch?v=kJCC43LvNZE:
[240] ԶԻՆՈՒԺ MEDIA, Զինուժ 08.08.20, 8 օգոստոսի 2020թ., 25:18 րոպեից, https://www.youtube.com/watch?v=XzbVWgNV6MU&t=1648s:
[241] ՊՆ/510-ԳՔ/967-2021, 25 փետրվարի 2021թ.; ՊՆ, Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները (տեսահոլովակ), 5 փետրվարի 2021, https://mil.am/hy/news/8886:
[242] ՊՆ/510-ԳՔ/967-2021, 25 փետրվարի 2021թ.; ՊՆ, Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները (տեսահոլովակ), 5 փետրվարի 2021, https://mil.am/hy/news/8886:

կանանց ներգրավվածության խորագրերը:[243] Երկրորդ ֆիլմը նվիրված է զինծառայողների սոցիալական երաշխիքների և արտոնությունների համակարգի թեմային՝ ընդգծելով բնակարանային ապահովությունը և զինված ուժերում ծառայողներին տրամադրվող անվճար բժշկական օգնության ու սպասարկմանը:[244] Հատկանշական է, որ տեսաձայնագրությունները տեղադրված են ոչ թե YouTube.com, այլ Vimeo կայքում, ինչն ավելի դժվար կարող է դարձնել տեսաձայնագրություններին առնչվելը այն անձանց համար, ովքեր տեղյակ չեն տվյալ նյութերի մասին:

2021թ. նոյեմբերի 24-ին մեկ տեսանյութ՝ «Կանանց ներգրավվածությունը ՁՈՒ-երում» անվանմամբ, տեղադրվել է YouTube-ի «Ձինուժ Media» ալիքում և ՀՀ ՊՀ կայքում: Տվյալ տեսանյութը գտնվում է «Unlisted» (չցուցակված) կարգավիճակում: Այդ պատճառով YouTube-ի էջում տեսանյութը անհնար է գտնել, քանի որ այն դիտելու համար պետք է ունենալ տեսանյութի հղումը:[245]

2021թ. դեկտեմբերի 14-ին կրկին Vimeo կայքում ԵԽ կողմից հրապարակվել է տեսաձայնագրություն, որը վերաբերում է Հայաստանում զինծառայողների սոցիալական երաշխիքների և արտոնությունների համակարգին:[246] Չնայած սոցիալական երաշխիքներին վերաբերող տեսանյութերը ուղղակիորեն չեն վերաբերում կանանց, սակայն դրանցում նկարահանված են կին զինծառայողներ, ինչպես նաև տեսանյութի պատմողներից մեկը կին է, ինչը հստակ անկնարկում է կանանց ներգրավումը ՁՈՒ-ում խրախուսելու միտումները:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ «Ձինուժ» հաղորդաշարի որոշ տեսանյութեր, որոնք պատմել են կին զինծառայողների մասին, խտրական են եղել՝ կանանց ներկայացնելով երկրորդական և աջակից դերում նույնիսկ այն դեպքում, երբ տեսանյութը պատմել է ռազմական գործողություններին մասնակցած կին զինծառայողի մասին:[247]

ՄԻՊ ռազմավարության հարթակի հաշվետվությունների բաժնում 2022թ օգոստոսին հրապարակվել է նյութ, համաձայն որի՝ «Զինված ուժերում կանանց իրավունքների վերաբերյալ հանրության իրազեկումն ապահովելու նպատակով ԵԽ համագործակցության շրջանակում, ՄԻՊ-ի գործընկերների հետ համատեղ մշակվել և ՁԼՄ-երով տարածվել է ևս մեկ տեսաձայնագրության՝ կին զինծառայողների ծառայության վերաբերյալ»:[248] Տվյալ տեսանյութի բովանդակության վերաբերյալ որևէ տվյալ, ինչպես նաև բուն տեսանյութը մշտադիտարկման արդյունքում չգտնվեց ո՛չ ՀՀ պաշտպանության

[243] CoE, Military service of women, 22 հոկտեմբերի 2021թ., https://vimeo.com/637863329:
[244] CoE, The system of social guarantees and benefits for military servicepersons (Part I), 22 հոկտեմբերի 2021թ., https://vimeo.com/637865467:
[245] ՁԻՆՈՒԺ MEDIA, Կանանց ներգրավվածությունը ՁՈՒ-երում, 24 նոյեմբերի 2021թ., https://www.youtube.com/watch?v=a1xvSHILUMI&ab_channel=%D4%B6%D4%BB%D5%86%D5%88%D5%92%D4%BAMEDIA:
[246] CoE, Sixth animation film HRWAF.mp4, 14 դեկտեմբերի 2021թ., https://vimeo.com/656465951:
[247] Տես օրինակ՝ ՁԻՆՈՒԺ MEDIA, Ձինուժ 29.01.22, 29 հունվարի 2022թ, https://www.youtube.com/watch?v=1a4xOBgt9zc:
[248] E-rights, Զինված ուժերում կանանց իրավունքների վերաբերյալ հանրության իրազեկումն ապահովելու նպատակով ԵԽ համագործակցության շրջանակում, ՄԻՊ-ի գործընկերների հետ համատեղ մշակվել և ՁԼՄ-երով տարածվել է ևս մեկ տեսաձայնագրության՝ կին զինծառայողների ծառայության վերաբերյալ, 4 օգոստոսի 2022թ., http://e-rights.am/?app=AppEvent&page=default&event_id=167&event_tab=report:

նախարարության կայքում, ո՛չ ՄԻՊ-ի պաշտոնական կայքում, ո՛չ «ՁԻՆՈՒԺ MEDIA» YouTube-ի էջում:

Գործողություն 48.1

Ապահովել արցախյան պատերազմի հետևանքով տեղահանված անձանց, հաշմանդամություն ստացած անձանց, զոհված, անհետ կորած և գերության մեջ գտնվող անձանց և նրանց ընտանիքների իրավունքների արդյունավետ պաշտպանության ծրագրերի իրականացում

2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի զանձազերծած լայնամասշտաբ պատերազմի հետևանքով ի հայտ եկած խնդիրներին արձագանքելու նպատակով ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ-ում, որպես փոփոխություն, 2021թ. փետրվարին ավելացվել է 48.1 կետը «Իրավահավասարություն, խտրականության արգելք» բաժնում, որով նախատեսվել է 2021-2022թթ. ընթացքում պարբերաբար ապահովել արցախյան պատերազմի հետևանքով տեղահանված անձանց, հաշմանդամություն ստացած անձանց, զոհված, անհետ կորած և գերության մեջ գտնվող անձանց և նրանց ընտանիքների իրավունքների արդյունավետ պաշտպանության ծրագրերի իրականացում:[249]

Որպես անմիջական արդյունք՝ ակնկալվել է, որ կհավաքագրվեն ու կամբողջացվեն նշված անձանց հասանելի սոցիալական, հոգեբանական, իրավական աջակցության ծառայությունների կարիքները, ինչպես նաև կմշակվեն և կիրականացվեն թիրախային աջակցության ծրագրեր: Որպես տվյալ գործողության ազդեցություն՝ նախատեսվել է, որ ապահովվի անձանց, հաշմանդամություն ստացած անձանց, զոհված, անհետ կորած և գերության մեջ գտնվող անձանց և նրանց ընտանիքների իրավունքների արդյունավետ պաշտպանությունը:

Գործողության կատարման պատասխանատու մարմիններ են սահմանվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, Արդարադատության նախարարությունը, Արտաքին գործերի նախարարությունը, Պաշտպանության նախարարություն, Առողջապահության նախարարությունը: Համակատարող մարմին չի սահմանվել: Գործողության կատարման համար պետական բյուջեից ֆինանսավորում չի պահանջվել:

Մշտադիտարկման արդյունքները

ՄԻՊ ռազմավարության և ԳԾ 2022թ. տարեկան հաշվետվության, Պաշտպանության, աշխատանքի և սոցիալական հարցերի, առողջապահության նախարարությունների տրամադրած տեղեկության համաձայն՝ մի շարք միջոցառումներ են իրականացվել Գործողություն 48.1-ի կատարման նպատակով:

[249] ՄԻՊ 2019թ. ռազմավարության 2020-2022թթ. ԳԾ փոփոխություններ և լրացումներ, Նախագիծ, էջ 5, https://www.e-draft.am/projects/3178/about:

Զինծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին աջակցություն

Կազմվել և Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ են ներկայացվել թվով 414 հատուցման գործեր (հակառակորդի շփման գծում **մարտական հերթապահության ժամանակ զոհված**՝ 28, **1-ին կամ 2-րդ խմբի զինհաշմանդամություն** ստացած՝ 4, նախկին զինծառայողների հատուցման գործեր), Ադրբեջանի կողմից **2020թ. սեպտեմբերի 27-ին** սանձազերծված ռազմական գործողությունների ժամանակ **զոհված** թվով 44, **անհետ կորած և դատարանի վճռով անհայտ բացակայող ճանաչված** թվով 114 և **1-ին կամ 2-րդ խմբի զինհաշմանդամություն ստացած** թվով 12, ինչպես նաև **2022թ. Սեպտեմբերի 13-ին** Ադրբեջանի նախահարձակ ռազմական գործողության հետևանքով **զոհված** թվով 211 և **2-րդ խմբի զինհաշմանդամություն** ստացած թվով 1 նախկին զինծառայողների հատուցման գործեր:[250]

Հաշվառվել է **զինծառայության ընթացքում ձեռք բերած հիվանդության կամ ստացված վնասվածքի (խեղման**) հետևանքով 1-ին խմբի թվով 1, 2-րդ խմբի թվով 16 և 3-րդ խմբի թվով 156 զինհաշմանդամ, որոնց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջոցով վճարվել են դրամական աջակցություններ՝ շուրջ 53.700.000 դրամի չափով:[251]

Ապահովվել է **զինվորական ծառայության ընթացքում կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած**) զինծառայողների, **զինծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո զինծառայության ընթացքում ձեռք բերած հիվանդության**, **վնասվածքի կամ խեղման պատճառով հետագայում մահացած** թվով 284 նախկին զինծառայողների ընտանիքներին, օրենքով սահմանված աջակցությունների, ինչպես նաև հուղարկավորության, գերեզմանի բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման ծախսերի փոխհատուցման գումարների տրադրումը՝ շուրջ 475.100.000 դրամի չափով:[252]

---

[250] ՊՆ/510-ԳՔ/1201-2023, 6 մարտի 2023թ.; ՀՀ ԱՆ, ՄԻՊ 2022թ. տարեկան հաշվետվություն, էջ 22-25, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=8816640f5b3a56b9b4345&size_mode=1; ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին ՀՀ օրենք, 15 դեկտեմբերի 2016թ.:

[251] ՀՀ ԱՆ, ՄԻՊ 2022թ. տարեկան հաշվետվություն, էջ 22-25, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=8816640f5b3a56b9b4345&size_mode=1; Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ԱՀՆ-23/02, 10 փետրվարի 2023թ.; Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին ՀՀ օրենք, 15 նոյեմբերի 2017թ., հոդված 68; ՀՀ կառավարություն, Ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ կամ զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքին դրամական աջակցություն տալու կարգը և դրամական աջակցության չափերը, զինվորական ծառայության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերը ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցելու կարգը և չափերը, հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողներին, ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին տրվող միանվագ դրամական օգնության չափը, վճարման կարգը և պայմանները սահմանելու, ինչպես նաև ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 18-ի N 341 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, N 916-Ն որոշում, հավելված 1; ՀՀ կառավարություն, **2020թ. սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետեվանքով վիրավորում (վնասվածք) ստացած կամ հոգեկան առողջության խնդիր ձեռք բերած զինծառայողների սոցիալական աջակցության միջոցառումը հաստատելու մասին,** N 90–Լ որոշում, 27 հունվարի 2021թ.:

[252] ՀՀ ԱՆ, ՄԻՊ 2022թ. տարեկան հաշվետվություն, էջ 22-25, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=8816640f5b3a56b9b4345&size_mode=1; Զինվորական

Ապահովվել է թվով 179 **զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների** անդամներին և 545 **զինհաշմանդամ դարձած նախկին զինծառայողներին** միանվագ դրամական օգնությունների տրամադրումը՝ 72.400.000 մլն դրամի չափով: [253]

Նշանակվել է 585 հաշմանդամության **զինվորական կենսաթոշակներ** և զինհաշմանդամին տրվող **ամենամսյա պարգևավճարներ**:[254] Նշանակվել է 207 **կերակրողին կորցնելու** դեպքում **զինվորական կենսաթոշակներ** և կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակառուներին տրվող **ամենամսյա պարգևավճարներ**:[255]

2020թ. սեպտեմբերի 27-ի պատերազմին զոհված (մահացած) թվով 32 ընտանիքի տրամադրվել է անհատույց պետական ֆինանսական աջակցություն՝ **բնակարանի գնման վկայագրի** ձևով, և բոլորն էլ ձեռք են բերել բնակարաններ:[256]

Զոհված (մահացած) զինծառայողների 42 և հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցեող **նախկին զինծառայողների 13 ընտանիքներ** բնակարանային գնման վկայագրերի միջոցով ձեռք են բերել **բնակարաններ (բնակելիտներ) և բնակարանային պայմանները**:[257]

Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի միջոցով յուրաքանչյուր **անհե+տ կորած զինծառայողի** հաշվով վերջիններիս **ընտանիքների անդամներին ամենամսյա դրամական վճարի** ձևով տրամադրվում է 300.000 դրամի չափով ամսեկան վճար:[258]

ՀՀ առողջապահության նախարարությունը տեղեկացրել է, որ ՀՀ կամ Արցախում հայտարարված արտակարգ իրավիճակներում կամ ռազմական գործողությունների արդյունքում տուժած անձանց **բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում է պետության կողմից**

ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին ՀՀ օրենք, 15 նոյեմբերի 2017թ., հոդված 68, հոդված 69; ՀՀ կառավարության N 916-Ն որոշման հավելվածներ 1-2, 9 օգոստոսի 2018թ.:

[253] ՀՀ ԱՆ, ՄԻՊ 2022թ. տարեկան հաշվետվություն, էջ 22-25, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=8816640f5b3a56b9b4345&size_mode=1; Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին ՀՀ օրենք, 15 նոյեմբերի 2017թ., հոդված 63(10); ՀՀ կառավարության N 916-Ն որոշման հավելված 3, 9 օգոստոսի 2018թ.:

[254] Պետական կենսաթոշակների մասին ՀՀ օրենք, 22 դեկտեմբերի 2010թ., հոդված 20; ՀՀ կառավարություն, **Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների ամենամսյա պարգևավճարի չափերը, պարգևավճար նշանակելու և վճարելու կարգը, պարգևավճար նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանելու և ՀՀ կառավարության 2011թ. մայիսի 5-ի N 668-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին,** N 141-Ն որոշում, 4 փետրվարի 2021թ.:

[255] ՀՀ ԱՆ, ՄԻՊ 2022թ. տարեկան հաշվետվություն, էջ 22-25, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=8816640f5b3a56b9b4345&size_mode=1; Պետական կենսաթոշակների մասին ՀՀ օրենք, 22 դեկտեմբերի 2010թ., հոդված 22; ՀՀ կառավարության N 141-Ն որոշում, 4 փետրվարի 2021թ.:

[256] ՊՆ/510-ԳՔ/1201-2023, 6 մարտի 2023թ.; ՀՀ կառավարություն, **ՀՀ ՊՆ համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը եվ չափերը սահմանելու մասին** N 1419-Ն որոշում, 6 դեկտեմբերի 2018թ.**:**

[257] ՀՀ ԱՆ, ՄԻՊ 2022թ. տարեկան հաշվետվություն, էջ 22-25, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=8816640f5b3a56b9b4345&size_mode=1: ՀՀ կառավարություն, **ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին**, N 1419-Ն որոշում, 6 դեկտեմբերի 2018թ.:

[258] ՊՆ/510-ԳՔ/1201-2023, 6 մարտի 2023թ.; ՀՀ կառավարություն, Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած զինծառայողների ընտանիքների աջակցության միջոցառումը հաստատելու մասին, N 2001-Լ որոշում, 10 դեկտեմբերի 2020թ.:

երաշխավորված անվճար պայմաններով:[259] Այդպիսի անվճար և արտոնյալ պայմաններով վերականգնողական բժշկական օգնություն և սպասարկում տրամադրվում է զինծառայողներին, հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողներին, զինծառայության ընթացքում ստացած խեղման, վնասվածքի, հիվանդության պատճառով զորացրված անձանց, ովքեր բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում հաշմանդամ չեն ճանաչվել, զինծառայության ընթացքում ստացած խեղման, վնասվածքի, հիվանդության պատճառով զորացրված անձանց՝ բուժման սկզբից երեք ամսվա ընթացքում, մինչև բժշկասոցիալական փորձաքննության ուղեգրումը:[260]

Քաղաքացիական անձանց աջակցություն

Արցախում փաստացի հաշվառում ունեցող կամ փաստացի բնակված քաղաքացիների որոշ կատեգորիաներին տրամադրվել է դրամական աջակցություն: Որպես շահառուներ ներառվել են Արցախից տեղահանված Արցախի չափահաս և անչափահաս քաղաքացիները, Արցախում հաշվառված նախադպրոցական տարիքի երեխաները, Արցախի վերահսկողությունից դուրս մնացած համայնքներում հաշվառված չափահաս և անչափահաս քաղաքացիները, պատերազմական ավերածությունների հետևանքով կամ այլ պատճառներով բնակության համար ոչ պիտանի դարձած բնակելի անշարժ գույք ունեցող արցախցիները, ատերազմի հետևանքով Արցախից տեղահանված կամ Արցախում բնակելի անշարժ գույքը կորցրած քաղաքացիները՝ այդ թվում, երեխաները, 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք, ՀՀ Սյունիքի մարզի Ծուռնուխ և Որոտան բնակավայրերում հաշվառված կամ այդ հասցեում փաստացի բնակված, ՀՀ բնակության այլ վայրի հասցեում հաշվառված բնակելի անշարժ գույքը կորցրած քաղաքացիները:[261]

Դրամական աջակցություն է ցուցաբերվել նաև 2020թ. սեպտեմբերի 27-ից ռազմական գործողությունների հետևանքով **Արցախի վերահսկողությունից դուրս մնացած համայնքներում հաշվառված** չափահաս քաղաքացիներին ժամանակավոր հյուրընկալվելու համար վեց ամիս՝ 2020թ. դեկտեմբերից 2021թ. օգոստոսը:[262] Նույն ժամանակահատվածում դրամական աջակցություն է տրվել նաև ռազմական գործողությունների հետևանքով Արցախի վերահսկողության ներքո գտնվող համայնքների հաշվառման հասցեում գտնվող **բնակելի անշարժ գույքը**

[259] ՀՀ առողջապահության նախարարություն, ՎՀ/02.1/3538-23, 16 փետրվարի 2023թ.; ՀՀ կառավարություն, Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին N 318-Ն որոշում, 4 մարտի 2004թ.:

[260] ՀՀ առողջապահության նախարարություն, ՎՀ/02.1/3538-23, 16 փետրվարի 2023թ..; ՀՀ կառավարության որոշումը սոցիալական փաթեթի շահառու հանդիսացող զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց, նրանց ընտանիքների անդամների, ինչպես նաև փրկարար ծառայության ծառայողների եվ նրանց ընտանիքների անդամների, ժամկետային պարտադիր զինվորական ծառայության շարքային և կրտսեր ենթասպայական կազմի զինծառայողների համար պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության ու սպասարկման կազմակերպման և ֆինանսավորման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի օգոստոսի 28-ի n 517 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, 27 հուլիսի 2013թ.:

[261] ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ԱՍՀն-23/02, 10 փետրվարի 2023թ.:

[262] Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ԱՍՀն-23/02, 10 փետրվարի 2023թ.; ՀՀ կառավարություն, 2020թ. սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության ուղղությամբ սկսված ռազմական գործողությունների հետևանքով Արցախի Հանրապետության վերահսկողությունից դուրս մնացած համայնքներում հաշվառված չափահաս քաղաքացիներին ժամանակավոր հյուրընկալողների ծախսերի փոխհատուցման վեցամսյա սոցիալական աջակցության միջոցառումը հաստատելու մասին N 1977-L որոշում, 3 դեկտեմբերի 2020թ.:

ավերածությունների հետևանքով կամ այլ պատճառներով կորցրած չափահաս քաղաքացիներին ժամանակավոր հյուրընկալվողներին:[263] 2021թ. մարտ-օգոստոս ամիսներին դրամական աջակցություն է տրամադրվել նաև չափահաս քաղաքացիներին ժամանակավոր հյուրընկալող կացության կազմակերպման ծառայություններ իրականացնող **իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի ծախսերի** փոխհատուցման համար:[264]

Դրամական աջակցություն է ցուցաբերվել 2020թ. սեպտեմբերի 27-ի ռազմական գործողությունների հետևանքով **քաղաքացիական անձանց շրջանում զոհերի, անհետ կորածների ընտանիքներին և հաշմանդամություն ձեռք բերած անձանց**: Այս միջոցառումից օգտվելու համար դիմում պետք է ներկայացվեր էլեկտրոնային եղանակով՝ մինչև 2022թ. ապրիլի 15-ը (բացառությամբ անհետ կորածի ընտանիքի, որի դեպքում դիմումը կարող է ներկայացվել մինչև 2023թ. մարտի 10-ը):[265]

Արցախից տեղահանված և փաստացի ՀՀ-ում բնակվող քաղաքացիների համար 2021-2022 թթ. իրականացվել են **Աշխատանքային փորձի ձեռքբերման** համար աջակցության տրամադրման և Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով **ժամանակավոր զբաղվածության** ապահովման միջոցառումներ:[266]

ՀՀ պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ընթացքում կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով **զոհված զինծառայողների ծնողներին տրամադրվում է փոխնակ մոր ծառայությունից օգտվելու և դոնորական ձվաբջջի ձեռքբերման համար մասնակի փոխհատուցում**:[267]

Իրականացվել է նաև Արցախի բնակչության կոմունալ ծախսերի ֆինանսավորում, արցախցիների կենսաթոշակների, նպաստների, պետական

[263] Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ԱՍՀՆ-23/02, 10 փետրվարի 2023թ.; ՀՀ կառավարություն, 2020թ. սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության ուղղությամբ սկսված ռազմական գործողությունների հետևանքով Արցախի Հանրապետության վերահսկողության ներքո գտնվող համայնքների հաշվառման հասցեում գտնվող բնակելի անշարժ գույքը ավերածությունների հետևանքով կամ այլ պատճառներով կորցրած չափահաս քաղաքացիներին ժամանակավոր հյուրընկալողների ծախսերի փոխհատուցման սոցիալական աջակցության միջոցառումը հաստատելու մասին, N 2069–L որոշում, 17 դեկտեմբերի 2020թ.:

[264] Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ԱՍՀՆ-23/02, 10 փետրվարի 2023թ.; ՀՀ կառավարություն, 2020թ. սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության ուղղությամբ սկսված ռազմական գործողությունների հետևանքով չափահաս քաղաքացիներին ժամանակավոր հյուրընկալող կացության կազմակերպման ծառայություններ իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի ծախսերի փոխհատուցման եռամսյա սոցիալական աջակցության միջոցառումը և տրամադրման կարգը հաստատելու մասին, N 310–L որոշում, 4 մարտի 2021թ.:

[265] Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ԱՍՀՆ-23/02, 10 փետրվարի 2023թ.; 2020թ. սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության ուղղությամբ սկսված պատերազմական գործողությունների հետևանքով քաղաքացիական անձանց շրջանում զոհերի, ինչպես նաև անհայտ կորածների ընտանիքներին և հաշմանդամություն ձեռք բերած անձանց սոցիալական աջակցության միջոցառումը հաստատելու մասին N 1924-L որոշում, 3 դեկտեմբերի 2020թ.:

[266] Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ԱՍՀՆ-23/02, 10 փետրվարի 2023թ.:

[267] Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ԱՍՀՆ-23/02, 10 փետրվարի 2023թ.; ՀՀ առողջապահության նախարարություն, ԿՀ/02.1/3538-23, 16 փետրվարի 2023թ.; ՀՀ կառավարություն, Անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման կարգն ու շահառուներին ներկայացվող պահանջները սահմանելու մասին N 568-Ն որոշում, 27 մայիսի 2015թ.:

հատվածի աշխատողների աշխատավարձների, առողջապահական ծախսերի ֆինանսավորում:[268]

Միասնական սոցիալական ծառայության կողմից իրականացվել է 2020թ. սեպտեմբերի 27-ի ռազմական գործողությունների հետևանքով ՀՀ տեղահանված և պետության կողմից տրամադրված **ժամանակավոր կացարաններում բնակվող մոտ 310 ընտանիքների սոցիալական կարիքների գնահատում**: Ծառայության կողմից պարբերաբար իրականացվել են իրազեկման հանդիպումներ, ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքների տրամադրվել է խորհրդատվություն պետական և ոչ պետական կառույցների կողմից իրականացվող աջակցության ծրագրերի վերաբերյալ:[269]

Մշտադիտարկման արդյունքները. եզրակացություն

Այսպիսով, 2020թ. սեպտեմբերի 27-ի և 2022թ. սեպտեմբերի 13-ի ռազմական գործողությունները ավելի են խորացրել ՁՈՒ-ում մարդու իրավունքներին առնչվող խնդիրները և ստեղծել նորերը: Չնայած գործողություն 48.1-ով նախատեսվել է հավաքագրել ու ամբողջացնել պատերազմի հետևանքով տուժած անձանց հասանելի սոցիալական, հոգեբանական, իրավական աջակցության ծառայությունների կարիքները, սակայն նման վերլուծություն ԽԵ ՀԿ-ին հասանելի չէ 2022թ. դեկտեմբեր դրությամբ:

Չնայած ակնկալվել է, որ կմշակվեն և կիրականացվեն թիրախային աջակցության ծրագրեր, սակայն այդ ծրագրերը ներառել են հիմնականում դրամական միանվագ կամ ժամանակավոր աջակցություն: Երկարաժամկետ և համապարփակ միջոցառումներ ու համակարգեր չեն մշակվել:

Գերությունից վերադարձած անձանց հետ վարվելու համապարփակ ծրագրեր չեն մշակվել: Ավելին, լրատվամիջոցների տեղեկությունների համաձայն՝ գերությունից վերադարձած և գերության ընթացքում խոշտանգումների ենթարկված անձանց ՀՀ ռազմական ոստիկանությունում ենթարկել են հոգեբանական բռնությունների, իսկ Պաշտպանության նախարարությունում նրանց բողոքները պատշաճ չեն ուսումնասիրել: Ռազմական ոստիկանությունում Ադրբեջանից Հայաստան վրադարձած հայ զինվորներին մեղադրել են իրենց չպայթեցնելու և գերի ընկնելու համար, քանի որ, ըստ գերությունից վերադարձված մի զինծառայողի, «գերությունը ներկայացվում է աններելի մեղք՝ պետության և ազգի հանդեպ... ռազմական ոստիկանությունում ասում էին՝ չունեիք նռնակ, որ ձեզ պայթեցնեիք, իմ պատասխանն էր՝ չէ, իհարկե, չունեինք, չէին տրամադրել մեզ այն մարդիկ, որ պետք է տրամադրեին»:[270]

Բացի այդ, ԽԵ անցացրած հարցումներից պարզել ենք, որ պատերազմին մասնակցած զինծառայողների շրջանում եղել են դեպքեր (20%), երբ զինվորական գրքույկում չի գրանցվել մարտական գործողություններին

[268] Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ԱՍՀՆ-23/02, 10 փետրվարի 2023թ.:
[269] Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ԱՍՀՆ-23/02, 10 փետրվարի 2023թ.; ծրագրերի մասին տես նաև՝ ՀՀ ԱՆ, ՄԻՊ ԳԾ 2021թ. տարեկան հաշվետվություն, էջ 85-92, http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=43162693d2cba48e4896&size_mode=1:
[270] ForRights, Նարեկ Կիրակոսյան, «Ռազմական ոստիկանությունում ասացին՝ նռնակ չունեիք, ձեզ պայթացնեիք, գերի չընկնեիք.դիրքերը նվիրում են, զինվորներին էլ հետը».գերությունից վերադարձած զինվոր, 15 նոյեմբերի 2022թ., https://forrights.am/2022/11/15/ռազմական-ոստիկանությունում-ասացին՝-2/:

մասնակցելու փաստը, ինչպես նաև զինծառայողն ունեցել է պետպատվերով բուժում ստանալու կամ թոշակավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձեռքբերման խնդիրներ:[271]

Որպես գործողություն 48.1-ի ազդեցություն նախատեսվել է, որ ապահովվի անձանց, հաշմանդամություն ստացած անձանց, զոհված, անհետ կորած և գերության մեջ գտնվող անձանց և նրանց ընտանիքների իրավունքների արդյունավետ պաշտպանությունը: Սակայն չեն ցուցադրվել չափանիշներ, թե ինչպես պետք է գնահատվի արդյունավետությունը:

Իրավահավասարության, խտրականության արգելիքի ապահովմանն ուղղված առաջարկներ

- Կատարել ուսումնասիրություն զինված ուժերում տարբեր խմբերի նկատմամբ սոցիալական, ազգային պատկանելության, սեռական կողմնորոշման և այլ հիմքերով խտրականության դեպքերի և պատճառների վերաբերյալ: Ձեռնարկել քայլեր օրենսդրական և գործնական մակարդակներում այդ խմբերի նկատմամբ խտրականությունը կանխելու, իսկ խտրականության դեպքում՝ պատշաճ արձագանքման մեխանիզմներ կիրառելու ուղղությամբ:

- Տրամադրել ՀՀ ԶՈՒ-ում կին և տղամարդ զինծառայողների թվի տոկոսային հարաբերակցությունը (կամ, հնարավորության դեպքում՝ կին զինծառայողների քանակի վերաբերյալ տվյալներ), ինչպես նաև կանանց զբաղեցրած պաշտոնների ու կրած զինվորական կոչումների տոկոսային հարաբերակցությունը:

- Կատարել ուսումնասիրություն ոչ միայն կանանց կողմից զինվորական ծառայության անցնելու, այլ նաև ծառայության չանցնելու դրդապատճառների և խոչընդոտների վերաբերյալ:

- Ձեռնարկել քայլեր կանանց նկատմամբ կարծրատիպերի և դրա հետևանքով մասնագիտական կողմնորոշմանն ու առաջխաղացմանը խոչընդոտող երևույթների վերացման ուղղությամբ:

- Պարզաբանել, թե ստեղծված մի քանի պաշտոններից կամ մարմիններից որ մեկն է ապահովելու կանանց ներգրավվածության բարձրացումը ԶՈՒ-ում, ապահովել նման մարմնի կամ պաշտոնի գործառույթների արդյունավետությունը ԶՈՒ-ում կանանց իրավունքների ապահովման գործում:

- Ապահովել ԶՈՒ-ում կանանց իրավունքների մասին տեսանյութերի հասանելիությունը, ինչպես նաև տեսանյութերում կին զինծառայողներին ներկայացնել ոչ թե երկրորդական կամ տղամարդուն կցված դերում, այլ որպես հայրենիքի պաշտպան առանձին զինծառայողներ:

[271] «Խաղաղության երկխոսություն» ՀԿ, ՀՀ Զինված Ուժերում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների վերհանման նպատակով իրականացված հարցազրույցների վերլուծություն, Վանաձոր, հոկտեմբեր 2022թ., էջ 50-51, https://peacedialogue.am/2022/10/07/hr_survey_arm/:

- Համապարփակ գնահատել պատերազմների հետևանքով տուժած անձանց կարիքները, մշակել դրանց բավարարման համար շարունակական ծրագրեր՝ չսահմանափակվելով միայն դրամական աջակցությամբ:

- Ուսումնասիրել գերությունից վերադարձած բոլոր անձանց իրավիճակը՝ այդ թվում, հոգեկան ու ֆիզիկական առողջությունը, սոցիալ-տնտեսական դրությունը, կարիքները: Մշակել և իրականացնել այդ կարիքները բավարարելու շարունակական ծրագրեր, ինչպես նաև ներդնել համակարգ, որը կապահովի ապագայում նման դեպքերին արդյունավետ արձագանքումն ու իրավունքների պաշտպանությունը:

- Իրականացնել գործողություններ զինված հակամարտության ժամանակ ծառայության մեջ գտնվող անձանց փաստաթղթավորման և պատշաճ անվճար բուժօգնության ապահովման ուղղությամբ:

- Մշակել չափանիշներ պատերազմից տուժած անձանց և նրանց ընտանիքների պաշտպանության ծրագրերի արդյունավետությունը գնահատելու համար: